

# ՀՈԳԵԿՈՐ ԳՐԱԴԱՐԱՆ



ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ  
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ - 2001

ՀՐԱՄԱՆԱԻ

## Ն. Ս. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ Բ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԽՈՍՐՈՎ ԱՆՁԵՎԱՑԻ

ՍՈՒՐԲ  
ՊԱՏԱՐԱԳԻ  
ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

*Գրաբարից թարգմանությունը՝*

Գևորգ արք. Սարոյանի և  
Մկրտիչ արք. Պռոշյանի



## ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Նույն և միակ Աստծո անհուն սիրո գործն էր, որ Հին Իսրայելի Ջատկական ընթրիքին, փոխարեն Պասեքի գառան և ի փրկություն «նոր եգիպտացիների» անդրանիկների զոհաբերության, Քրիստոսն՝ իբրև անդրանիկ Որդին երկնավոր Հոր, Իր զոհաբերության խորհրդի հաստատմամբ խավարի իշխանությունից մեկ անգամ և ընդմիջտ գնեց Նոր Իսրայելը՝ առաջնորդելով նրան դեպի Իր անանց Սիրո թագավորությունը... «Սիրեց Քրիստոսը յուրայիններին, որ այս աշխարհում էին, իսպառ սիրեց նրանց» (հմմտ. Հովհ. ԺԳ(13) 1):

«Սիրեց» և այդ սիրո ուժով հարություն տվեց մարդուն. «իսպառ սիրեց» և Իր արյան հեղմամբ սիրո Նոր, մշտնջենավոր և կենարար հաղորդության Ուխտ կնքեց Իր Հոր և Իր սիրելիների միջև, որպեսզի նրանք «կյանք ունենան եւ առավել եւս ունենան» (Հովհ. Ժ 10):

Քրիստոսով հաստատված Պատարագի այս խորհուրդը Նրան հավատացողների համար դարձավ և է խորհրդապատկան տոնակատարություն, որտեղ Մարդու Որդին «մահուամբ զմահ կոխեաց»՝ Աստծո արքայությունը բերելով երկիր, ապա «յարութեամբն իւրով» մշտամնա բնակություն հաստատեց մարդկանց մեջ, հետո երկրային Եկեղեցու միջոցով բացեց Երկնային թագավորության մուտքի դարպասները և «մեզ զկեանս պարգեւեաց»:

Արդ, ամեն անգամ, երբ «Անարյուն Պատարագ» է մատուցվում, տեղի է ունենում հոգևոր միությունն Աստծո և Նրա ժողովրդի, ամեն անգամ Պատարագի խորհրդով Աստված դարձյալ ներկա է մեր մեջ՝ «ի շնորհով և ճշմարտությամբ» (Հովհ. Ա 14): Մեզանից յուրաքանչյուրն ի զորու է հաղորդվելու Աստծո հետ, եթե ազատորեն և կատարյալ հավատով ընդունել է Քրիստոսին իբրև «Ճանապարհ, Ճշմարտություն և Կյանք» (Հովհ. ԺԴ(14) 6):

Կյանք և կենդանություն պարզևող «Քրիստոսն է Գլուխը Եկեղեցու» (հմմտ. Եփես. Ա 22-23), Ով Իր կենարար մարմնով՝ հաց

ու գինով, բազմած է մեր տաճարների լույս խորաններում: Այս Եկեղեցին է անսպառ և ամենառատ հոգևոր գանձարանն Աստծո բարիքների: Նրա մայրական ծոցից են ծնվում «առաքյալներն ու մարգարեները, վարդապետներ ու հովիվներ» (*հմմտ. Եփես. Գ 11-12*), որոնցից յուրաքանչյուրը, իր կոչման շնորհների համաձայն, «*զարդարեալ գեղեցկացուցին զազգս եւ զեկեղեցիս մեր, ուղղաշաւիղ դաւանութեամբք եւ վայելուչ արարողութեամբք*» (Սիմեոն Երևանցի)՝ ի շինություն Քրիստոսի մարմնի, որ է Եկեղեցին:

Այս հոգեկիրների շարքում հատկապես առանձնանում է Անձևացյաց Խոսրով եպիսկոպոսը թե՛ իր կյանքի սրտաբեկ ողբերգությամբ և թե՛ իր աստվածաթռիչ մտքի թափանցողությամբ: Անձևացին մտքի ու հոգու հստակ տեսությամբ հավատաց Հոր Միածնի՝ հանուն մարդկության զոհաբերությանը, «հավատաց, ուստի եւ խոսեց» (*հմմտ. Սաղմ. ՃԺԵ(115) 1*)...

vV

## ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈՒՍԱՐԵՆ

Աստվածորդու Վերջին ընթրիքը<sup>1</sup> դարձավ Նրա Եկեղեցին խորհրդապաշտորեն Աստծուն միացնելու տոնակատարությունը: Տիրոջ համբարձումից հետո Նրա խոսքին հավատարիմ առաքյալների ու հավատացյալների միակ և ամենից կարևոր մտահոգությունը եղավ իրենց հանձնված աստվածային կտակի իրագործումը, որի անկյունաքարը Պատարագի խորհուրդն էր<sup>2</sup>: Պատարագի ամենավաղ ծիսակատարությունները (որոնք հիմնականում կազմված էին Վերջին ընթրիքի արարողությունից և քրիստոնեացված սինագոգային պաշտամունքից) բանավոր էին<sup>3</sup>: Սակայն դարերի ընթացքում Ընդհանրական Եկեղեցում Պատարագի բանավոր ծեսը, ապրելով իր բնական զարգացումը, կանոնական ձևի մեջ մտավ ու գրավոր տեսք ստացավ: Եվ թեև Պատարագ մատուցողները դարերի ընթացքում փոխվեցին, սակայն խորհրդի էությունը և նրա աստվածաշնչյան ճշմարտությունը մնացին անփոփոխ:

Մեր Եկեղեցու պատմության առաջին երեք դարերում Հայ Եկեղեցում կիրառված Պատարագի մասին թեև հայկական աղբյուրները լռում են, սակայն չպետք է կարծել, որ հայերն այդ ընթացքում անհաղորդ էին քրիստոնեությանը և նրա ծիսաարարողական կյանքին, քանի որ պատմական շատ տեղեկություններ և նրանցում պահպանված մանրամասներ ցույց են տալիս, որ Ա դարից սկսած մինչև 301 թվականը քրիստոնեությունը խոր արմատներ էր գցել Հայաստանում, որտեղ ձևավորվել էին համայնքներ և հիմնվել եպիսկոպոսական աթոռներ<sup>4</sup>: Ուստի շատ հավանական է, որ առաջին դարերում քրիստոնեական եկեղեցիներում կիրառություն ստացած նույնատիպ Պատարագներ կատարվեին նաև մեզանում, իսկ առավել ևս հետագա դարերում անխուսափելի էր դառնում

<sup>1</sup> Մատթ. ԻԶ(26) 17-30, Մարկ. ԺԴ(14) 12-26, Ղուկ. ԻԲ(22) 7-23, Հովհ. ԺԳ(13) 21-30, Ա Կորնթ. ԺԱ(11) 23:

<sup>2</sup> Գործք Բ 42, 46-47:

<sup>3</sup> Միքայել վրդ. Աջապահեան, Քրիստոնեական պատարագի նախադրեալները, «Գանձասար», Գիրք Ա, Երևան, 1992, էջ 86:

<sup>4</sup> Եզնիկ ծ. վրդ. Պետրոսյան, Հայ Եկեղեցու պատմություն, Ս. Էջմիածին, 1996, էջ 17-19: Տե՛ս նաև Ղևոնդ Ալիշան, Արշալոյս քրիստոնեության հայոց, Ս. Ղազար, 1901:

Ընդհանրական Եկեղեցու արարողություններից օգտվելու անհրաժեշտությունը, որովհետև, ինչպես հայտնի է, թե՛ Գրիգոր Լուսավորիչը և թե՛ նրա հաջորդները երկար դարեր սերտ հարաբերությունների մեջ էին Ընդհանրական Եկեղեցու հետ, ուստի իբրև Ընդհանրական Եկեղեցու լիիրավ անդամ (արդեն Հայոց պետության կողմից պաշտոնապես ընդունված)՝ Հայ Եկեղեցին ևս, բնականաբար, պետք է ունենար միանման կառույցներով ու ծիսաարարողությամբ շարժվող եկեղեցական պաշտամունք:

Գրեթե գյուտից հետո՝ հետագա դարերում, թարգմանիչները հայերենի վերածեցին աստվածպաշտական գրքեր<sup>5</sup>, այդ թըվում նաև պատարագամատույցներ<sup>6</sup>: Իսկ քանի որ ժամանակի սահքի հետ պատարագամատույցները հարստացան ու ճոխացան, հետևաբար կարիք առաջացավ պարզաբանելու Պատարագի խորհուրդն ու բովանդակությունը թե՛ եկեղեցականներին և թե՛ առհասարակ հավատացյալ ժողովրդին: Ահա այս պահանջը սկիզբ դրեց պատարագամատույցների մեկնությանը: Այս իմաստով հայ եկեղեցական ծիսական գրականության մեջ մեծ է ներդրումը Խոսրով Անձևացյաց եպիսկոպոսի, ում «Պատարագի մեկնությունը», իբրև այդպիսին, մեզ հայտնի առաջին երախայրիքն է հայ մատենագրության անդաստանում: Եվ էլ ավելի է մեծանում Անձևացյաց եպիսկոպոսի կատարած աշխատանքի արժեքը, եթե հաշվի առնենք, որ նրա պատարագամատույցի բնագիրը հայ մատենագրության պատմության մեջ ներկայանում է իբրև հայ պատարագամատույցի առաջին լիարժեք և ամբողջական բնագիրը: Որքանով մեծ է Մանդակունու ներդրումը հայոց պատարագամատույցի ճոխացման և հարստացման գործում, այնքանով էլ մեծ է Անձևացու դերը հայոց պատարագամատույցի մեկնության գործում: Վերջինիս վառ ապացույցներ կարող են ծառայել թե՛ Հովհաննես Արճիշեցու և թե՛ Մովսես Երզնկացու աշխատությունները, որոնց վրա խիստ զգացվում է Խոսրով եպիսկոպոսի ազդեցությունը<sup>7</sup>:

<sup>5</sup>Պապարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց եւ թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխատասիրութեամբ Գ. Տէր-Մկրտչեանի եւ Ստ. Մալխասեանի, Տիփղիս, 1904, էջ 17:

<sup>6</sup>Յովսէփ Գաթրճեան, Սրբազան Պատարագամատույցք Հայոց, Վիեննա, 1897, հտ. Ա, էջ 79 (այսուհետև՝ Յ. Գաթրճեան, Սրբազան Պատարագամատույցք Հայոց):

<sup>7</sup>Տե՛ս Եզնիկ արք. Պետրոսյան, Մովսես Երզնկացու դավանաբանական գործերը, Վարդապետական թեզ, Ս. Էջմիածին, 1974, էջ 9 (այսուհետև՝ Ե. արք. Պետրոսյան, Մովսես Երզնկացու դավանաբանական գործերը), նաեւ Մկրտիչ արկ. Այվազյան,



Խոսրով Անձևացին ապրել է մի ժամանակաշրջանում, երբ արաբական տիրապետությունից ազատագրված Հայաստանը ծեռք էր բերել պետական անկախություն՝ հասնելով տնտեսական և մշակութային կյանքի ծաղկման: Արտաքին զորեղ ուժերի հարձակումից ազատ երկրում տնտեսության զարգացման հետ միասին զարթոնք ապրեցին նաև եկեղեցական կյանքը և սրան խիստ աղերսված հայկական մշակույթը:

Կենտրոնական եկեղեցու, թագավորական և իշխանական տների հովանավորությամբ ու նյութական օժանդակությամբ Հայաստանի տարբեր վայրերում հիմնվեցին վանական նոր միաբանություններ, ինչպես և վերականգնվեցին նախկինում եղածները<sup>8</sup>: Այս վանական հաստատությունները դարձան ուսումնասիրության, գիտության, գրչության, արվեստի, գրականության ու երաժշտության ծաղկման կենտրոններ՝ լի «ծովամատոյց փիլիսոփայիւք երաժշտական երգոց, ճոխ էր եւ վարժարանն վարդապետական կրթութեամբն. նաեւ արհեստաւորք նկարչացն եւ գրողաց անհամեմատք»<sup>9</sup>: Պատմիչ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը, խոսելով Անանիա Մոկացի կաթողիկոսի (941-965թթ.) հայրապետության տարիների մասին, գրում է. «Յայսմ ժամանակի ծաղկեալ պայծառանայր կարգ կրօնաւորական հանդիսից յաշխարհիս Հայոց, եւ ի յոլով տեղիս շինեցան եղբայրանոցք, եւ ժողովեցան միաբանակեացք...»<sup>10</sup>: Կարելի է ասել, որ երկրի քաղաքական և տնտեսական բարվոք վիճակը մեծ հնարավորություն ընձեռեց, որ ամբողջ ժ դարի դինամիկական ձգտեր դեպի հոգևոր վերարթնություն: Այս ժամանակաշրջանը ծնեց մեծանուն վարդապետներ ու ճարտասան-փիլիսոփաներ, ազ-

---

Սուրբ Պատարագը և Հովհաննես Արճիշեցու Պատարագի մեկնությունը, Ավարտաձառ, Ս. էջմիածին, 2000թ.:

<sup>8</sup> Տե՛ս Մանուկ Աբեղյան, Երկեր, հտ. Գ, Երևան, 1968, էջ 568, նաև Հրայր Թամրազյան, Անանիա Նարեկացի. կյանքը և մատենագրությունը, Երևան, 1986, էջ 27:

<sup>9</sup> Ստեփանոս եպս. Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Մոսկվա 1861, էջ 120:

<sup>10</sup> Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 174: Տե՛ս նաև Կիրակոս Գանձակեցի, Հայոց Պատմություն, Երևան 1982, էջ 70, Վարդան Արևելցի, Պատմութիւն Տիեզերական, Մոսկվա 1861, էջ 120:

գանվեր գործիչներ ու հոգեկիր եկեղեցականներ, ովքեր անջնջելի հետք թողեցին Հայ Եկեղեցու և ժողովրդի գալիքի կերտման ճանապարհին:

Այս իմաստով հայ եկեղեցական մատենագրության երախտավորների աստղաբույլում իր արժանի տեղն է զբաղեցնում Անձևացյաց Խոսրով եպիսկոպոսը, ով իր անշրջանցելի գործունեությամբ ինքնատիպ հետք թողեց տվյալ ժամանակաշրջանի եկեղեցական-մտավոր և քաղաքական կյանքում: Անձևացու ինքնուրույն խառնվածքի և առավելաբար անկախ մտածելակերպի պատճառով Հայ Եկեղեցու պատմության մեջ որոշակիորեն ստվերվում են նրա անձն ու աստվածաբանական հայացքները (եթե հատկապես նկատի ունենանք ժամանակի կաթողիկոս Անանիա Սոկացու հետ Անձևացու ունեցած խնդիրները), որոնք, սակայն, երբեք չեն նսեմացնում նրա՝ որպես Հայ Եկեղեցու տիպար հոգևորականի կերպարը, քանզի ժամանակի կաթողիկոսի և Անձևացու միջև ծագած տարաձայնությունները ոչ թե արդյունք էին նրանց անձնական թուլությունների, այլ հետևանք Աստծու ու ազգի նկատմամբ ունեցած նախանձախնդրության և հոգևորի յուրօրինակ ընկալման:

Խոսրով Անձևացին ծնվել է Շատախ գավառի Շար գյուղում: Նրա նախնական կրթության, իսկ հետագայում ուսումը կատարելագործելու մասին լքում են նրա ժամանակաշրջանի մատենագրական աղբյուրները: Այս մասին որոշակիորեն հիշատակում է Եկեղեցու վերջին շրջանի պատմաբաններից Մելքիսեդեկ եպս. Սուրադյանը՝ ասելով. *«Սա իւր մանկական հասակէն հետամուտ կը լինի ուսման եւ գիտութեան»*<sup>11</sup>, իսկ Ս. Չամչյանը նշում է նաև նրա՝ հունական կրթություն ստանալու հանգամանքը՝ հետևյալ խոսքով բնութագրելով. *«Որ ի մանկութեան վարժեալ յուսումն իմաստից հելլենական դպրութեանցն»*<sup>12</sup>: Հուսիկ վրդ. Մովսիսյանը, անդրադառնալով Անձևացու ժամանակաշրջանում գործող նշանավոր վանական միաբանություններին, հիշում է Նարեկա վանքը և վերջինիս վանահոր՝ Անանիա վարդապետի, եղբոր աղջկա ամուսին Խոսրով Անձևացուն՝ ասելով, որ *«ի մանկութեան վարժուած էր հելլենական դպրութեամբ եւ Սուրբ Գրոց գիտութեամբ»*<sup>13</sup>: Վերոհիշյալ վկայություններ

<sup>11</sup> Մելքիսեդեկ վրդ. Սուրադյանց, Պատմութիւն Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ, Երուսաղէմ, 1872, էջ 401-406:

<sup>12</sup> Միքայէլ Չամչեան, Պատմութիւն Հայոց, հտ. Բ, Վենետիկ, 1785, էջ 389:

<sup>13</sup> Յուսիկ վրդ. Մովսիսեան, Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Պատմութիւն, Վաղարշապատ, 1881, էջ 162:

րից կարելի է ենթադրել, որ Անձևացին իր կրթությունը ստացել է վանական միջավայրում, ինչպես նաև չի բացառվում Հայաստանից դուրս հունական կրթություն ստանալու պարագան: Արդ, ինչպիսին էլ լինի Անձևացու կրթության ու դաստիարակության պատմությունը, մի բան պարզ է, որ Խոսրովն իր ժամանակաշրջանի գիտնական անձերից է եղել: Ցավոք, պարզաբանված չէ նաև նրա աշխարհական և կամ ամուսնացյալ քահանա լինելու հանգամանքը: Սակայն առավել հավանական է կարծել, որ Անձևացին սկզբնական շրջանում եղել է աշխարհական և ապա միայն դարձել կրոնավոր:

Խոսրով Անձևացին ունեցել է երեք զավակ՝ Սահակ, Հովհաննես և սբ. Գրիգոր Նարեկացի: Ըստ Նարեկացու մի վկայության<sup>14</sup> Խոսրով Անձևացու կինը վաղ է մահացել: Եվ հավանաբար Անձևացին կնոջ մահվանից հետո է կրոնավորում՝ ճգնավորական կյանք վարելով, ապա Անանիա Մոկացի կաթողիկոսի կողմից ձեռնադրվում Անձևացյաց վիճակի եպիսկոպոս՝ լծվելով առաջնորդության պաշտոնին: Թերևս նրա առաջնորդության առաջին տարիների ընթացքում որևէ արտասովոր դեպք չի խաթարում Անանիա Մոկացի կաթողիկոսի և Անձևացյաց եպիսկոպոսի հարաբերությունները, սակայն հետագայում այդ հարաբերությունները խաթարվում են, երբ Խոսրովը *«յանկարծակի իբրեւ*

*ի դիւական հոգւոյն շարժեալ, առանց իւիք հակառակութեան, սկսաւ բարբառն գելակի արծակել...»*<sup>15</sup>:

Լինելով *«այր համեստ եւ գիտնաւոր»* Խոսրով Անձևացին սեփական տեսակետների համար արժանանում է ժամանակի կաթողիկոսի բանադրանքին, «քանզի նա հանդգնել էր որոշ երևույթների շուրջ դատել յուրովի, իսկ դա նշանակում էր ոտնձգություն ընդունված ավանդույթների դեմ»<sup>16</sup>:

Օրբեյանի և Գանձակեցու հաղորդած տեղեկությունները, պարզ չլինելով, շփոթության տեղիք են տալիս, իսկ Անանիա Մոկացու թղթերն էլ իրենց ենթակայական մոտեցման պատճառով առավել բարդացնում են ճշմարտությունն ամբողջությամբ բացահայտելու հնարավորությունը: Արդ, եթե հաշվի չառնենք երկրորդական

<sup>14</sup> Գրիգոր Նարեկացի, Մատենան Ողբերգութեան, աշխատասիրությամբ Պ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի, Երևան, 1985, Գլուխ ԾԱ, տող 13-14, էջ 446:

<sup>15</sup> Նորին Տեառն Անանիայի հայոց կաթողիկոսի յաղագս որ ասեն, թէ մի պատիւ հայրապետին եւ եպիսկոպոսին եւ վասն մի լինելոյ կոչմանն, «Արարատ», Զ, 1897, էջ 276 (այսուհետև՝ Անանիա Մոկացի, Երկրորդ թուղթ):

<sup>16</sup> Պողոս Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, Ս. Էջմիածին, 1996, էջ 36 (այսուհետև՝ Պ. Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը):

մեղադրանքները<sup>17</sup>, Անձևացու դեմ ներկայացված գլխավոր մեղադրանքը ավանդականորեն հաստատված նվիրապետական կարգի աղճատումն էր՝ մասնավորապես եպիսկոպոսի նկատմամբ կաթողիկոսի ունեցած գերազահության մերժումը<sup>18</sup>: «Այստեղից էլ հետևում էր, որ եպիսկոպոսը պարտավոր չէ ենթարկվել կաթողիկոսին ու նրան տուրք վճարել իր ստացվածքից»<sup>19</sup>:

Ըստ Պ. Խաչատրյանի մեկնաբանության՝ պարզ է դառնում, որ Խոսրովի առաջին սխալներն ի հայտ գալուց հետո (954թ.) կաթողիկոսն անմիջապես հերքման ու հալածանքի չի դիմել, այլ մի որոշ ժամանակ համբերել է, մանավանդ որ զբաղված էր Աղվանքի և Սյունիքի խնդիրներով: Սակայն երբ հարցը հասնում է Եկեղեցու նվիրապետական կառույցին և հայրապետի իրավունքներին, Անանիան այլևս համբերությունից դուրս է գալիս և բանադրում Խոսրովին: Իր թղթերում Անանիա կաթողիկոսը Խոսրովին ներկայացնում է իբրև երախտամոռ անձնավորություն՝ հիշեցնելով, որ իր բարերարությունների դիմաց (այդ թվում՝ եպիսկոպոսական աստիճան շնորհելը և թեմի առաջնորդություն վստահելը) Խոսրովը վարձահատույց է եղել անհավատարմությամբ ու դավաճանությամբ, սակայն միևնույն ժամանակ մոռանալով, որ նույն Խոսրով եպիսկոպոսը գաղափարական մեծ օժանդակություն էր ցույց տվել իրեն Սյունյաց եպիսկոպոսության անջատողական ոտնձգությունները սանձահարելու գործում: Անանիա կաթողիկոսը Անձևացյաց եպիսկոպոսին համեմատում է Վալենտին հերետիկոսի և նրա հետևորդների հետ, նաև նկատում, որ Անձևացյաց եպիսկոպոսի հայացքները մասամբ գալիս են նրա ուսուցիչ Արամից<sup>20</sup>, բայց իր մոլորության մեջ Խոսրովը շատ

<sup>17</sup> Անանիա Մոկացի, Երկրորդ թուղթ, էջ 276:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 276:

<sup>19</sup> Պ. Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, էջ 39:

<sup>20</sup> «Արամը մինչև անցյալ դարի 90-ական թվականները հայոց հին դպրության համար անհայտ անուն էր: Ի վերջո, շնորհիվ բազմահմուտ բանասեր Գ. Տեր-Սկրտչյանի ջանքերի, ուշ շրջանի մի գրչագրում ի հայտ եկավ նրանից պահպանված մի գրվածք՝ «Թուղթ Արամայ, գոր գրեաց պատասխանի Ատունոյ Անձևացեաց իշխանի ի սակս պէսպէս հարցմանցն»: Միաբանը Ատունին հիմնավոր կրկաններով նույնացրեց 9-րդ դարի վերջի և 10-րդ դարի առաջին կեսի Անձևացյաց համանուն իշխանի հետ՝ ծանոթ թովմա Արծրունու և Հովհաննես Դրասխանակերտցու պատմություններից, մի գործիչ, որն իր իշխանական պարտականությունների կատարմանը հմտորեն զուգակցել է մատենագրական հետաքրքրությունները, իսկ իր կյանքի վերջում, ինչպես ենթադրվում է, ընդունել է հոգևոր կոչում և դարձել Անձևացյաց եպիսկոպոս՝ այդ պաշտոնում, հավանաբար, նախորդելով Նարեկացու հորը» (տե՛ս Պ. Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, էջ 42):

ավելի առաջ է անցել նրանից, քանզի եթե նա «գալտուղ երախայրեացն միայն արգելուլ բաջաղէր», ապա Խոսրովը ձեռնարկել է ընդհանրապես հայրապետական աթոռը վերացնելու. «Բնաւին գհայրապետականս բառնալ գաթոռն ձեռնարկեցեր, գի անհոգ յընծայաբերութենէ ստասցիս կեանս»<sup>21</sup>:

Ժամանակի ընթացքում կաթողիկոսի հետ Խոսրովի վեճերն ավելի սուր բնույթ են ստանում, և երկուսի համար էլ անդարձ փակվում են հաշտության ճանապարհները: Այլընտրանքի հնարավորություն չունենալով՝ կաթողիկոսը բանադրում է Անձևացյաց Խոսրով եպիսկոպոսին, ում ինքը ժամանակին համարել էր «այր համեստ ու գիտնաւոր» և, առանձնակի հարգանք տածելով նրա հանդեպ, վստահել Անձևացյաց եպիսկոպոսական աթոռը:

Կաթողիկոսի կողմից բանադրված ու նզովված եպիսկոպոսը մինչև իր կյանքի մայրամուտը հավատարիմ է մնում սեփական գաղափարներին՝ չնայած այն հոգեբանական ճնշումին և արտաքին լքվածությանը, որին ենթարկվում էր մեկը, ով արժանանում էր կաթողիկոսի բանադրանքին: Եվ գուցե այս է պատճառը, որ տեղեկությունները պակասում են թե՛ նրա մահվան թվականի և թե՛ առանձին հանգամանքների վերաբերյալ: Ինչպես վերը նշեցինք, Անձևացու մահվան թվականը հայտնի չէ, սակայն «եթե հաշվի առնենք, որ, ըստ Ասողիկի, Անանիա Մոկացին վախճանվել է 965թ., բարվոք ծերության հասած, երբ «ամնվազն պիտի լիներ 65 տարեկան», ուրեմն մոտավորապես նույն տարիքում էլ մահացել է Խոսրովը, Մոկացուց 3-4 տարի առաջ, 960թ. մոտերքում»<sup>22</sup>: Խոսրովի մահը տեղի է ունեցել թերևս հոգեկան ծանր կացության մեջ, եթե հաշվի առնենք, թե ինչ է նշանակում բանադրված լինել կաթողիկոսից: Դա նրա նկատմամբ հարուցում էր ընդհանուր կասկածամտություն և անվստահություն, հոգևոր դասի գործիչների հետ կապերի խզում, նաև անտեսում ու արհամարհանք<sup>23</sup>: Խոսրով Անձևացու ողբերգական կյանքի բնութագրականը առավել գեղեցիկ տրված է «Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը» գրքի հեղինակի կողմից, որով և ամփոփում ենք մեր ասելիքը:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 41:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 45:

<sup>23</sup> Այս իմաստով հետաքրքրական է Հակոբ Ծպատեցու «Խօսք հօր Յակոբայ Ծպատեցոյ իմաստասէր գիտնաւորի ընդդէմ Խոսրովայ իմացմանց» գրությունը (տե՛ս Պ. Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, էջ 46, տողատակ):

*«Խոսրով Անձեւացի եւ Անանիա Մոկացի. իրենց դարի եկեղեցական-մտավոր աշխարհի՝ միմյանց արժանի առաջին մեծության դեմքեր, ազգային-քաղաքական շահերի պահանջով երբեմն իրար հետ գործակցած եւ փոխադարձաբար համակրանք ծեռք բերած գործիչներ, սկզբունքային եւ անշեղ բնավորության տեր անհատականություններ՝ աննահանջ նվիրված իրենց նպատակներին, անզիջում այն աստիճան, որ երկուսի պահվածքն էլ տանում էր կամակորության եւ ոչ թե փոխզիջման: Խոսրովի դժբախտությունն էր, որ նա հայտնվեց Մոկացուն ընդդիմադիր դիրքում: Իրապես սոսկ Անանիա Մոկացին չէ, որ հաղթում էր նրան, այլ կաթողիկոսի միջոցով՝ եկեղեցական-դասային ողջ աստիճանակարգը (հիերարխիան), եւ Խոսրովի փայլիայած սկզբունքները չէ, որ նորահնար էին թվում ու մերժելի. նրանք ունեն արդարացի հիմքեր հենց եկեղեցական գրականության մեջ, որոնք, սակայն, վաղուց դադարել էին գործելուց: Խոսրովը վերափոխման մարտիկ էր՝ չգործող ավանդույթներն ու սկզբունքները վերականգնելու ճանապարհով: Մենք ապաժաման հանդիսատեսն ենք շատ կողմերով քողարկված նրա ողբերգության»<sup>24</sup>:*

#### ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ

Խոսրով Անձեւացին՝ որպես Հայ Եկեղեցու ապագայով մտահոգված հոգևորական, ձեռնամուխ է լինում որոշակի բարենորոգումների՝ ջանալով ժողովրդին առավել հաղորդ դարձնել Եկեղեցու ծիսաարարողական կյանքին՝ ընթրնելի դարձնելով արարողությունների ներքին՝ հոգևոր բովանդակությունը, ինչպես ինքն է այդ մասին վկայում Պատարագի իր մեկնության «Հորդորակում».  
*«Հանդգնաբար ձեռնամուխ եղա այս գործին անհրաժեշտությունից դրդված & ոչ թե ինձ համար փառք ձեռք բերելու նպատակով: Քանի որ եպիսկոպոսություն վիճակվեց ինձ, & այն ստանալով տեսա, որ շատերն են տգիտության մեջ, իսկ խոսքով այս ամենը յուրաքանչյուրին ուսուցանելն անհնար գտա, ուստի պատշաճ համարեցի գրի առնել, որպեսզի թեր&ս սովորելն այսպես ոյուրին դարձնեմ կամեցողների համար»:* Իր եպիսկոպոսության շրջանում նա գրում է «Բացատրութիւն աղօթից եւ քարոզութեանց կարգաց եկեղեցւոյ» և «Մեկնութիւն աղօթից պատարագի» կոթողային գործե-

<sup>24</sup> Նոյն տեղում, էջ 48:

րը, որոնք էլ կազմում են մեզ հասած նրա ամբողջ գրական ժառանգությունը:

1. «**Բացատրություն աղօթից եւ քարոզութեանց կարգաց եկեղեցւոյ**» գործը հատված առ հատված բացատրությունն է ժամագրքի քարոզների ու աղոթքների, որտեղ Անձնացին լուսաբանում է դրանց իմաստը և երբեմն էլ ավելացնում իր խրատական հորդորները: Դեռևս ժԳ դարում Մովսես Երզնկացի վարդապետը, ի մի բերելով Հայոց Եկեղեցու ժամակարգության վերաբերյալ Խոսրով Անձնացու և մյուս սրբազան վարդապետների (Հովհան ֕Օձնեցու, Ստեփանոս Սյունեցու և Մովսես Քերթոզահոր<sup>25</sup>) մեկնություններն ու հորդորները, կազմում է մի հավաքածու, որը հետագայում երկու անգամ տպագրվում է Կ. Պոլսում՝ 1730թ. («*Գիրք որ կոչի մեկնութիւն աղօթից*») և 1840թ. («*Մեկնութիւն ժամակարգութեան, արարեալ երանելոյն Խոսրովու Անձնացեաց Եպիսկոպոսի*»): Իսկ մեր ժամանակներում բարեշնորհ Վազգեն սրկ. (այժմ՝ տ. Բագրատաբեղա) Գալստանյանի կողմից կազմվել է այս աշխատության համեմատական բնագիրը Մաշտոցյան Մատենադարանի թիվ 1328, 1329, 2273 ձեռագրերի հիման վրա, որոնք մեզ հայտնի ձեռագրերից ամենահինն են՝ բոլորն էլ գրված ժԳ դարում<sup>26</sup>:

2. «**Մեկնութիւն աղօթից պատարագի**» գործը գրվել է 950թ., որտեղ Անձնացին լուսաբանում է պատարագի աղոթքներն այնպես, ինչպես այդ արել էր ժամակարգության բացատրության պարագային: Խոսրով Անձնացին նպատակ ունի Պատարագի սրբազան աղոթքների իմաստներն ավելի հասկանալի դարձնել նախ եկեղեցականների և ապա նրանց օգնությամբ՝ նաև ժողովրդի համար: Այս պատճառով տեսական խորհրդածություններ անելու և բարդ աստվածաբանական հարցեր վերլուծելու փոխարեն նա հանդարտ ու հստակ պարզաբանում ու բացատրում է դրանք՝ ջերմեռանդ աղոթքի համար՝ ավելացնելով նաև գործնական խրատներ:

Առաջին անգամ 1869թ., Վենետիկում, Ղևոնդ Ալիշանի աշխատասիրությամբ տպագրվում է «Խոսրովու Անձնացեաց Եպիսկոպոսի մեկնութիւն Պատարագին» գործը: Ապա Պ. Վետերը 1880թ. «Պատարագի մեկնությունը» թարգմանում է լատիներեն և

<sup>25</sup> Ե. արեղա Պետրոսյան, Մովսես Երզնկացու դավանաբանական գործերը, էջ 9:

<sup>26</sup> Վազգեն սրկ. Գալստյան, Խոսրով Եպիսկոպոս Անձնացի (կենսագրական գծեր), «Բացատրութիւն կարգաց եկեղեցւոյ» երկի աստվածաբանությունը, Ավարտաճառ, Ս. Էջմիածին, 1994, էջ 42:

հրատարակում Ֆրեյբուրգում: 1991թ., աշխատասիրությամբ Պիտեր Քաուիի (Peter Cowe), այս գործը թարգմանվում է անգլերեն և Ղ. Ալիշանի կազմած բնագրին հանդիպադիր (վերջինիս մեջ, ի տարբերություն Ալիշանի կազմած բնագրի, պատարագամատույցի տեքստային մեջբերումները համարակալված են) տպագրվում Նյու Յորքում՝ «Commentary on the Divine Liturgy by Xosrov Anjewac'i» վերտառությամբ:

ԽՈՍՐՈՎ ԱՆՉԵՎԱՑՈՒ  
ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՒՅՅԻ ԱՂՔՅՈՒՐԸ

Ե դարի վերջում, երբ Բարսեղյան պատարագը շուրջ 80 տարի արդեն գործածվում էր հայոց Եկեղեցում իբրև տիրապետող պատարագ<sup>27</sup> (այդ ժամանակահատվածում չէր բացառվում նաև այլ պատարագների գոյությունը), սրա կողքին Եկեղեցու ծիսական կյանքում ի հայտ են գալիս նոր անվանումներով պատարագներ, որոնք զնալով մոռացության են մատնում Բարսեղյան պատարագը՝ հայոց պատարագամատույցներին նոր շունչ և նկարագիր հաղորդելով: Դրանք իրենց վարդապետական հասունությամբ ժամանակին առավել համահունչ էին և զգուշավոր: Այդ պատարագները, որոնք մեզ հասել են Գրիգոր Լուսավորչի, Սահակ Պարթևի, Աթանաս Ալեքսանդրացու, Կյուրեղ Ալեքսանդրացու անուններով, ըստ Հ. Գաթրճյանի, իրականում մեկ հեղինակի գործեր են, որ է՝ Գրիգոր Նազիանզացին<sup>28</sup>:

Պետք է ասել, որ թարգմանական գրականությունը թեև սկիզբ առավ Սահակ-մեսրոպյան դպրոցով, բայց և մեծ թափ ու զարգացում ապրեց նույն դարի երկրորդ կեսին, երբ երկու մեծ հոգևորականներն այլևս կենդանի չէին (440թ. հետո): Նրանցից հետո Հայոց Եկեղեցու ծիսաարարողական համակարգը զարգացնելու մեջ մեծ դեր էր վերապահված Մանդակունի կաթողիկոսին, ով էլ արդեն հայերեն թարգմանված Նազիանզյան պատարագներից մեկին հայկական զուևավորում տալով՝ մատուցեց հայ հավատացյալներին Բարսեղյան պատարագից ոչ պակաս գեղեցիկ մեկ այլ պատարագ:

<sup>27</sup> Յ. Գաթրճեան, Սրբազան Պատարագամատույց Հայոց, էջ 171-179:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 219:



Նազիանզացու պատարագների մեջ մեր Եկեղեցու համար հատկապես սիրելի է դարձել 378-381թթ. ընթացքում գրված պատարագը, որ մեզանում հայտնի է իբրև Աթանաս Ալեքսանդրացու պատարագ: Այս պատարագի թարգմանության որևէ հին ձեռագիր չունենք, սակայն դրան համարժեք կարող ենք համարել Խոսրով Անձևացու «Պատարագի մեկնության» մեջ պահպանված պատարագի բնագիրը (950թ.), որը, ըստ Գաթրճյանի, հետագայի հավելումներ չունի: Բայց այս բնագրով մենք չունենք մեր ձեռքին այն ամբողջական տեքստը, որն ինքը՝ Գրիգոր Նազիանզացին է գործածել: Արդ, Անձևացյաց եպիսկոպոսը մեզ է ներկայացնում մի բնագիր, որն արդեն 500 տարվա վաղեմություն ուներ, սակայն այդ հանգամանքը չի խանգարում պարզելու այս պատարագի ճշմարիտ ծագումը և Նազիանզացու մյուս պատարագների հետ անքակտելի կապը: Այնուամենայնիվ, ճիշտ է եզրակացված, որ *«ամէն նկարագրական նշաններն աս նկատմամբ պահուած չեն. շատ բան ալ ժամանակի հոլովմամբ մէկդի ինկած գացած է»*<sup>29</sup>:

Արդ, Խոսրով Անձևացին թեև ուրիշ պատարագներ էլ է ճանաչում, սակայն հենց այս պատարագն է մեկնում, ինչն էլ ցույց է տալիս, որ նրա ժամանակ մեզանում ընդհանրական գործածություն էր ստացել հատկապես այս պատարագը: Այս և մի քանի այլ տեղեկությունների հիման վրա Գաթրճյանը գրում է. *«Ասոր համար էր, որ ինչպէս կը կարծենք, քիչ մետքը կրկին եղած է սկզբնական մէկ պատարագաց մատենանը: Մէյ մը՝ համագումար բոլորը միահաղոյն, ինչպէս նախնաբար. մէյ մ'ալ Ե (այսինքն՝ Աթանասին վերագրված թրգմ.) պատարագն առանձին գրուած: Աս վերջինը մէյ մը մէկալնէրէն այսպէս՝ իբրեւ տիրող ի գործածութեան զատուելէ ետքը, ի՞նչ անչափ բնական է մտածել՝ ինչպէս աս որ առաջին բոլոր պատարագաց մատենանն այնչափ թուով նուագի, որչափ երկրորդը թուով յաւելու, յաճախ ըլլալով պէտքը & դիւրին ընդօրինակութիւնը, & երթալով նուագի նախնական բովանդակութիւնը»*<sup>30</sup>:

Խոսրով Անձևացու «Պատարագի մեկնությունը» հայ եկեղեցական մատենագրության մեջ, ժամանակագրական առումով, մեզ հայտնի առաջին լիարժեք պատարագամատուցի մեկնությունն է: Այս գործը հետագա դարերում իբրև կարևոր աղբյուր հիմք է

<sup>29</sup> Նույն տեղում, հտ. Բ, էջ 269:

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 319:

ծառայել Հովհան Արճիշեցու և Մովսես Երզնկացու համար<sup>31</sup> ցավոք սրտի անհայտ մնալով Ներսես Լամբրոնացուն<sup>32</sup>:

Ինչպես Նազիանզացու մյուս պատարագները, այդպես էլ «Աթանասյան» կոչվող պատարագը բաղկացած է միայն «հաւատացելոց պատարագից»: Ինքը՝ Խոսրով Անձևացին էլ իր պատարագի մեկնությունը սկսում է «Ջկնի Աւետարանին եւ զՀաւատամքն ասելոյ քարոզէ սարկաւագն» բառերով և ապա շարունակում հաջորդական մասերով: Սա ցույց է տալիս, որ Խոսրովյան պատարագամատույցն իր մեջ չի պարունակել պատրաստությունը և ճաշու արարողությունը: Ճաշու արարողության պարագային թերևս սա բացատրվում է այն հանգամանքով, որ թեև Գ դարում ճաշու արարողությունը միացված էր ս. Հաղորդության խորհրդին, սակայն արդեն Ե դարում այն կատարվում էր ս. Հաղորդությունից անջատ: Իսկ Խոսրովյան պատարագամատույցի մեջ բացակա այս երկու մասերը շատ հավանական է, որ մուտք են գործել հայոց պատարագամատույց 950-ից հետո և 1177-ից առաջ<sup>33</sup>:

Այս իմաստով, այն հարցին, թե երբ է մեր արդի պատարագամատույցն իր վերջնական տեսքը ստացել, այժմ բավական դժվար է պատասխանել: Կարելի է կարծել, որ Լամբրոնացու պատարագամատույցով դադար են առել այս փոփոխությունները<sup>34</sup>: Սակայն մեր սովորական պատարագամատույցի և Լամբրոնյան բնագրի պարզ համեմատությունն էլ բավարար է, որ ակնհայտ դառնա այն մեծ տարբերությունը, որ գոյություն ունի այդ երկու պատարագների միջև: Եթե էական մասերը նույնն են մնացել, այնուամենայնիվ, մանրամասների մեջ տարբերությունները շատ են: Բացի սրանից, ըստ Հ. Գաթրճյանի, ԺԳ-ԺԹ դդ. ձեռագրերի ու տպագիր պատարագամատույցների ուսումնասիրությունը հանգեցնում է այն եզրակացության, որ մեր այսօրվա սովորական պատարագամատույցը թեև իրենից ներկայացնում է Խոսրովյան և Լամբրոնյան պատարագների համադրությունը, սակայն, այնուամենայնիվ, հետագա դարերում ենթարկվել է մի շարք

<sup>31</sup> Տե՛ս Եզնիկ արեղա Պետրոսյան, «Մովսես Երզնկացու «Հաւաքումն համառօտ մեկնութեան սրբոյ պատարագին յառաջագոյն արարեալ է սրբոց լուսաւոր հարցն» աշխատությունը, «Էջմիածին», 1973, Թ, էջ 19:

<sup>32</sup> Ղևոնդ Ալիշան, «Խոսրովու Անձևացեաց եպիսկոպոսի մեկնութիւն Պատարագին», Վենետիկ, 1869թ., Յառաջաբան:

<sup>33</sup> Տիրան արք. Ներսոյեան, Համառօտ մեկնութիւն պատարագամատուցի, Փարիզ, 1999, էջ 15:

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 15:

փոփոխությունների: Այդ փոփոխությունների հստակեցումը կարիք ունի խոր ու մանրակրկիտ ուսումնասիրության:

Այսպիսով, Ջ-ից մինչև Ժ դարը Հայ Եկեղեցում ընդհանրական կիրառություն ստացան Նազիանզացու պատարագները, մասնավորաբար նրանց մեջ մեծ գործածություն ունեցավ Աթանաս Ալեքսանդրացու անունով հայտնի պատարագը, որի թարգմանության և ճոխացման գործում անգնահատելի է ս. Հովհան Մանդակունի կաթողիկոսի դերը: Հավանաբար կաթողիկոսի՝ այս պատարագի նկատմամբ յուրահատուկ վերաբերմունքի նպատակներից մեկն այն առավել գործածական դարձնելն էր մեր Եկեղեցում, որն էլ իրապես իրականացավ հետագա դարերում: Սրա ապացույցներից է թերևս Խոսրով Անձևացու «Պատարագի մեկնությունը»: Պետք է կարծել, որ Անձևացին իր «Պատարագի մեկնությունը» գրելիս դիմել է Աթանաս Ալեքսանդրացու անունով հայտնի պատարագի տեքստին, քանի որ իր նպատակն իրականացնելու համար անհմաստ կլիներ մեկնել մի այնպիսի պատարագ, որը քիչ կիրառություն ունենար Հայ Եկեղեցու ծիսական արարողությունների շարքում :

*Սկրտիչ արեղա Պռոշյան*

ԽՈՍՐՈՎ ԱՆՁԵՎԱՑԻ

ՍՈՒՐԲ  
ՊԱՏԱՐԱԳԻ  
ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

## ՊԱՏԱՐԱԳԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Ավետարանի ընթերցումից ու «Հավատամքի» արտասանությունից հետո սարկավազը քարոզում է.

**1.<sup>1</sup> *Ղարծյալ հավատով աղաչենք ու խնդրենք Աստծուց՝  
Հորից և ամենակալ Տիրոջից, պաշտամունքի ու աղոթքի  
այս ժամի համար, որպեսզի Աստված  
ընդունելության արժանացնի այն:***

*Ղարծյալ* ասացինք, քանզի այլ է *հավատով աղաչելը*, որովհետև հավատն է լսելի դարձնում, ինչպես Հակոբոս առաքյալն ասաց. «Եթե ձեզանից մեկն իմաստությամբ թերի լինի, թող խնդրի Աստծուն, Ով բոլորին տալիս է առատապես և չի արհամարհում, և կտա նրան: Միայն թե թող խնդրի հավատով և չերկմտի» (*Հակոբ. Ա 5-7*): Նույնն է հորդորում նաև Պողոսը. «Ուզում եմ, որ տղամարդիկ աղոթեն ամեն տեղ, սուրբ ձեռքեր բարձրացնեն դեպի վեր, առանց բարկության և երկմտության» (*Ա Տիմ. Բ 8-9*): Ինքն իսկ մեր Տերն էլ է սա հաստատում՝ այսպես ասելով. «Այն ամենը, ինչի համար աղոթելով խնդրեք և հավատաք, որ կստանաք, կտրվի ձեզ» (*հմմտ. Մատթ. ԻԱ(21) 22-23*):

Ինչո՞ւ է երկու բառ գործածում՝ *աղաչենք* և *խնդրենք*: Ցույց է տալիս, որ խնդրանքները մեծ պաղատանքով է պետք կատարել և ամբողջ սրտով ջերմեռանդորեն աղաչել՝ համաձայն մարգարեի խրատի. «Պաղատի՛ր Տիրոջը, և Նա քեզ կտա քո բոլոր խնդրանքները» (*Սաղմ. ԼԶ(36) 4*):

---

<sup>1</sup> Պիտեր Քաուլիի հրատարակած մեկնության բնագրի մեջ (S. Peter Cowe, «Commentary on the Divine Liturgy by Xosrov Anjēwac'i», New York 1991) համարակալված է Պատարագի խոսքերի յուրաքանչյուր մեջբերում: Իսկ այստեղ՝ թարգմանության մեջ, համարակալված են ավարտուն հատվածները (ամբողջական քարոզ, աղոթք և այլն): (*Այս և հետագա ծանոթագրությունները՝ Ա.Ա.-ի*):

Աստծուն երկու անունով կոչեց ու երրորդն էլ ավելացրեց. **«Խնդրենք Աստծուց՝ Հորից և ամենակալ Տիրոջից»**՝ ուսուցանելով գութ ու երկյուղ ունենալ Աստծո հանդեպ և հույսով կանչել Նրան՝ գթալու, խնամածելու և պահպանելու: Քանի որ Աստված արարիչ է, ըստ անհրաժեշտության ընդառաջ է գալիս և ստեղծվածներիս խնամակալությունը ստանձնում. քանի որ ըստ երկրորդ ծննդյան ավագանի **Հայր** է, մեր նկատմամբ սիրով է բորբոքվում՝ գթալու մեզ. և քանի որ **ամենակալ Տեր** է, հանձն է առնում մեզ՝ իբրև ծառաների, պահպանել ու մեզ անհրաժեշտ ամեն ինչ շնորհել:

Այս պատճառով ճշմարիտ սիրով ապավինենք Նրան՝ իբրև Արարչի և **Հոր**, և իբրև **Տիրոջ**՝ երկյուղով ծառայենք, մեր բոլոր հոգսերը Նրան հանձնենք և ամբողջովին Նրան հուսանք, քանզի եթե սակավագութ մարդկանց վստահում ենք մեր բոլոր կարիքների բավարարումը նրանց լուրջ մեկ՝ հայր կամ տեր լինելու պատճառով, ապա որչափ առավել այս երեք պատճառներով պարտավորվում ենք մեծահույս լինել բազմագութ Աստծո, Հոր և Տիրոջ նկատմամբ: Միայն թե ամբողջապես արժանին հատուցենք Նրան, քանզի արարածն Արարչին պատվում է և պարտավորություն ունի Նրան սպասավորելու և պաշտամունք մատուցելու, որդին փառավորում է հորը, և ծառան՝ երկնչում իր տիրոջից: Այսպիսին լինելով՝ Նրանից ստանում ենք ամեն բարիք և հավիտենական կյանքի ավետիսն ունենում այստեղ ու հանդերձյալում, իսկ եթե այդ առաքիլություններից շրջվում ենք դեպի հակառակ կողմը, հակառակն է մեզ պատահում, և լսում ենք. «Ձղջացի, որ երկրի վրա մարդ ստեղծեցի» (*Ծննդ. 2 6-8*), նաև «Ահա Ես կոչնչացնեմ նրանց և երկիրը» (*Ծննդ. 2 13-14*), և մարգարեի միջոցով հայտնած Նրա տրտունջը. «Եթե Ես Հայր եմ, ո՞ւր է Իմ փառքը, և եթե Տեր եմ, ո՞ւր է Իմ նկատմամբ երկյուղը» (*հմմտ. Մաղաք. Ա 6-7*):

***Պաշտամունքի ու աղոթքի այս ժամի համար, որպեսզի Աստված ընդունելության արժանացնի այն:***

Ասում է՝ *այս ժամի*, այսինքն՝ այն ժամանակի, երբ աղոթքի ենք հավաքված, ինչը *պաշտամունք* (սպասավորություն) ու *աղոթք* է անվանում՝ ցույց տալով, թե *Հայր Աստծո* և *ամենակալ Տիրոջ* սպասավորները լինելով՝ պարտավոր ենք առանց ծուլության միշտ Նրա պաշտամունքին ժամանել. իսկ պաշտամունքը ծառայության անուն է: Աննպատակ չեն դրված նախ *պաշտամունքը* և ապա *աղոթքը*, որ խնդրանքներ է ներկայացնում, այլ որպեսզի սովորես, որ ծառայելով է պետք խնդրել պետքերը, քանզի այսպես նաև մեր մարմնավոր տերերին ենք սովոր նախ ծառայել և ապա խնդրել:

Այլն՝ սարկավազը պատվիրում է աղաչել, որ *պաշտամունքն* ու *աղոթքն* ընդունելի դառնան: Այսինքն՝ եթե Աստծուն պաշտամունք ենք մատուցում, ինչպես հաճելի է Նրան, աղոթում, ինչպես Նա է կամենում, այսինքն՝ սրբությամբ, սիրով, զգաստությամբ, հստակ մտքով ու ջերմ հոգով, և խնդրում մեզ օգտակարը՝ «Աստծո արքայությունն ու Նրա արդարությունը» (*Մատթ. 2 33*), ապա, ինչպես Հովհաննես առաքյալն է ասում, «ինչ էլ որ խնդրում ենք ըստ Նրա կամքի, Նա մեզ լսում է» (*Ս Հովհ. Ե 14-15*): Այս մտքով են ասվում նաև քարոզի հետևյալ խոսքերը.

***Թող Տերը լսի մեր աղաչանքի ձայնը,***

***ընդունի մեր սրտի խնդրանքները և ողորմի մեզ:***

Քանզի Տերը սովոր է լսել նրանց, ովքեր համաձայն Նրա կամքի են հայցում: Դարձյալ՝ չասաց, թե՝ ***թող ընդունի մեր խնդրանքները***, այլ՝ ***մեր սրտի՝ խնդրանքները***, որովհետև ո՛չ թե շուրթերի, այլ սրտի խնդրանքն է Նրա առաջ ընդունելի, ինչն էլ ստիպում է Աստծուն մեզ ողորմել, ինչպես պոռնիկին (*Մատթ. Ի2(26) 6-13*), քանանացուն (*Մատթ. ԺԵ(15) 22*) և ինչպես կույրերին, որ ողորմություն խնդրելուց չէին դադարում, թեպետ շատերն էին սաստում, մինչև որ տեսողություն ստացան ու Տիրոջը հետևեցին. և թեև պարզևր ստացան, սակայն չլքեցին Նրան (*Մատթ. Ի(20) 30-34*): Մենք էլ նույնն անենք. չդադարենք խնդրելուց, նույնիսկ եթե բազում

խափանիչ խոչընդոտների հանդիպենք, և խնդրածը ստանալուց հետո հետ չկանգնենք Նրանից, ապա թե ոչ Նա էլ մեզանից կհեռանա և այն բանին կարժանանանք, ինչի մասին սաղմոսերգուն ասում է. «Ահավասիկ իրենց անձը Քեզնից հեռացնողները պիտի կորչեն» (Սաղմ. ՀԲ(72) 27), այլ ըստ առաքյալի խորհրդի՝ «մերձենանք Աստծուն, և Նա կմերձենա մեզ» (Հակոբ. 7 8):

***Մեր աղոթքներն ու խնդրանքները թող ամեն ժամ  
մտնեն Նրա մեծ տերության առջև:***

Եթե այնպես աղոթենք, ինչպես ասվեց, և խնդրենք այն, ինչ Աստծուն հաճելի է ու մեզ էլ օգտակար, ոչ միայն այժմ, այլև ***ամեն ժամ մեր աղոթքներն ու խնդրանքները կմտնեն Նրա մեծ տերության առջև:*** Այնուհետև ինչպիսի՞ անչափելի խնդությամբ կլցվենք. քանզի եթե հաճախ խնդություն է լինում, երբ մեկի աղաչանքն ընդունվում է մարդկային այս փոքր տերությունից, ապա երբ մտնենք այդչափ մեծ ու հրեշտակների համար ահավոր երկնավոր Տիրոջ առաջ և Նրանից մեր խնդրածը ստանանք, ինչպիսի՞ բերկրանք կապրենք, և Նա այնտեղի երանություններից առաջ այստեղ իսկ պարգևներով կլցնի մեզ, ինչպես և սարկավազն է ասում.

***Եվ Նա՝ ամենակալ Տերը, թող շնորհի մեզ  
հավատով միաբան գործել արդարության համար,  
որպեսզի Իր ողորմության շնորհները հեղի մեզ վրա:***

Տեսնո՞ւմ ես աղոթքի շահը, որը, ինչպես այստեղ է ցույց տրված, ուղղափառ ***հավատով*** միաբանվելն է և ***արդարության համար գործելը:*** Եվ այսպես լինում է, երբ ***ամենակալ Տերն Իր ողորմության շնորհներն է հեղում,*** այսինքն՝ Սուրբ Հոգու շնորհները, որոնք, ողորմելով, Տերը տալիս է խնդրողներին: Դրանք են, որ հաստատում են մեզ հավատքի մեջ և զորացնում ***արդարության գործերի համար:*** Դրանք են, որ տաժանելին հաճելի են դարձնում:



Ապա սարկավագն աղոթքով ավարտում է խոսքը՝ ասելով.

***Ապրեցրո՛ւ և ողորմի՛ր մեզ, Տէր:***

Աղ ո թ ք<sup>2</sup>

***2. Տէր մեր և Փրկիչ Հիսուս Քրիստոս,  
որ մեծ ես ողորմությամբ***

***և առատ՝ բարերարության պարգևներով:***

Քանի որ Նա երկնքի ու երկրի Տէրն է, ապա խնդրում ենք Նրան, որ առավել ու հատուկ գութ դրսևորի մեր նկատմամբ, մանավանդ, երբ Նրան աղերսում ենք իբրև մեր ***Փրկիչ***, Ում մարմնանալով և մահվամբ փրկվեցինք: Իսկ ինչպես որ ***մեծ ես ողորմությամբ*** արտահայտությունը Նրա անբավ ողորմությունն է ցույց տալիս, այդպես էլ ցույց է տրվում Նրա պարգևների անչափ առատությունը: Բայց այստեղ ո՞րն է այս աղոթքի նախաշավիղը: Քանի որ այս աղոթքը կատարվում է երրորդ ժամին<sup>3</sup>, երբ Փրկչին խաչ հանեցին (*Մարկ. ԺԵ(15) 25*) և երբ Սուրբ Հոգին տրվեց առաքյալներին (*Գործք Բ 16*), խաչի վրա համբերելը Նրա անչափ ***ողորմության*** արդյունքն էր, որպեսզի մեր մեղքերի պարտքերն Իր մարմնով հատուցի: Նույնն է նաև մեծ պարգևները, այսինքն՝ Սուրբ Հոգին, առատաբար և անհուն բարերարությամբ շնորհելու պարագան: Ուստի խաչի չարչարանքներին համբերելու պատճառով է, որ ասում է՝ ***մեծ ես ողորմությամբ***, իսկ ***առատ ես բարերարության պարգևներով*** խոսքն ասվում է Հոգին հեղելու պատճառով, ինչպես շարունակությունն է բացահայտում.

---

<sup>2</sup> Աղոթքներն արտասանվում են պատարագիչ քահանայի կողմից, քարոզները՝ սարկավագի:

<sup>3</sup> Այսինքն՝ առավոտյան ժ. 9.00-ին:

***Դու, որ մեր մեղքերի համար այս ժամին  
կանովին համբերեցիր չարչարանքներին,  
խաչին ու մահվանը:***

Ասում է՝ ոչ թե որևէ մեկի հարկադրանքով, այլ կամավորաբար կրեցիր բոլոր չարչարանքները՝ ողորմելով մեզ: Եվ առանց պատճառի չէ, որ այս աղոթքը սկսվում է ***Դու***-ով, այլ քչով նախապատրաստում է շատի մասին խորհելու, այսինքն՝ Դու՛ Աստվածդ և Հայր Աստծուն համագո Որդիդ, բոլորի Արարիչդ, Որիդ երկնային անհամար բազմությունները մեծ երկյուղով են ծառայում, Որիդ հրամանով է ծովը սահմանավորված ու ցամաքը հաստատված, Որիդ խոսքով երկնքի հաստատության մեջ լուսատուներից յուրաքանչյուրն ըստ իր կարգի է ընթանում, Որիդ ձեռքով են կերակրվում բոլոր տեսակի կենդանիները, Դու՛, որ իշխում ես բոլորի վրա և լցնում ամեն ինչ, ոչնչով չես պարփակվում, անհասանելի ես, անձառելի ու անիմանալի, ***համբերեցիր չարչարանքների՝*** կապանքների մեջ առնվելով, ատյանում կանգնելով, անարգվելով, թուք ընդունելով, ապտակվելով, կռփահարվելով, ծաղկվելով, փշե պսակով ու ծաղրական զգեստով ծաղրուծանակի ենթարկվելով, եղեգնյա գավազանով գանահարվելով, նախ Պիղատոսի կողմից մտրակով, իսկ հետո էլ զինվորների կողմից եղեգով ծեծվելով: ***Համբերեցիր չարչարանքներին*** ասելով՝ ցույց է տալիս սա և սրա նմանները: Ապա ակնարկում է նաև ***խաչի*** չարչարանքները՝ մեկ բառով հիշեցնելով Նրա մերկացվելը, խաչափայտին բևեռվելը, ծարավելը, լեղին ճաշակելը, շատերի հայհոյանքին, նախատինքին ու հեզանքին արժանանալը: Այնուհետև մահն էլ է կցում սրանց՝ այսպես ասելով՝ ***այս ժամին կամավորաբար համբերեցիր չարչարանքներին, խաչին ու մահվանը,*** երբ նաև խոցվեց, որով մահացած ժամանակ էլ թշնամանք կրեց և թաղվելով՝ մեռելների հետ դասվեց: Այս ամենին, ասում է, ***համբերեցիր մեր մեղքերի*** համար, որպեսզի Քո անպարտ արյամբ ազատես պարտապաններիս հավիտենական մահվանից ու տանջանքներից:

***Եվ Սուրբ Հոգուդ պարզաներն առատորեն շնորհեցիր  
երանելի առաքյալներին:***

Սա նրանց դեմ է, ովքեր բամբասում էին, թե առաքյալները հարբած լինելու պատճառով են տարատեսակ լեզուներով խոսում: Պետրոսն ասում է. «Սրանք հարբած չեն, ինչպես դուք կարծում եք, քանի որ դեռ օրվա երրորդ ժամն է» (*Գործք Բ 15*): Նույնն են ակնարկում նաև այս աղոթքի խոսքերը, թե նույն այս երրորդ ժամն էր, երբ խաչի վրա բևեռվեցիր և Սուրբ Հոգիդ հեղեցիր ***երանելի առաքյալների*** վրա: Իսկ ***առատապես*** ասելով՝ մարգարեների նկատմամբ առաքյալների ունեցած առավելությունն է ցույց տրվում, այդ պատճառով էլ առաքյալները ***երանելիներ*** են անվանվում. քանզի Սուրբ Հոգին հորդառատ հեղմամբ պարզակվեց նրանց: Սրան է հարում նաև այս մաղթանքը.

***Աղաչում ենք Քեզ, Տե՛ր, հաղորդակից դարձրու մեզ  
Քո աստվածային պարզաներին:***

***Հաղորդակից դառնալ*** նշանակում է մասնակից լինել: ***Աստվածային պարզ*** խոսքով նկատի են առնվում Քրիստոսի չարչարանքներով շնորհված մեղքերի թողությունն ու Սուրբ Հոգու գալստյամբ բաշխված շնորհները, ինչն առավել պարզ արտահայտվում է հաջորդ խոսքի մեջ. քանզի ***աղաչում ենք Քեզ, Տե՛ր, հաղորդակից դարձրու մեզ Քո աստվածային պարզաներին*** ասելուց հետո պատարագիչն ավելացնում է.

***Մեղքերի թողությանն ու  
Սուրբ Հոգու ընդունելությանը:***

Աղաչում եմ, ասում է, որ Քո պատվական արյունը, որը մաքրեց աշխարհը, մեզ էլ մաքրի, և ***Սուրբ Հոգիդ*** մեզ վրա իջնի, որպեսզի մենք էլ այս պարզաներին հաղորդակից դառնանք և, մաքրվելով

մեղքերից ու լցվելով Հոգով, Քո պարզևների համար ըստ արժանվույն շնորհակալություն հայտնենք: Սա է, որ ասում է.

***Որպեսզի արժանի լինենք գոհությամբ փառավորելու Հորը, Որդուն  
և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:***

***Խաղաղություն ամենքին:***

***3. Քո խաղաղությամբ, Քրիստոս Փրկիչ մեր,  
որ վեր է ամեն մտքից ու խոսքից, պահպանիր մեզ  
և աներկյուղ պահիր ամեն չարից:***

Այս հատվածը, ինչպես ասում է երանելի Հովհանն<sup>4</sup>, դիվահարների համար է սահմանված: Քանզի դիվահարները, որ եկեղեցուց դուրս էին գտնվում, այս ժամին սարկավագների կողմից ներս էին բերվում և կանգնեցվում ժողովրդի առաջ, իսկ երբ քահանան այս աղոթքն էր կարդում, ամբողջ ժողովուրդը պաղատանք էր մատուցում նրանց համար:

***Քո խաղաղությամբ, Քրիստոս Փրկիչ մեր:***

Դու ես, ասում է, որ մարդկային ցեղը փրկեցիր սատանայի ծառայությունից, այժմ էլ փրկություն շնորհիր սրանց՝ ***պահպանելով Քո խաղաղությամբ, որ վեր է ամեն մտքից ու խոսքից***, քանզի այն չի հասկացվում մտքով և չի պատմվում խոսքով, այլ գերազանցում է

---

<sup>4</sup> Պատարագի մեկնության մեջ Անձևացին երեք անգամ վկայակոչում է ոմն երանելի վարդապետ Հովհանի: Հայտնի է, որ Անձևացին ժամակարգության և Պատարագի իր մեկնություններում բազմաթիվ մեջբերումներ է արել Ը դարի հայոց կաթողիկոս ս. Հովհան Օծնեցու գործերից (տես Օրմանեան, Ազգապատում, Ա հտ., Պէյրուք 1959, «571, էջ 836): Հետևաբար ենթադրելի է, որ Պատարագի մեկնության մեջ երեք անգամ վկայակոչված «Հովհանը» հենց նա է: Սակայն երկրորդ և երրորդ վկայակոչումների պարագային կարող է լինել նաև Եկեղեցու տիեզերական վարդապետ ս. Հովհան Ոսկեբերանը. հմմտ. «Այլ որպես երանելին *Յովհան* ասէ *վարդապետն տիեզերաց*», Գիրք որ կոչի մեկնութիւն աղօթից արարեալ երանելւոյն Խոսրովու Անձևացեաց եպիսկոպոսի, Կ. Պօլիս 1730, էջ 38): Պատարագի մեկնության մեջ «Հովհանին» վերագրված մտքերը Օծնեցու տպագիր որևէ գործում չկարողացանք գտնել:

հրեշտակների և մարդկանց իմացականությանն ու բանականությանը:

*Պահպանի՛ր*, ասում է, *և աներկյուղ պահիր ամեն չարից*, այսինքն՝ ո՛չ միայն նրանցից, ովքեր տանջում են, այլ բոլոր տեսակ դևերից՝ հաստատելով Քո խաղաղությամբ:

***Հավասարեցրո՛ւ մեզ Քո ճշմարիտ երկրպագուներին, ովքեր Հոգով և ճշմարտությամբ են Քեզ երկրպագում:***

Ժողովրդից գատելով դևերից լլկվածներին՝ հրամայում է աղոթել, որովհետև ովքեր չունեն Հոգին, դևերի ձեռքն են մատնվում, կամ ովքեր մեղքերի պատճառով զրկվեցին *Հոգուց*, իշխանություն չունեն հավասարվելու նրանց, ովքեր Աստծո հետ են հոգով միացած և դրանով երկրպագություն են մատուցում Աստծուն: Այսպիսիների մասին Տերն Ինքն է ասում, որ «ճշմարիտ երկրպագուները Հորը երկրպագում են Հոգով և ճշմարտությամբ, քանի որ Հայրն էլ Իր համար այդպիսի երկրպագուներ է ուզում» (*Հովհ. 7 23*):

Արդ, այս աղոթքի խոսքերն աղաչում են, որ դիվահարները մաքրվեն պիղծ դևերից, Սուրբ Հոգին ընդունեն եւ ***հավասարվեն ճշմարիտ երկրպագուներին, ովքեր Հոգով և ճշմարտությամբ են երկրպագում Աստծուն:*** Հոգով հաստատվելով ճշմարիտ հավատքի մեջ և նրանով լուսավորվելով՝ բաց երեսով, ինչպես հայելու մեջ, Տիրոջ փառքն են տեսնում և Սուրբ Երրորդությանը դեմ-հանդիման երկրպագություն մատուցում (*հմմտ. Բ Օրենք ԼԴ(34) 10, Ա Կորնթ. ԺԳ(13) 12*): Սակայն քանի որ այժմ այս աղոթքը բոլորի համար է ասվում, խոսքերի նախկին իմաստը փոխվել է. որովհետև, կարծում ենք, առաջ հետևյալ կերպ էր. «պահպանի՛ր սրանց» և «հավասարեցրո՛ւ սրանց Քո ճշմարիտ երկրպագուներին»: Սակայն այժմ ասվող աղոթքը նույնպես չի կորցրել նախկին իմաստը, քանզի մեղքի յուրաքանչյուր փորձություն չարից է: Թվում է, թե դիվահարների համար աղոթելիս այսպես էին ասում. «պահպանի՛ր

և աներկյուղ պահիր չարից», իսկ այժմ ասում ենք. *«ամեն չարից»*, այսինքն՝ նրա բոլոր նետերից՝ *հավասարվելու համար Քո ճշմարիտ երկրպագուներին, ովքեր Հոգով և ճշմարտությամբ են Քեզ երկրպագում*: Եթե նույնիսկ արժանի չենք, սակայն պարտավոր ենք և վայել է Քո տերությունը փառաբանել, այդ իսկ պատճառով *հավասարեցրո՛ւ* մեզ արժանավորներին, քանի որ սա՛ է հաջորդ խոսքի իմաստը.

*Որովհետև Ամենասուրբ Երրորդությանդ վայել են փառք,  
իշխանություն և պատիվ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից.  
ամեն:*

Այստեղ, ինչպես ժողովրդի արձակման ժամանակ, սարկավազն ասում է.

*Օրհնի՛ր, տե՛ր:*

Քանի որ քարոզխոսության վայր է, աղոթքներն ավարտում են օրհնություններով և *քարոզն* են ունկնդրում<sup>5</sup>, որից հետո սուրբ Խորհուրդը կատարում: Բայց քանի որ մենք մի այլ տեղում խոսել ենք Սուրբ Գրքի ունկնդրությանը կարևորություն չտվողների մասին, այստեղ հարկ են համարում փոքր-ինչ խոսել նրանց մասին, ովքեր ասում են, թե՛ «Եթե լսում են, բայց չեն կատարում, ավելի լավ է՝ ընդհանրապես չլսեն, որպեսզի ավելի չդատապարտվեն»: Տեղին է ասել նրանց. ո՛վ աներկյուղ երկյուղածություն, Աստծո պատգամն է իջել երկնքից, ինչպե՞ս ես հանդգնում ասել, թե՛ չեմ լսում և չեմ կատարում: Եթե այդպես է, դու ավելի ես դառնացնում Աստծուն, քան հրեաները, քանզի նրանք լսում էին. «Այն ամենը, ինչ ասելու է մեր Տեր Աստվածը, կլսենք և կկատարենք» (*հմմտ. Ելք ժԹ(19) 8*), իսկ դու անգամ չես լսում: Եթե համարձակվեիր երկրավոր թագավորի հրամանների վերաբերյալ ասել, թե ոչ կարդում ես, ոչ

<sup>5</sup> Այժմ քահանան քարոզում է «Հայր մեր»-ից կամ «Հաւատամք»-ից առաջ:

լսում, մահվան կդատապարտվեիր, ապա Աստծո հրամաններն են տրվում, և դու արհամարհո՞ւմ ես դրանք, քեզ չե՞ս համարում հավիտենական մահվան արժանի: «Վա՛յ նրանց,- ասում է մարգարեն,- ովքեր արհամարհում են, արհամարհելով արհամարհում օրենսդրին» (Եսայի ԻԴ(24) 16): Սա Եսային է ասում, իսկ Երեմիան Տիրոջ անունից ասում է. «Հուդայի երկրի տղամարդիկ և Երուսաղեմի բնակիչներն իրենց թիկունքը դարձրին Ինձ և ո՛չ թե երեսը: Առավոտյան սովորեցրի նրանց, սովորեցրի, բայց չուզեցին խրատ ընդունել» (Երեմ. ԼԲ(32) 32-34): Տեսնո՞ւմ ես, որ Աստված ավելի բողոքում է ոչ թե հրամանը չկատարելու, այլ այն չլսելու համար: Տեսնենք նաև, թե ինչ է ասում Աստված Սողոմոնի միջոցով. «Երբ ձեզ վրա նեղություն և խռովություն հասնեն, գուցե դուք կանչեք Ինձ, և ես ձեզ չլսեմ» (Առակ. Ա 27-28): Իսկ ինչո՞ւ է սա ավելի առաջ ասում, քան մյուսը: Դրա պատճառը հայտնում է քիչ հետո: Սկզբում ասում է. «Որովհետև ես կանչում էի ձեզ, բայց դուք չէիք լսում, երկար թախանձում էի, բայց դուք չէիք ունկնդրում, այլ արհամարհում էիք» (հմմտ. Առակ. Ա 24), իսկ հետո ասում է. «Չարերը կփնտրեն Ինձ, բայց չեն գտնի, քանզի ատեցին իմ աստությունը և Տիրոջ երկյուղը չփնտրեցին» (հմմտ. Առակ. Ա 28-29):

Արդ, նախ անհրաժեշտ է հնազանդություն՝ Աստծո խոսքը երկյուղածությամբ լսելու համար, որն իբրև մեծ բարեգործություն փառաբանում է Եսային՝ այսպես ասելով՝ «Լսե՛ք Տիրոջ պատգամները դուք, որ դողում եք Նրա խոսքերից» (Եսայի 42(66) 5), դարձյալ ասում է. «Եթե հոժար լինեք և լսեք Ինձ, կճաշակեք երկրի բարիքները, իսկ եթե չկամենաք Ինձ լսել, սուրը կուտի ձեզ» (Եսայի Ա 19-20): Տե՛ս, թե ինչպիսի բարիք ու պատիվ ունի ունկնդրողը՝ նախքան լսածի իրագործումը, քանզի սիրով հեռանում է չարից և բարին փափագում: Հեգույթամբ և խոնարհ մտքով երկյուղածորեն ունկնդրի՛ր Աստծո պատգամները և Աստծո բնակարան կդառնաս: Եվ ո՞վ է սա ասում, եթե ոչ Ինքն Աստված.

«Երկինքն Իմ աթոռն է, երկիրը՝ Իմ ոտքերի պատվանդանը. Ես որտե՞ղ պետք է բնակվեմ, եթե ոչ հեզերի ու խոնարհների մեջ, ինչպես նաև նրանց, ովքեր դողում են Իմ խոսքերից» (*հմմտ. Եսայի 42(66) 1*): Այդ իսկ պատճառով Բանասարկուն թույլ չի տալիս լսել. նա՛ էլ գիտի, որ Աստծո խոսքը հոժարությամբ լսողներին Աստված Ինքն է Իր երկյուղը շնորհում և նրանց մեջ բնակվում: Եվ ում մեջ Աստված բնակվում է, նրա համար բոլոր դժվարությունները հեշտ են դառնում, իսկ տաժանելիները՝ ախորժելի, նրա համար քաղցրանում է Քրիստոսի լուծը, և թեթևանում՝ բեռը (*տե՛ս Մատթ. 23(11) 30*), քանզի մեռնում է մեղքի մարմինը, և կենդանանում արդարությունը՝ համաձայն առաքյալի խոսքի. «Իսկ եթե Քրիստոսը ձեր մեջ է, ապա մարմինը մեռած է մեղքի համար, և հոգին կենդանի է արդարության համար» (*Հռոմ. Ը 10*) և այլն: «Մարիամը,- ասում է Տերը,- ընտրեց լավ մասը, որը նրանից չպիտի վերցվի» (*Ղուկ. Ժ 42*). «Քանզի նա նստել էր Տիրոջ ոտքերի առջև և լսում էր Նրա խոսքերը» (*հմմտ. Ղուկ. Ժ 39*): Ուստի դու նույնպես հավատարիմ համարիր Տիրոջը, ընտրիր անկորնչելի բարի բաժինը և մի՛ գայթակղվիր Բանասարկուի խաբեությամբ՝ քեզ զրկելով բարուց: Քանզի նա կամենում է քեզ դաշտ դարձնել իր սերմերի համար, ինչ պատճառով էլ խոչընդոտում է ընդունել աստվածային սերմերը: Մի՛ լսիր Օձին, ով խաբեց Եվային՝ բարին չար ներկայացնելով և հուսադրելով, թե իր առաջարկածն աստվածացնելու է նրան: Լսիր Աստծուն: Ասում է. «Ունկնդրե՛ք ձեր լսելիքներով, հետևե՛ք Իմ ճանապարհներին, լսե՛ք Ինձ և բարիքներ կճաշակեք ու կվայելեք»: Այսքան ավետիս կա այստեղ ու հանդերձյալ կյանքում, և դու ախորժում ես ոչ թե Աստծուն, այլ սատանային լսել: Բանասարկուն թույլ չի տալիս Աստծունը լսել, որպեսզի չլինի թե Աստծո ճանապարհներով քայլենք և Տիրոջ բարիքներին հասնենք: Բանասարկուն հանեց մեզ դրախտից և չի կամենում, որ նույնիսկ այստեղ Աստծո խնամածությամբ ապրենք ու դարձյալ հավիտենական կյանքը վայելենք: Ուստի լսե՛նք Աստծուն, որպեսզի



կատարենք Նրա պատվիրանները: Իսկ եթե չլսենք, ապա որտեղի՞ց կհմանանք, թե ինչ է պետք անել: Ինչպե՞ս Աստծուն կհաշտեցնենք՝ չհմանալով, թե ինչով կամ ինչ ձևերով Նրան բարկացրինք: Արդարացի և տեղին է մտաբերել Եսայու հետևյալ խոսքը. «Այն ժամանակ կհայտնվեն նրանք, ովքեր փակի տակ կդնեն օրենքները, որպեսզի որևէ մեկը չկարողանա սովորել և ասել. «Կմնամ-կսպասեմ Աստծուն, Ով երես դարձրեց Հակոբի տանից, և հույսս Նրա վրա կդնեմ» (Եսայի Ը 16):

Տեսա՞ր, թե որն է Սուրբ Գիրքը լսել թույլ չտալու պատճառը. որպեսզի մարդիկ հույսով զղջալով քավություն չստանան: Եթե արդար ես, լսիր Աստծո պատվիրանները և է՛լ առավել կհաստատվես արդարության մեջ, իսկ եթե մեղավոր ես, լսիր Աստծո սպառնալիքներն ու Դավթի նման ասա. «Մեղանչել եմ Տիրոջ դեմ», և կլսես նույն պատասխանը. «Տերը ներեց քո մեղքը» (Բ Թագ. ԺԲ(12) 13): Ջանա չբարկացնել Աստծուն, իսկ եթե վրիպես, թող քո մեղանչելու մշտական դեղը միշտ Աստծո հանդիմանությունը լսելը լինի, «մեղանչեցի» ասելն ու Նրանից երկյուղելը և ոչ թե ամբողջովին ապստամբելն ու Նրանից հեռանալը: Նա հայր է, պատմիր նրան քո նեղության մասին, որ պատճառում է քեզ չարը, նաև, թե ինչպե՞ս է քեզ խաբում, և Աստծուց՝ իբրև գթացող հորից, խրատ ու օգնություն ստացիր: Նա հոգիների բժիշկ է, ցույց տուր Նրան քո վերքերը և Նրանից դեղ ու բժշկություն կգտնես: Չի՞ բարկանում, երբ Նրա առջև ես ընկնում, թեպետև անթիվ անգամներ խոտորվել ես Նրա խրատներից: Միայն թե թող տեսնի, որ գնում ես Իր մոտ, ցույց տալիս վերքերդ ու թույլ տալիս Իրեն, որ տեսնի քեզ: Նա նման չէ ուրիշ բժիշկների, ովքեր կարողանում են անտեսել քո վերքերը: Նա հայր է. մորմոքվում է, երբ դու արտասվում ես քո հոգու ախտերի համար, և շուտափույթ կերպով պատրաստվում է քեզ բժշկելու: Քանզի գիտի նաև, որ մեր բնությունը դյուրագայթ է, և ըստ ախտերի շատության էլ բազմատեսակ դեղեր է պատրաստել՝ խոնարհություն, խոստովանություն, անոխակալություն, հանցավորի

մեղքերի թողություն, ողորմություն, պահք, աղոթք, մատաղ, սրբերի հիշատակի կատարում, հյուրասիրություն, որբերի և այրիների խնամածություն, եղբայրների նկատմամբ կարեկցանք և սրանց նման այլ բարեգործություններ, որոնց օրինակներն առկա են աստվածային խրատների մեջ՝ մեր հոգիներն ամեն օր բժշկելու համար: Բացի դրանցից և նախևառաջ՝ մեր հոգիների համար դեղ է Քրիստոսի մշտական պատարագումը, քանզի մեր՝ ամեն օր գործվող հանցանքների պատճառով Քրիստոսը միշտ պատարագվում է դրանց քավության համար: Խաչի վրա մի անգամ պատարագվելով չբավարարվելով՝ մշտապես<sup>6</sup> սուրբ Պատարագի միջոցով բոլոր եկեղեցիներում միևնույն զոհաբերությունն է մատուցում Աստծուն՝ կենդանի և մահացած հավատացյալների համար: Քանզի եթե այնտեղ՝ վերևում, բարձր խաչի վրա, աշխարհին քավություն շնորհեց, նույնը նաև սուրբ Պատարագի միջոցով մշտապես<sup>7</sup> կշնորհի: Այդ իսկ պատճառով պարտավոր ենք այդ ժամին հաստատուն հավատով և մեծ հույսով, ահուդողով կանգնել Աստծո առջև՝ կերակուրներն ու ըմպելիքները չափավորած և մեր կարողության չափով կարոտյալներին ողորմություն տված լինելով, խոստովանելով Աստծուն Նրա կամքին հակառակ գործած մեր մեղքերը, և արտասավից ջերմեռանդ պաղատանքներով ու սուրբ Պատարագի միջոցով քավություն հայցել, որպեսզի ամենողորմ Աստված Իր Միածնի՝ մեզ համար կատարված մահվամբ մաքրի մեզ մեղքերից, ազատի բոլոր պարտքերից և ամրացնելով ու պարսպելով մեզ սուրբ Խորհրդով՝ թշնամուց անորսալի դարձնի, ինչպես նաև ահարկու՝ նրա աչքին, մանավանդ՝ որպեսզի զորացնի մեզ, որ նրա գլուխը տրորենք և նրանից անվնաս մնանք: Այսպիսով նաև Աստծուն ուղղված մեր մտքի ճանապարհորդությունն անարգել ընթացք կունենա, և մեր

---

<sup>6</sup> Բնագրում «օր ըստ օրէ», որ կարող է թարգմանվել նաև «ամեն օր»:

<sup>7</sup> Տէ՛ս նախորդ ծնթ.:

միտքը, այնտեղի բարիքներով այստեղ իսկ բերկրելով, հույսով կլցվի և շարունակ ուրախ կլինի:

Բայց քանի որ բավարար չափով խոսվեց Սուրբ Գրքի ունկնդրության մասին, ուստի սկսենք մեկնաբանել բուն խորհրդրդի խոսքերը՝ մեզ օգնական ունենալով հենց Իրեն՝ Պատարագվողին:

Երբ սուրբ Խորհուրդը մերժենում է ահեղ Սեղանին, սարկավազն ասում է.

***4. Երախաներից, թերահավատներից և  
չապաշխարածներից ոչ ոք թող մոտ չկանգնի  
կամ չհաղորդվի սուրբ Խորհրդին:***

Հրամայում է, որ եթե մեկը ***երախա՞***<sup>8</sup> է կամ ***թերի է հավատքի մեջ***, կամ չի ապաշխարել իր մեղքերի համար, դուրս գնա: Քանզի երբ հացի ու գինու ընծաները սուրբ Սեղան են բարձրանում, բացվում են երկինքները, և երկնայինները երկիր իջնելով՝ շրջապատում են սրբարար Սեղանը: Այդ պատճառով էլ Ավագանով չսրբվածներին և ապաշխարությամբ չմաքրվածներին, ինչպես նաև նրանց, ովքեր չեն հաստատված ***հավատքի*** մեջ, քարոզը դուրս է հրավիրում:

***Ահով կանգնենք Աստծո սուրբ Սեղանի առջև:***

Քարոզն ասես քնից արթնացնում է մեզ՝ խորանը (սեղանը) ***Աստծո սեղան*** կոչելով, քանզի այն գտնվում է ***Աստծո*** առջև և իր վրա բազմած ունի ***Աստծո*** Որդուն: Այս պատճառով էլ պատվիրվում է ***ահով կանգնել*** ս. Սեղանի ***առջև***:

***Առանց գայթակղության խղճմտանքի:***

***Գայթակղության խղճմտանքը*** մեղքով սայթաքածին է վերաբերում, ով եթե մեղքի պատճառած խղճմտանքը խոստովանությամբ չի

---

<sup>8</sup> Երախա- չմկրտված:

հանել իր սրտից, թող ահավոր այս ժամին սուրբ Սեղանի առջև չկանգնի:

***Առանց խորամանկ նենգության:***

***խորամանկ նենգությունն*** այն է, որ ձևացնում են, թե սեր ու խաղաղություն ունեն եղբայրների նկատմամբ, բայց իրենց մեջ նենգությամբ չարություն են խորհում: Աստվածային խորհուրդն այսպիսիներին չի ընդունում, այլ դուրս է հանում:

***Առանց խաբեության պատրանքի:***

Բազմադիմի են ***խաբեության պատրանքները*** թե՛ Աստծո և թե՛ մարդկանց նկատմամբ: Նախևառաջ, երբ հավատքի մեջ չարափառ լինելով՝ ուղղափառ են ներկայացնում իրենց կամ մեղավոր լինելով՝ արդար ձևանում, կամ մարդկանց աչքին իրենց ցույց տալիս՝ իբր սիրով լեցուն են, պարզամիտ, երբ իրականում այդպիսին չեն, և ուրիշ այսպիսի խարդախություններ, ստեր ու խաբեություններ են թույլ տալիս ցույց տալով իրենց այն, ինչ չեն: Այսպիսիներին հեռու է վանում Տերը՝ ասելով. «Չեռացե՛ք Ինձանից դուք ամենքդ, որ անօրենություն եք գործում» (*Մատթ. է 23*):

***Առանց թերահավատության երկմտության:***

***Թերահավատության երկմտությունն*** այն է, որ մեկը երկմիտ ու թերահավատ է գտնվում սուրբ Ավետարանի ընթերցանությունից հետո արտասանվող «Հավատքի խոստովանության» որևէ կետի հանդեպ կամ չի հավատում, թե սուրբ խորհուրդն Աստծո մարմինն ու արյունն է, կամ նրա մեջ եղած հույսը որևէ կերպ նվազել է: Այսպիսի մեկին նախ աղոթքներով ու Սուրբ Գրքի խրատներով պետք է դաստիարակել, քանի որ, ինչպես գրված է, նախ պետք է մաքրվել և ապա՝ Մաքուրին մերժենալ<sup>9</sup>:

<sup>9</sup> Այս գաղափարը լայնորեն արտացոլված է Հնգամատյանում, առավելապես «Ղևտացիների» գրքում: Ս. Հովհան Մանդակունի կաթողիկոսը նույնպես գրում է, որ ս. խորհրդին մերժեցողը «պետք է, ըստ մարդկանց տկարության չափի, այնպես

**Այլ ուղիղ վարքով:**

**Ուղիղ վարքն** այն է, որի մասին պատվիրանն ասում է, թե՛ «Զշեղվեք ո՛չ աջ, ո՛չ ձախ» (*Բ Օրենք Ե 32*):

**Պարզ մտքով:**

Այսինքն՝ ներկայանալ այնպիսին, ինչպիսին կաս:

**Միամիտ սրտով:**

Այսինքն՝ Աստծո ու մարդկանց նկատմամբ ողջմտությամբ և մտքով չշեղվելով:

**Կատարյալ հավատքով:**

Սա՛ է **կատարյալ հավատքը**. Ճանաչել Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն իբրև երեքանձնյա մի Աստվածություն՝ Նրանց միջև չընդունելով առավելություն կամ նվազություն, առաջագունություն կամ հետնություն, այլ միանգամայն հավասար են, ամեն ինչում միաբան, և միևնույն բնությամբ: Հայրը՝ ծնող, Որդին՝ ծնունդ, իսկ Հոգին՝ ոչ թե ծնունդ, այլ բխում, Երեքն էլ՝ անժամանակ, և Որդին ու Սուրբ Հոգին՝ ի սկզբանե Հոր հետ: Որդին անձառապես և առանց փոփոխման մարմնացած՝ Մարիամից, Նույն Ինքը՝ ճշմարիտ Աստված և կատարյալ մարդ, Ով, որպես Աստված, Իր Աստվածության գորությունը ցույց տվեց և որպես մարդ՝ միավորված բնությամբ՝ մարդկային կրքերն առանց մեղքի կրեց: Նույն Ինքը խաչին ու մահվանը համբերեց և երրորդ օրը հարություն առավ՝ վերացնելով մեզ վրա եղած անեծքը, մեղքը և մահը: Մեր մարմնով համբարձվեց երկինք և գալու է ողջերին ու մեռածներին դատելու և յուրաքանչյուրին ըստ նրա գործերի հատուցելու՝ արդարներին հավիտենական կյանք տալով, իսկ մեղավորներին՝ հավիտենական

---

մաքուր լինի, ինչպես Նա է մաքուր, և ապա՝ մերձենա» (տե՛ս Ճառք, Վեներտիկ 1860, էջ 166):

տանջանք: Խոստովանել նաև մկրտությունը որպես Սուրբ Հոգով վերստին ծնունդ՝ երկնավոր Հորը որդեգրվելու համար: Հավատալ նաև, որ փրկագործական Խորհուրդն իսկապես՝ Քրիստոսի մարմինն ու արյունն է, որով միանում ենք Քրիստոսին և Նրան ժառանգակից դառնում:

Այս **հավատով է**, որ կարող ենք **կատարյալ** լինել:

***Լցված սիրով:***

Այսինքն՝ աստվածասիրությամբ լի և եղբայրասիրության մեջ անթերի:

***Ամեն տեսակ բարի գործերով առավել դարձած:***

Աստվածասիրությունից ու եղբայրասիրությունից ավելի մեծ բարիք չկա:

***Կանգնենք Աստծո սուրբ Սեղանի առջև:***

Սարկավազը վերստին հիշեցնում է **Աստծո Սեղանի առջև կանգնելու** մասին, որպեսզի քարոզն առավել երկյուղով ավարտի:

***Եվ ողորմության արժանանանք մեր Փրկչի հաջորդ գալստյան և հայտնության օրը:***

Հիշեցնում է նաև Քրիստոսի ահավոր գալստյան մասին, որպեսզի անպատրաստ չմոտենանք աստվածային Սեղանին: Քանզի եթե խղճմտանքով կանգնենք, մեծապես կհանդիմանվենք՝ աղտեղի հանդերձներով հարսանիքին մասնակցողի նման (*հմմտ. Մատթ. ԻԲ(22) 11*): Իսկ եթե աղտը լվանանք և հարսանիքի պատմուճան հագնենք՝ համաձայն քարոզի խրատի, ապա այն Օրը ողորմության կարժանանանք և Քրիստոսի ողորմությամբ Նրա բարիքները կվայելենք: Քանզի եթե անգամ արդար գործերով ենք լցված, ապա պարզևերն Աստծո ողորմությամբ ենք ստանում, որը շատ ավելին է, քան մեր գործերը:

Այնուհետև սարկավազը աղոթքով փակում է քարոզը.

***Ամենակալ Տեր Աստված մեր,  
ապրեցրո՛ւ և ողորմի՛ր մեզ:***

Եթե ողորմությամբդ օգնություն չստանանք, չենք կարողանա այնպիսի մաքրություն ստանալ, որ միանանք Քեզ, բայց ողորմությանդ շնորհիվ արժանի կրառնանք և կհասնենք հավիտենական կյանքին:

Աղ ո թ ք

***5. Տեր Աստված զորությունների և  
Արարիչ բոլոր ստեղծվածների:***

Այլ աղոթքների պարագային բազմիցս ասել ենք, որ **Տեր** անունը տիրելու պատճառով է ասվում, իսկ **Աստվածը**՝ ստեղծելու և ստեղծվածներին այս երկրի վրա հաստատելու: **Չորությունների**, այսինքն՝ հրեշտակների տերն Աստված է, քանզի ոչ միայն երկրի ու նրանում գտնվողների Տերն է, այլև երկնքի և երկնայինների, ինչի մասին մարգարեն ասում է. «Օրհնեցե՛ք **Տիրոջը**, Նրա բոլոր հրեշտակներ, զորությունների՝ զորքեր, որ կատարում եք խոսքը Նրա» (*Սաղմ. ՃԲ(102) 20*): Եվ **Արարիչ բոլոր ստեղծվածների**, այսինքն՝ ինչ որ ստեղծված է, այդ ամենը Քո հրամանով է հաստատված: Բայց նրանք, ովքեր սա ասում են և սա լսելուն արժանանում, թող իմանան, որ կանգնած ենք Նրա առջև, Ում սպասավորները հոգեղեն ու հրեղեն զորքերն են: «Քանզի Նա ասաց, և ստեղծվեցին, հրամայեց, և հաստատվեցին» (*Սաղմ. ԼԲ(32) 9*):

***Որ անէությունից ստեղծեցիր բոլորին  
և տեսանելի դարձրիր:***

**Անէությունից**, այսինքն՝ անզոյությունից, **բոլորին**, այսինքն՝ ամենքին, **տեսանելի**, այսինքն՝ զգալի ու երևացող, **ստեղծեցիր**, այսինքն՝

գոյացրիր այն բաները, որոնք չկային, ոչինչն ինչ դարձրիր, անգոյը գոյության կոչեցիր, այն, ինչ չկար, տեսանելի դարձրիր: Այս խոսքերը սակավ են, բայց նրանց իմաստը՝ անհասանելի: Ոչ երկինքներն ու երկինքների երկինքը կային, ոչ վերնայինների զանազան ու անթիվ բազմությունները, ոչ արեգակը, ոչ լուսինը, ոչ աստղերը, ոչ օդը, ոչ ամպերը, ոչ անձրևները, ոչ երկիրը, ոչ կրակը, ոչ աղբյուրները, գետերն ու ծովերը, ոչ տեսակ-տեսակ բույսերը, ծառերն ու սերմերը՝ յուրաքանչյուրն իր հոտով, ծաղկով, պտղով ու համով, ոչ բազմատեսակ անասունները, զազանները, սողունները, թռչուններն ու ձկները, ոչ թանկարժեք ու պիտանի նյութերը՝ ոսկին, արծաթը, փայլփլուն քարերը, երկաթը, պղինձը, կապարը, ապակին և սրանց նմանները, ոչ ճարպի աղբյուրները կամ աղաբեր ջրերն ու լեռները. այլ սրանք և բոլոր մյուս գոյությունները ոչնչից ստեղծվեցին Աստծո կամքով, և այսպիսով արարածները նյութականացան ու տեսանելի դարձան: Այն պատճառով նախ գոհության այս ձևը դրվեց, որ ամեն ինչի համար սուրբ Պատարագի միջոցով գոհանանք և սարսելով ամենագոր ու ամենաստեղծ Տիրոջից՝ մեծ ահով Նրա առջև կանգնենք, մեր աղոթքները մատուցենք և սուրբ Խորհրդրդին կատարյալ սրբությամբ մոտենանք:

*Որ մարդասիրաբար պատվելով նաև մեր հողեղեն բնությունը՝  
մեզ այսպիսի ահավոր և անպատմելի  
Խորհրդի սպասավոր կարգեցիր:*

**Հողեղեն** է անվանում մարդկային **բնությունը**, քանզի մարմինը հողից ստեղծվեց: **Պատիվ** է կոչում քահանայությունը և **մարդասիրաբար** է ասում, քանզի Աստված սիրեց մարդկանց և այն պատիվը շնորհեց, որին նույնիսկ հրեշտակները չարժանացան: **Անպատմելի** ու **ահավոր** է անվանում սուրբ Խորհուրդը: **Անպատմելի** է, քանզի խոսքով չի պատմվում նրա էությունը, և **ահավոր** է ահեղ փառքի պատճառով, քանի որ անմարմին հրեշտակներից և մարմնավոր սրբերից նրանց համար, ովքեր տեսնում էին, այն անհասանելի ու



ահեղ խորհուրդ էր: Բայց թե ինչպիսին է, ոչ ոք չտեսավ. «Քանզի Աստծուն ոչ ոք երբեք չի տեսել» (*Հովհ. Ա 18*): Արդ, քանի որ Մարմինն Աստծո Որդի է, ապա բոլոր բնությունների համար անտեսանելի Աստված է, Ով և սպասավորվում է հողեղենների կողմից:

Աստծո մեծության մասին նախ վերին զորքերին տիրելու պատճառով ասվեց, ապա՝ արարչության, իսկ այստեղ էլ՝ *անպատմելի* ու *ահեղ* փառքի պատճառով է ասվում: Ուրեմն՝ քանի որ այդպիսին ես, Քո բարերարության ու սիրո պատճառով մեզ՝ հողեղեններիս, այնքան պատվեցիր, որ մինչև անգամ այս անձառ *խորհրդի սպասավոր* դարձրիր: Ասում ենք սա Հորը՝ Քրիստոսին Նրան պատարագ մատուցելով, ինչի մասին աղոթքն ասում է.

***Դու, Տեր, Ում մատուցում ենք այս Պատարագը,  
ընդունիր մեզանից մեր այս ընծայաբերությունը:***

**Պատարագ** կոչվում է ընծան: **Դու, Տեր** ասում ենք Հորը, Ում մենք՝ մարդիկս, այսպիսի զոհաբերություն ենք **մատուցում**, որն այստեղ կոչվում է **այս Պատարագը**: «Դու,- ասվում է, - քանի որ սովոր ես **ընդունել**, այժմ նաև մեզանից ընդունիր Այն, Ինչը Քո առջև դրեցինք»:

Բոլոր պատարագամատույցներում առաջին աղոթքը Պատարագը մատուցողի արժանավոր դառնալու համար է և հետևյալ միտքն ունի. աղաչում է մատուցողին խոտան չհամարել՝ ասելով. «**ընդունիր մեզանից**», այսինքն՝ ինչպես որ մեծարեցիր մեր բնությունը և ընդունում ես մարդկանց կողմից Քեզ այսպիսի **պատարագ** մատուցելը, նույնն արա նաև մեզ համար՝ անտեսելով մեր գործած հանցանքները:

Մշտապես, բայց առավելապես այս ահեղ Խորհրդի ընթացքում, մեր հանցանքները մեր առջև պետք է լինեն, և հիշվեն մեր կատարած սխալ գործերը: Սխալների ու մեր բնության անարգության հիշմամբ մեր ամբողջ հպարտությունը հեռու գցենք, քանզի եթե Աբրահամ նահապետը, ով իր մեջ ոչ միայն որևէ խղճմտանք չուներ, այլև իր բոլոր արդար գործերին Աստծուն իբրև վկա ուներ, Աստծո հետ խոսելիս միշտ իրեն ցույց էր տալիս ոչ միայն իբրև հող, այլև մոխիր (*հմմտ. Ծննդ. ԺԸ(18) 27*), ապա որչափ առավել մենք՝ մեղավորներս, մեղքին ենթակա բնություն ունենալով, պետք է խոնարհվենք, քանզի «Աստծուն մատուցված զոհը խոնարհ հոգին է», ով նախ խոնարհվելով ու սիրտը չարիքների խղճմտանքից մաքրելով՝ իրեն պատարագ է մատուցում Աստծուն, իսկ «մաքուր սիրտն ու խոնարհ հոգին Աստված չի արհամարհում» (*հմմտ. Սաղմ. Ծ(50) 19*):

***Եվ ավարտին հասցրու սա որպես Քո Միածնի  
մարմնի ու արյան խորհուրդ:***

**Ավարտ** սովոր ենք կոչել որևէ բանի լրումը: Ասում ենք, որ սրա լրումն Աստծո Որդու **մարմին ու արյուն** դառնալը թող լինի: Այն նաև Աստծո **խորհուրդն** է, որը հայտնել է ու հայտնում է Իր սրբերին, իսկ պիղծերից ծածուկ է պահվում, որպեսզի սրբությունը շներին չտրվի, մարգարիտը խոզերի առջև չզցվի ու ոտնատակ չլինի (*տե՛ս Մատթ. Է 6*): Այդ պատճառով այս Խորհուրդն անհավատներին իզուր չտանք, որ նրանց կողմից չծաղրվենք, այսինքն՝ որպեսզի չկսկծանք մեր սրտում. «Որովհետև կորստյան մատնվածների համար խաչի ճառը հիմարություն է» (*Ա Կորնթ. Ա 18*): Նաև՝ **Միածին** բառն աննպատակ չի օգտագործվում Որդու համար, այլ որպեսզի հիշենք, թե ինչպիսի՛ սեր գտանք Աստծուց, որ Նրա միակ Որդին՝ միակ Ծնունդը, պատարագվեց մեզ համար:

***Այս հացն ու գինին որպես մեղքերի թողության դե՛ղ պարզկիր  
ճաշակողներիս՝ շնորհով ու մարդասիրությամբ  
մեր Տիրոջ և Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի:***

Քանի որ կերակրով մեղանչեցինք ու մահկանացու դարձանք, Քրիստոսի չարչարանքները դարձյալ կերակրով մեզ պարզեցին քավություն ու անմահություն: Սեղանի վրա դրված այս հացի ու գինու համար աղաչում ենք, որ Քրիստոսի մարմինն ու արյունը լինելով՝ Այն մեզ համար քավիչ լինի և ողջերի ու մեռածների համար՝ փրկիչ: Իսկ սա Քրիստոսի սիրո շնորհիվ է լինում, Ով մեռավ մեզ համար, և սա **շնորհ ու մարդասիրություն** է կոչվում: Քանզի ոչ ոք անսխալական չէ, և բազում են այն մեղքերը, որ անգիտությամբ ենք գործում, բայց նրանք, ովքեր խոստովանում ու ապաշխարում են, սուրբ Խորհրդի միջոցով **քավություն** են ստանում և վերստին Քրիստոսին միանում՝ դառնալու Նրա մարմինն ու անդամները: Եվ այս պատճառով ենք այդ մեծ **դեղը** կամենում:

***Ում հետ Քեզ՝ ամենակալ Հորդ,  
Կենդանարար ու ազատիչ Սուրբ Հոգով հանդերձ,  
վայել են փառք, իշխանություն և պատիվ:***

***Ամենակալ*** է կոչում Հորը, քանզի Նա Իր իշխանության տակ ունի երկինքն ու երկիրն իրենց ամբողջությամբ: ***Կենդանարար ու ազատիչ*** է կոչում ***Սուրբ Հոգուն***, քանզի Մկրտության ավագանը Նրա միջոցով մեզ վերստին ծնում է Աստծուն որդիանալու համար՝ ազատելով մեղքերից ու կենսագործելով անմահական կյանքի համար: Նա է նաև սուրբ Խորհուրդը ***Կենդանարար ու ազատիչ*** դարձնում, այլև հարությամբ մեզ հանդերձյալ նորոգությունն է շնորհելու: Այս իսկ պատճառով բարերար Սուրբ Երրորդությանը, ասում է, ***վայել է փառատություն. Նրան վայել են փառք, իշխանություն և պատիվ***

***այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից:***

Ք ա Ր ո Վ

***6. Ողջուն տվեք միմյանց սուրբ համբույրով:***

***Սուրբ համբույրն*** այն է, որը մաքուր սիրով է և ոչ թե նենգավոր ու պոռնկական խորհրդով, այլ եղբոր նկատմամբ մաքուր մտքով:

***Դուք, որ չեք կարող Սուրբ Խորհրդին հաղորդվել,  
միմյանցից սովորե՛ք ու դռան մոտ աղոթե՛ք:  
Քրիստոսը պատարագ է մատուցվում:***

Եվ քանի որ ***Քրիստոսն*** է պատարագվում, հոգով անմաքուրներն ու աղտեղիները թող դուրս գան, քանզի արժանի չեն հոգևոր ուրախությունը վայելելու: Թող Սուրբ Գրքով խրատեն միմյանց և ***դռան մոտ աղոթեն***, սգացող սրտով ու ջերմեռանդ արտասուքով ողբան այդ գրկանքի համար, քանզի հոգևոր հարսանիքից դուրս վննդվեցին. այն ահավոր ժամին արժանի չեղան ո՛չ երկնավոր Սեղանին մերձենալու, ո՛չ այնտեղ գումարված հրեշտակներին երգակցելու և ո՛չ էլ սուրբ Խորհրդի միջոցով ***Քրիստոսին*** միանալու և Նրանով մի հոգի դառնալու: Արդ, նրանք, ովքեր այս մտածումով են դուրս գալիս, իրենց սխալները երկյուղով ու ամոթով խոստովանելով Աստծո առաջ, Քրիստոսի պատարագման միջոցով թող հաշտություն հայցեն ամենողորմ Աստծուց և իսկույն քավություն կստանան: Իսկ այն անզգամները, Աստծո երեսից վննդվածներն ու սրբություններից մերժվածները, ովքեր զղջման չեն գալիս, այլ սա սովորական բան համարելով՝ ուրախությամբ դուրս գալիս ու անտրտում են մնում, չբարկացող Աստծուն է՛լ առավել են մղում բարկանալու: Քանի որ ամենևին հոգ չարեցին ոչ պատժվելու, ոչ մաքուրներից զատվելու և ոչ էլ Աստծուց հեռացվելու համար, ուստի իրավամբ են դատվում:

***Ահով կանգնենք, երկյուղով կանգնենք,  
և նայե՛ք զգուշությամբ:***

Քանզի եթե անմարմին զորքերը, որոնք ամբողջությամբ սուրբ են, սկզբից մինչև այժմ երկյուղալից ***ահով*** են կանգնած Աստծո մեծ փառքի առջև, ապա որքան առավել մենք, որ շարունակ հանցանքներ ենք գործում, պարտավոր ենք դողալ ու սարսափել: Իսկ ի՞նչ է նշանակում ***զգուշությամբ նայելը***. այն, որ ովքեր ներսում են մնում, թող ***չնայեն*** Խորհրդին լոկ իբրև հացի ու գինու, այլ

հավատան, որ առջևում դրվածը Աստծո մարմինն ու արյունն է, և մեծ **ահով կանգնեն** ու իբրև Աստծո՝ նայեն: Սրան հաջորդում է հետևյալ տունը, որն ուսուցանում է.

***Քրիստոսը՝ Աստծո Գառը, մեր մեջ  
պատարագ է մատուցվում:***

Սա՛ է, որից հրամայում ենք երկնչել ու դողալ: Քանզի Նա, Ով կուսական արգանդում Մարիամից մարմին առավ և բովանդակ Աստվածությանը միացավ այդ մարմնին, այժմ նույն ձևով հացին ու գինուն է միանում: Եվ Նա, Ով խաչի վրա անշնչացավ, նաև այս Սեղանի վրա, Աստվածությանը կենդանի մնալով և նույն մարմնական մեռելությունն ու զոհաբերությունը ցույց տալով, Սուրբ Երրորդությանը **պատարագ է մատուցվում** որպես տրված պարգևների համար գոհություն, գործված մեղքերի քավություն, առաջիկայում փրկություն և հանդերձյալ կյանքում՝ ողջերի ու մեռածների համար բարեխոսություն: Հին Օրենքում սրա խորհուրդն ուներ անասունների զոհաբերությունը, որոնց մի մասը գոհության նվեր էր, մի մասը՝ քավության, մի մասն էլ՝ փրկության, որոնք միասին **Պատարագի** այս մեծ խորհրդի մեջ են բովանդակված: Արդ, այս տնից առաջ<sup>10</sup>, երբ հրամայում է **զգուշությամբ նայել**, խորանի առջև կանգնածներն<sup>11</sup> ասում են.

***Քե՛զ, Աստված:***

Այսինքն՝ Քեզ ենք նայում ու հավատում ենք, որ այս Ղնծան Քո անապական Աստվածությանն ես փոխարկում: Իսկ նախորդ տնից հետո<sup>12</sup> ասում են.

---

<sup>10</sup> «Ահով կանգնենք, երկյուղով կանգնենք, և նայե՛ք զգուշությամբ» խոսքից հետո:

<sup>11</sup> Նկատի ունի հավատացյալ ժողովրդի անունից երգող դարաց դասը:

<sup>12</sup> «Քրիստոսը՝ Աստծո Գառը, մեր մեջ պատարագ է մատուցվում» խոսքից հետո:

***Ողորմություն, խաղաղություն  
և օրհնության պատարագ`***

ցույց տալով մեր կողմից ասվածը: ***Ողորմություն*** է, որովհետև քավում է մեղքերը: ***խաղաղություն*** է, որովհետև փրկություն ու խաղաղություն է շնորհում հոգուն ու մարմնին, ինչպես որ նաև հին պատարագներից մի քանիսը «խաղաղական» են անվանվում: Իսկ ***օրհնության պատարագ*** է, քանի որ ընծայվում է Աստծուն որպես գոհություն` ի սկզբանե մեր նկատմամբ գործած Նրա բոլոր երախտիքների համար, և սուրբ Պատարագով ***օրհնում ենք*** Աստծուն ամեն ինչի համար, ինչպես ցույց են տալիս պատարագամատույցների խոսքերը:

***7. Հոր, Որդու և Սուրբ Հոգու շնորհը, սերն ու  
աստվածային սրբարար գորությունը թող լինեն  
ձեզ բոլորիդ հետ:***

Սա նույնն է, ինչ Պողոսը գրեց կորնթացիներին. «Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը, Աստծո սերը և Սուրբ Հոգու հաղորդությունը ձեզ բոլորիդ հետ լինեն» (*Բ Կորնթ. ԺԳ(13) 13*): Պատարագ մատուցողը սա` է փոխանցում ժողովրդին. այն, ինչ Քրիստոսի տնօրինությամբ քավություն եղավ և որպես պարգև շնորհվեց, և Հայր Աստծո սերը, որ որդեգրեց հավատացյալներին, ինչպես նաև Հոգու կցորդությունը, որ սրբերի հետ է, ***թող ձեզ հետ լինեն***, որպեսզի մաքրվելով, Աստծո ***սիրուն*** միանալով ու ***Սուրբ Հոգուն*** հաղորդվելով` երկնային առագաստում անմահ Փեսայի հետ լինենք: Ապա մոտ կանգնածները ոչ թե այնպես են ասում, ինչպես աղոթքների ընթացքում պատարագչի «խաղաղություն ամենքին» խոսքից հետո, երբ ասում են. «Նաեւ քո հոգուն», այլ`

***Քո Հոգուց:***

Քանզի ինչպես յոթանասուներկու ծերերին Հոգին տրվեց Մովսեսի ***Հոգուց*** (*Թվեր ԺԱ(11) 25*), այդպես էլ ***քո Հոգուց*** թող մեզ պարգևվի,

որ Մովսեսի նման Աստծո առաջ մտնելով՝ մեր գոհությունն ու մաղթանքներն ես մատուցում:

***Քարծրացրե՛ք ձեր սիրտը  
դեպի աստվածային այս խորհուրդը:***

Քանզի թեպետև այս պատարագումը երկրի վրա է կատարվում, բայց իրականում երկնքում է, ինչ պատճառով էլ աստվածային Պողոսը գրում է. «Վերինը խորհեք և ո՛չ թե այն, ինչ այս երկրի վրա է» (*Կողոս. Դ 2*):

Ի պատասխան սրա ասում են.

***Դեպի Քեզ ենք բարձրացնում,  
ամենակալ՝ Տեր:***

Այսինքն՝ ***ամենակալ՝ Տեր***, մեր հոգին դեպի Քեզ բարձրացրինք. որպես թե Հոգին սրտում է բնակվում և այնտեղից ներգործում ամբողջ մարմնի վրա:

***Եվ ամբողջ սրտով գոհացե՛ք Տիրոջից:***

Քանի որ կամենում է ***գոհաբանությունները*** սկսել, ուստի խրատում է ամենքին ***գոհության*** խոսքից հետո ***սիրտն*** ամբողջովին վեր բարձրացնել և ***գոհություն մատուցել*** Աստծուն: Ի պատասխան դրա՝ ժողովուրդն ասում է.

***Վայել է և իրավացի:***

Այսինքն՝ Նրան ***վայել*** է գոհություն մատուցել, և ***իրավացի*** է Նրա բարերարությունների համար գոհանալ, քանզի պարտապան ենք:



Քահանայի ծածուկ ասվող աղոթքի մեկնությունը

**8. Քեզ, Աստված, որ էիր և ես և լինելու ես,  
անսկիզբ ու անքննելի, Եռյակ Միություն, ստուգապես վայել է  
և իրավացի՝ փութեռանդ ջանասիրությամբ  
միշտ երկրպագել փառավորելով:**

Ժողովրդի խոսքի համաձայն քահանան կրկնում է, թե **ստուգապես վայել է և իրավացի**, այսինքն՝ «Ճշմարտապես իրավացի է»:  
**Փութեռանդ ջանասիրությամբ. ջանասիրությունն** ի սրտե հոգ տանելն է, իսկ «փութեռանդ ջանասիրություն» ասելով՝ հոգու սաստիկ ջերմեռանդությունը նկատի ունի, երբ մեկն ամբողջ սրտով, զորությամբ և մտքով մղվում է **ջանք թափելու**՝ ըստ Պողոսի խրատի. «Ջանասիրության մեջ՝ ո՛չ վեհերոտ, Հոգով եռացե՛ք» (*Հռոմ. ԺԲ(12) 11*): Արդ, այսպես պետք է քո երկրպագությանը վերաբերվես:

**Աստված, որ էիր և ես և լինելու ես:**

Որ հավիտյաններից առաջ կայիր, այժմ էլ կաս և լինելու ես հավիտյանս հավիտենից:

**Անսկիզբ:**

Այսինքն՝ լինելության **սկիզբ** և պատճառ չունես, և՛

**Անքննելի:**

Քանզի Քո որպիսությունը ոչ հրեշտակների և ոչ էլ մարդկանց կողմից չի քննվում կամ բացահայտվում:

**Եռյակ Միություն:**

Այսինքն՝ Երեք Անձինք և Աստվածային մի բնություն: Քեզ, ասում է, **անսկիզբ** ու **անքննին** միասնական Երրորդությանդ, **վայել է փութեռանդ ջանասիրությամբ միշտ երկրպագել փառավորելով**: Եվ թե ինչն է Նա այսպիսի **ջանասիրությամբ փառավորելի** ու երկրպագելի, խոսքն ուղղելով Հորը՝ պատարագիչն ասում է.

**Որ Քո անքննելի ու արարչակից խոսքի միջոցով, Հայր, անեծքի արգելքը վերացրիր:**

*խոսք* է անվանում Որդուն, քանզի անախտ ծննդյամբ *Հորից* է, ինչպես խոսքը՝ մտքից, և Հոր կամքն է հայտնում, ինչպես խոսքը՝ խոսողի կամքը: Եվ ինչպես խոսքը մի ձայնով շատերի մեջ ոչ թե մասամբ, այլ ամբողջությամբ է մտնում, այդպես էլ Անմարմինը մարմնացավ, տեսանելի դարձավ և շոշափվեց՝ այն խոսքի նմանությամբ, որը թղթի վրա մարմնավորվում և տեսանելի ու շոշափելի է դառնում, և անբաժանելի է Ծնողից, ինչպես որ խոսքն էլ, ուրիշների ականջին հնչելով հանդերձ, խոսողի մտքում է մնում: *Անզննելի* է ասվում, քանզի Աստծո բնությունն անըմբռնելի ու անշոշափելի է: *Արարչակից* է, քանզի արարչագործությունն ամբողջ Երրորդությանն է պատկանում: Եվ քանի որ պատվիրանազանցությամբ, իբրև *արգելք*, անեծք դրվեց մեր և Աստծո միջև, այսինքն՝ արգելք ստեղծվեց և բաժանեց մեզ Աստծուց, դրախտից ու հավիտենական կյանքից, ուստի Աստված, ողորմելով մեզ, վերացրեց *անեծքի արգելքը*: Եվ այդ արեց ոչ թե հրամանի կամ հրեշտակի, կամ սուրբ մարդու, այլ Իր *արարչակից* Որդու միջոցով, ինչն ավելի մեծ պատիվ է, քան անեծքի վերացումը, այսինքն՝ որ Որդու միջոցով այն վերացրեց:

*Ով Եկեղեցում գտնվող Քեզ հավատացողներին  
Իր սեփական ժողովուրդը դարձրեց:*

*Սեփական* է կոչում մերձավորին ու չհակառակողին: Ասում է՝ մոտեցրեց-դարձրեց մեզ Իր իսկական *ժողովուրդը*՝ Իր տերությունից անբաժան:

*Եվ տեսանելի բնությամբ, որ տնօրինաբար վերցրեց Կույսից,  
հոժարեց բնակվել մեր մեջ:*

Այս մասին է խոսում Հովհաննես Ավետարանիչը, երբ ասում է. «Խոսքը մարմնացավ և *բնակվեց* մեր մեջ» (*Հովհ. Ա 14*): Քանզի *անտեսանելի* է խոսքը, ինչպես սրանից առաջ ասվեց, իսկ Կույսից մարմնանալով՝ *տեսանելի* դարձավ, ինչպես Ընդհանրական թղթում

գրում է նույն Հովհաննեսը, թե՛ «Մեր ձեռքերը շոշափեցին Կյանքի Խոսքին» (*Ա Հովհ. Ա 1*):

**Տնօրհնությունը** գործառնությունն է. քանզի Աստծո Որդին հանձն առավ<sup>13</sup> սա անել, այսինքն՝ Կույսից մարդու որդի դառնալ: **Մեր մեզ բնակվելը** մեզ նման լինելն է ցույց տալիս, ինչի մասին Եսայի մարգարեն ասում է, որ Կույսից Ծնվածի անունը պիտի կոչեն Էմմանուել, որ նշանակում է «Աստված մեզ հետ է» (*տես Եսայի Է 14, Մատթ. Ա 23*):

***Եվ աստվածային նորագործ ճարտարապետությամբ  
երկիրը երկնքի վերածեց:***

Արդարև **նորոգեց**, քանզի երկիրը երկնքի վերածեց, որը միայն Աստծո **ճարտարապետությանն** է հնարավոր, որովհետև երկիրը նախ անգոյությունից գոյացրեց, այժմ էլ երկրից երկինք փոխադրեց: Իսկ թե ինչպես սա եղավ, աղոթքն ասում է.

***Քանզի Նա, Ում առջև չէին կարողանում  
հանդարտությամբ կանգնել զվարթունների գնդերը՝  
զարհուրելով Աստվածությանդ փայլակնացայտ ու ահեղ լույսից,  
մեր փրկության համար մարդանալով՝  
մեզ շնորհեց երկնայինների հետ հոգեղեն պար պարել:***

Տեսա՞ր, թե ինչպես **երկիրը երկինք** դարձավ: Քանզի երկինքների և հրեշտակների Տերը **երկիր** իջավ, **մարդացավ**, մարդկանց հրեշտակներ դարձրեց, վերին **գորքերին** ու մարդկանց միմյանց միացրեց և երկրայիններիս արժանացրեց երկրի վրա, երկնայինների հետ միաբան, նրանց օրհնությունը երգելու:

Բայց նախքան այս գեղեցիկ դրվագն ամբողջացնելը, պետք է նրա հրաշալի կառուցվածքի վրա ուշադրություն դարձնել, թե ինչպես է, մեկը մյուսի հետևից առաջ տանելով, Աստծո շնորհի

<sup>13</sup> «Հանձն առավ»-ը («ա՛ռ յանձն») վերաբերում է «գործառնություն» բառին («գործ առնել»-ուն). սրանց միջև իմաստային կապ ստեղծող բառը «առնել»-ն է (գրաբար «առնուլ»):

մեծությունը հույժ գերազանց ցույց տալիս: Եվ սա տես հենց սկզբում.

***Քեզ, Աստված, որ էիր և ես և լինելու ես, անսկիզբ ու անքննելի, Եռյակ Միություն, ստուգապես վայել է և իրավացի՝ փութեռանդ ջանասիրությամբ միշտ երկրպագել փառավորելով, որ Քո անքննելի ու արարչակից խոսքի միջոցով, Հայր, անեծքի արգելքը վերացրիր:***

Շատ մեծ էր պարզև՝ ***անեծքից ազատելը***, բայց առավել մեծ է այն, որ դա արեց Միածնի միջոցով, Ով Ինքն անեծք դարձավ և մեզ օրհնություն տվեց (*հմմտ. Գաղատ. Գ 13*): Եվ չբավարարվեց սրանով, այլ նաև անեծքի տակ գտնվողներին Իր սեփական ժողովուրդը դարձրեց: Իսկ սա շատ ավելին է, քան անեծքից ազատելը:

Մի ուրիշ առավելություն ևս կա՝ մեզ նման դառնալը և ***մեր մեջ բնակվելը***, որ շատ ավելի մեծ է, քան մեր՝ Նրա ***ժողովուրդ*** դառնալը: Իսկ սրանից էլ մեծ է ***այս երկիրը երկինք*** և մարդկանց հրեշտակներ դարձնելը: Եվ ի հավելումն այս ամենի՝ չափազանց բարձր է այն, որ այն երգերը, որոնք Նրան սպասավորող ***հրեշտակները*** մեծ ***երկյուղով*** հնչեցնում են, շնորհեց մեզ նրանց հետ համարձակորեն երգել՝ սպասավորությունը սիրով վստահելով մեզ՝ որպես Իրեն ազգակիցների և մարմնակիցների:

Այժմ մասնավորաբար քննենք աղոթքի մնացած խոսքերը.

***Ում առջև չէին կարողանում հանդարտությամբ կանգնել զվարթունների գնդերը:***

Զվարթուն են կոչվում վերինները՝ Աստծուն տեսնելու և Նրա բարեգութ խնամքով մշտապես զվարթության և ուրախության մեջ լինելու պատճառով: Նրանք, միմյանցից դաս առ դաս բաժանված, կարգված են Աստծուն սպասավորելու, և այդ դասերն այստեղ ***գնդեր*** են անվանվում: Իսկ ասվում է, թե Նրա ***առջև չէին կարողանում հանդարտությամբ կանգնել***, որովհետև Եսայի և Եզեկիել մարգարեները՝ մեկը սերովբեների և մյուսը՝ քերովբեների

որպիսությունը, որքան կարողացան ընկալել, պատմեցին մեզ՝ նրանց խիստ սարսափահար ցույց տալով: Եզեկիելը պատմում է, որ քերովբեներն իրենց թևերը տարածել էին իրենց գլուխների և ամբողջ մարմնի վրա, քանզի սաստիկ ահից, ասում է, թևերի տակ էին թաքնվել (*տես Եզեկ. Ա 23*): Իսկ Եսային պատմում է, որ սերովբեները նույնպես, իրենց երկու-երկու բաժանված վեց թևերով իրենց երեսն ու ոտքերը պաշտպանում էին աստվածային հրից և շարունակ վեր ցատկում սաստիկ ու ահավոր տեսարաններից՝ միմյանց ծածկելով ու երկյուղալից խոսքերով միմյանց ձայն տալով (*տես Եսայի Զ 2*): Այս պատճառով էլ ասվում է. ***չէին կարողանում հանդարտությամբ կանգնել, այսինքն՝ չէին դիմանում՝ զարհուրելով Աստվածությանդ փայլակնացայտ և ահեղ լույսից:***

Քանզի ***Աստվածության ահեղ լույսն*** անտանելի ***փայլատակումներ*** է արծակում և սոսկում, զարհուրանք ու վախ անդադար պատճառում նրանց:

***Մեր փրկության համար մարդանալով:***

Այսինքն՝ Նա, ով այդպիսի ***ահավոր*** և անտանելի փառք ուներ, մեզ փրկելու համար մարդացավ՝ Ինքը մեր աղքատության մակարդակին իջնելով, և մեզ Իր աստվածությունը շնորհեց: Սակայն այստեղ դա չի նշում, այլ այն, որ ***հրեշտակներին*** հավասարակից դարձրեց մեզ:

***Մեզ շնորհեց երկնայինների հետ հոգեղեն պար պարել:***

***Պարելը*** դասակցելն է: Ասում է՝ երկրայիններիս և հողեղեններիս կցորդակից դարձրեց ***երկնայիններին*** և հոգեղեններին: Սա շնորհով տրվեց և ո՛չ ըստ մեր արժանիքի, այսինքն՝ ներելով, ողորմածությամբ, անհիշաչարությամբ, քանզի ***շնորհեց*** ասելը սա է նշանակում:

***Սերովբեների և քերովբեների հետ***

***միաձայն սրբասացությամբ հորինել նվազներ:***

***Նվազը*** երգի անվանում է, ***միաձայնելը***՝ երգելը նույնը, ինչ նրանք են երգում, ***սրբասացությամբ***՝ նշանակում է ասել այն երեքսրբյան

օրհնությունը, որը **սերովբեներն** են երգում, և **հորինել**-ը նշանակում է երգն ըստ նրանց հորինվածքի կառուցել:

***Նրանց հետ համարձակորեն աղաղակել և ասել:***

Քանի որ փառքի Տերը դարձավ մեր եղբայրը, Ով առավել է, քան սերովբեները, ուստի մենք նրանց հետ կանգնելով՝ **սրբասացություններ** ենք երգում:

***Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ, Տե՛ր զորությունների:***

Երեք անգամ է ասվում «սուրբ»՝ համաձայն երեք Անձերի՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու, իսկ մեկ անգամ է «Տեր» ասվում, քանզի մեկ է երեքանձնյա Աստվածության տերությունը: **Տե՛ր զորությունների**, այսինքն՝ հրեշտակների, քանզի մեծ զորություն ունեն և երկնավոր թագավորի զորքն են:

***Երկինքն ու երկիրը լի են Քո փառքով:***

**Երկինքը**՝ երկնավորներով և **երկիրը**՝ երկրավորներով, Քո փառքն են գովաբանում ոչ միայն բանական ու մտավոր արարածների միջոցով, այլև բոլոր բնությունների, որոնք **Աստժո փառքն** իրենց գոյությամբ են պատմում:

***Օրհնություն բարձունքներում՝***

Հորը, Ում անվանում ենք «երկնավոր Հայր»: Թեպետ Նա միայն բարձունքներում չէ, այլ ամենուր, բայց քանի որ այնտեղ են բոլոր նրանք, ովքեր Նրա կամարարներն են, ուստի ասում ենք, թե Նա էլ է այնտեղ:

***Օրհնյալ ես, որ եկար և գալու ես Տիրոջ անունով:***

Որդուն է ասում, Ով եկավ փրկելու արարածներին և պիտի գա՝ դատելու մարդկային ցեղը: **Տիրոջ անունով**, քանզի Իր Հոր **անունով**

եկավ, ինչպես հենց ինքն ասաց. «Ես եկա իմ Հոր *անունով*» (*Հովհ. Ե 43*): Նաև Իրեն է *Տեր* անվանել և իսկապես *Տերն* է:

***Օրհնություն բարձունքներում:***

Այսինքն՝ երկնքում՝ Սուրբ Հոգուն, Ում էջքը Հորդանանում՝ Տիրոջ վրա (*Մատթ. Գ 16*) և վերնատան մեջ՝ առաքյալների (*Գործք Բ 1*), երկնքից ցույց տրվեց:

Ինչպես Հորը և Սուրբ Հոգուն, Փրկչին էլ ենք ասում *օրհնություն բարձունքներում*, մեր հանդեպ Նրա խոնարհվելու համար կամենում ենք *օրհնել* Նրան՝ մանուկների խոսքը հնչեցնելով: Քանզի ինչպես նրանք, ավանակի վրա Նրան տեսնելով, Դավթի խոսքը մեջբերելով (*տես Սաղմ. ՃժԷ(117) 26*), ասացին. «*Օրհնյալ է Նա, Ով գալիս է Տիրոջ անունով*» (*Մատթ. ԻԳ(23) 39*), այդպես և մենք, սուրբ Սեղանի վրա Տիրոջը տեսնելով, Նրա պատվական մարմնով ու սուրբ արյամբ *օրհնում* ենք Նրան:

***9. [Սուրբ, սուրբ սուրբ ես  
ճշմարտապես և ամենասուրբ]:***

*Ճշմարտապես*-ը ստույգ լինելն է ցույց տալիս, իսկ *ամենասուրբ*-ը՝ ամեն բանով *սուրբ* լինելը. իսկ այն, ինչ *սուրբ* է, փառավորված է, քանի որ ով առանց որևէ պակասության փառք ունի, *ճշմարտապես* և ամեն ինչով փառավորված է: Ըստ մեզ՝ «սուրբը» մաքուր է նշանակում, իսկ մեր երանելի վարդապետները, հրեշտակներից իմանալով, մեզ հայտնեցին, որ այս երգի մեջ «փառավորված» է նշանակում:

**Եվ ո՞վ կարող է պարծենալ, թե կարող է  
խոսքով բովանդակել մեր հանդեպ Քո ունեցած  
անչափ բարեգործության զեղումները:**

Ասում է՝ չկա մեկը, որ **պարծենալ, թե կարող է բովանդակել** և **խոսքով** ասել, այսինքն՝ ոչ ոք չի կարող պարծենալ, թե կպատմի, **մեր հանդեպ Քո բարեգործության** բոլոր արդյունքները, քանզի անբավ և անբովանդակելի են: **Գորովանքն** առավել է, քան գութը, որը ջերմ սիրով ու մեծ խանդաղատանքով ծնողները ցուցաբերում են զավակների հանդեպ, ինչը ոչ միայն մարդկանց, այլև հաճախ այլ կենդանիների մեջ էլ կարելի է տեսնել, ինչպես օրինակ՝ թռչունների, որոնց էր Տերը նմանեցնում Իրեն և Երուսաղեմը (*Մատթ. ԻԳ(23) 37, Ղուկ. ԺԳ(13) 34*):

Արդ, ասում է, որ մեր հանդեպ եղած անչափ բարերարությունների համար պարտավոր ենք գոհանալ ոչ միայն, որ դրանք առատ են, այլև՝ որ Տերը ջերմ սիրով, սաստիկ գութով ու անպատում **գորովով** զգվելով է, որ առատորեն պարգևեց բարիքները: Եվ քանի որ մեր բնությունն աղքատ էր և որևէ բան չուներ, որ Աստծուն ընծայի ու Նրա առջև դնելով՝ բարերարությունների համար գոհանա, այդ իսկ պատճառով Աստված չկամեցավ, որ մենք այս չքավոր վիճակի մեջ մնանք, և անկշռելի ու անեզրական սիրով պատրաստեց Իր Միածին Որդուն մեզ տալու, որպեսզի Նրանով հարստանալով՝ Նրան Աստծո առջև դնենք և Նրանով գոհանանք մեր հանդեպ եղած բարերարությունների համար: Այդ պատճառով, երբ Պատարագը Սեղանի վրա ենք հանում, սկսում ենք գոհանալ ի սկզբանե եղածների համար: Բայց այս խոսքը նախ խոստովանում է, որ ոչ ոք կարողություն չունի Աստծո կողմից մեր հանդեպ եղած բոլոր բարերարությունները խոսքով թվարկելու: Այնուհետև գոհություն է սկսվում.



***Որ հենց սկզբում՝ առաջին ժամանակներում,  
մեղքի մեջ ընկածին զանազան եղանակներով  
խնամելով սփոփեցիր:***

Ասում է՝ պես-պես խնամքներով մխիթարեցիր առաջին մարդկանց (ինչը ցույց է տալիս «*առաջին ժամանակներում*» խոսքով)՝ ***մեղքի մեջ ընկած*** բնությունը, քանզի ***սփոփել*** մխիթարել է նշանակում, ***զանազան***-ը՝ պես-պես, իսկ ***եղանակներով***-ը՝ ձևերով: Որովհետև երբեմն լավ ու պիտանի հայրերի երկարակեցությամբ էր արդարության ընթացքը սովորեցնում նրանց սերունդներին. երբեմն աստվածահաճո անձանց պատվում էր շնորհով, ինչպես Ենովքին՝ վերափոխմամբ (*Ծննդ. Ե 24*). և երբեմն էլ պատահում էր, որ հանցավորներին պատժում էր, ինչպես Կայենին (*Ծննդ. ԺԱ(11) 12*), ջրհեղեղյան սերնդին (*Է 21*) և սողոմայեցիներին, քանզի սա էլ է Աստծո խնամք՝ պատժելով թույլ չտալ, որ մեղքերը շատանան, և ուրիշներին նախազգուշացնել:

Դարձյալ՝ արդարների հետ ուխտ կապեց և նրանց փրկեց, ինչպես Նոյին (*Ծննդ. Ե 24*), Աբրահամին ու նրա զավակին (*ԻԲ(22) 17*), Դովտին (*ԺԹ(19) 29*), Հակոբին (*ԼԵ(35) 11*), բոլոր արդարներին և Իսրայելի որդիներին, ում փրկեց Եգիպտոսից, անապատում խնամեց և Օրենքը տվեց, նրանց միջից մարգարեներ ընտրեց, խոստացված երկիրը պարգևեց նրանց, ինչպես նաև քահանայություն ու թագավորություն տվեց, ողջակեզները, զոհերն ու ընծաները պարգևեց, որպեսզի մինչև ճշմարտության գալը ճշմարտության ստվերով մխիթարվեն (*Եբր. Ժ 1*): Նաև հրեշտակների միջոցով խոսեց, տարբեր օրինակներով Ինքն իսկ Աստված երևաց և Իր հրեշտակներից պահապաններ կարգեց տարբեր ազգերի վրա (*Դան. ԺԱ(11) 13*): Այս և սրա նման շատ այլ բաներ էլ հայտնեց մի խոսքով.

***Ջանազան եղանակներով խնամելով սփոփեցիր՝***

***մարգարեների միջոցով, Օրենքի սովորությամբ, քահանայությամբ և երինջների ստվերակերպ մատուցմամբ:***

Քանզի հնում թե՛ մեղքերի, թե՛ փրկության և թե՛ գոհության համար մատուցված բոլոր զոհերը Քրիստոսի պատարագման օրինակներն էին: Եվ այրված **երինջների** մոխիրը պղծվածների վրա սրսկելը (տե՛ս *Թվեր ժԹ(19)*) խորհրդանշում էր այժմյան մաքրագործումը, որը Քրիստոսի մկրտությամբ ու պատարագով կատարվեց (*հմմտ. Եբր. Թ 13*): Այս պատճառով էլ Պողոս առաքյալն ասում է. «Գալիք բարիքների ստվերն էր Օրենքը և ոչ թե իրողությունների բուն կերպարանքը» (*Եբր. Ժ 1*): Ստվեր է անվանում այն, ինչ մենք շուք ենք կոչում, որն ընկնում է թե՛ շնչավոր և թե՛ անշունչ որևէ առարկայի մարմնից: Իսկ «գալիք բարիքներ» է կոչում այժմյանները, որոնք այն ժամանակ էին մեզ համար պատրաստվում Քրիստոսով լինել: Այս մասին մի ուրիշ թղթում Պողոսն ավելի հայտնապես է խոսում՝ ասելով, որ սահմանված օրենքները «գալիք բաների ստվերներն են, իսկ բուն մարմինը Քրիստոսն է» (*Կորնու. Բ 17*), որպեսզի սովորես, որ Օրենքի ստվերը Քրիստոսից ընկավ, Ով փոփոխեց Օրենքի պահանջները, և ճանաչես, որ Օրենքի ու մեզ պարզևված շնորհի միջև եղած տարբերությունն այնքան է, որքան այն տարածությունը, որ կա ստվերի և այն առարկայի միջև, որից ստվերն ընկնում է:

***Իսկ այս օրերի վախճանին***

***մեր բովանդակ պարտքերի դատավճիռը պատռելով:***

**Օրերի վախճան** է ասում, որովհետև ըստ վեցօրյա արարչության՝ երկրային այս կյանքն իբրև վեցհազարամյա շրջան է դիտվում, իսկ յոթերորդում գալիք կյանքն է լինելու<sup>14</sup>: Արդ, քանի որ այս վերջին

<sup>14</sup> Ըստ Եկեղեցու հայրերի՝ աշխարհի արարումից մինչև աշխարհի վերջը՝ Տիրոջ Երկրորդ գալուստը, 6 ժամանակաշրջան է (հազարամյակ, դար, դարագլուխ կամ օր): Հավանաբար այս տեսության հիմնադիրը առաքելական շրջանի հայրերից Բառնաբասն է (տե՛ս Եզնիկ ծ. վրդ. Պետրոսյան, Հայրաբանություն, հտ. Ա, Ս. Էջմիածին, 1996, էջ 53): Առաջին ժամանակաշրջանում մարդն է ստեղծվել, երկրորդում Ենոքն է ապրել, երրորդում՝ Նոյը, չորրորդում՝ Աբրահամը,

վեցերորդ հազարամյակում Աստծո շնորհը Քրիստոսով հայտնվեց, և սրանից հետո չի սպասվում մի ուրիշ հազարամյակի վախճան, այդ պատճառով այստեղ «օրերի վախճան» է կոչվում հազարամյակի օրերի վախճանը՝ ցույց տալով հազարների վերջը, ինչը նաև Պողոսն է հայտնում. «Այս օրերի վախճանին մեզ հետ խոսեց Իր Որդու միջոցով» (Եբր. Ա 12):

***Մեր բովանդակ պարտքերի դատավճիռը պատռելով:***

***Բովանդակ*** բոլոր է նշանակում, ***պարտքեր*** խոսքով հանցանքներն են նկատի առնվում, ինչի մասին նաև Տերն աղոթքի մեջ խնդրել սովորեցրեց, թե՛ «Թող մեզ մեր պարտքերը» (Մատթ. 2 11):

***Ղատավճիռ*** է կոչվում այն, որը թագավորները գրում են վնասակար մարդկանց մասին և կնքելով պահում, մինչև ըստ հանցանքի մեծության հատուցեն: Նույն ձևով նաև մարդկային բնությունը՝ առաջին մարդուց մինչև Քրիստոս, իր խորհուրդներով, խոսքերով ու գործերով, գրով ու կնիքով պահվում էր ապստամբությունների վրեժխնդրության օրվա համար, սակայն այդ դատավճիռը Քրիստոսով ***պատռվեց***.

Վերադառնանք աղոթքի խոսքերին:

***Իսկ այս օրերի վախճանին մեր բովանդակ պարտքերի դատավճիռը պատռելով՝***

---

հինգերորդում Մովսեսը, իսկ վեցերորդ՝ այս կյանքի վերջին ժամանակաշրջանում աշխարհ եկավ մեր Տերը, և այս ժամանակաշրջանը ձգվելու է մինչև աշխարհի վերջը: Սրան հաջորդող յոթերորդ ժամանակաշրջանը կամ օրը հանդերձյալ (զալիք) հավիտենական կյանքինն է (տես Գ. Տաթևացի, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, ՌՃՀԸ (1729)թ., էջ 467): Ըստ մեկ այլ տեսակետի՝ յոթերորդ ժամանակաշրջանը ննջեցյալներինն է, իսկ հանդերձյալ կյանքի կամ հարուցյալների ժամանակաշրջանը ութերորդն է. «Ըստ ս. Գրիգոր Աստվածաբանի յոթը խորհրդանշում է այս կյանքի յոթ դարերը, իսկ ութերորդը՝ հանդերձյալ կյանքի անվախճան Օրը» (տես Գ. Տաթևացի, Քարոզ Ա. Հոգու գալստեան մասին, Երևան, 1995, էջ 2):

**Քո Միածնին տվեցիր մեզ  
որպես պարտապան և պարտք:**

Ասում է՝ **դատավճիռը** ոչ թե բռնությամբ **պատռեցիր**, այլ իրավամբ, որպեսզի Քո արդար դատը վրիպում չունենա. մեր մեղքերին որպես **պարտապան** կարգեցիր ո՛չ թե հրեշտակներից և սրբերից մեկին, այլ Քո **Միածնին**: Դարձյալ հիշելով գերազանց սերը՝ գոհանում է՝ ասելով, թե՛ Նրան, Ով Քո Միածնին էր, տվեցիր մեզ որպես **պարտապան**, Ով ոչ այլ բանով, եթե ոչ Իրենով մեր պարտքերը հատուցեց՝ ըստ Դավթի խոսքի. «Տերն ինձ կհատուցի» (*Սաղմ. ժէ(17) 21*), ինչպես նաև որպես **պարտք** ըստ Եսայու. «Տերը նրան մատնեց մեր մեղքերի համար» (*Եսայի ԾԳ(53) 6*), և Տերն Ինքն էլ է ասում. «Աստված այնպես սիրեց աշխարհը, որ մինչև իսկ Իր Միածին Որդուն տվեց» (*Հովհ. Գ 16*): Իսկ Պողոսն ասում է. «Նա, Ով Իր Որդուն իսկ չխնայեց, այլ մեր բոլորի համար մահվան մատնեց Նրան» (*Հռոմ. Ը 32*):

**Քո Միածնին տվեցիր մեզ որպես պարտապան և պարտք,**

**ողջակեզ և օձյալ, գառ և երկնավոր հաց,  
քահանայապետ և պատարագ:**

Ասում է՝ **Քո Միածնին** ոչ միայն **որպես պարտապան և պարտք տվեցիր**, այլև **ողջակեզ և օձյալ**, քանզի օձված քահանայապետերի փոխարեն Նրան **տվեցիր մեզ որպես օձյալ և քահանայապետ**, պատարագի **ողջակեզ, գառ** և առաջավորության **հաց**: Քանզի Օրենքի մեջ քահանայապետերն ամեն օր առավոտյան և երեկոյան գառներ էին մատուցում (*Ելք ԻԹ(29) 39, 41*) և սահմանված օրերին առաջավորության հաց դնում սեղանին<sup>15</sup>, ժողովրդից ամեն մեկի նվերը մատուցում և անասունների արյան միջոցով մարմինների

<sup>15</sup> Առաջավորության հաց են կոչվում այն 12 բաղարջ (հայսից՝ չթթված խմորից պատրաստված) հացերը, որոնք ամեն շաբաթ օր դրվում էին Վկայության խորանի (տես Ելք ԻԵ(25)) Սրբության սրահի ոսկեղեն սեղանի վրա, երկու շարքով, մեկը մյուսի վրա դարսված, և այդպես մնում էին սեղանի վրա մինչև հաջորդ շաբաթ օրը, երբ փոխարինվում էին նորերով: Աստծուն նվիրաբերվող այս հացերն ուտելու իրավունք ունեին միայն քահանաները (Ղևտ. ԻԴ(24) 5-9):

մաքրվելն ավետում: Իսկ Քո **Միածինը**, այդ ամենն Ինքը լինելով մեզ համար, միայն մարմնի պղծությունը չէ, որ մաքրում է, այլև ամբողջ հոգին ու մարմինը, ոչ թե խորհրդանշորեն ու ստվերի նմանությամբ, այլ ճշմարտությամբ, ինչպես Ինքն իսկ ասաց. «Նրանց համար Ես Ինձ սրբացնում եմ, որպեսզի նրանք էլ ճշմարտությամբ սրբանան» (*Հովհ. Ժէ(17) 19*), և «ճշմարտությամբ» ասելով հայտնի դարձրեց, որ այդ առաջին մաքրագործումները նմանություն էին և ոչ թե ճշմարտություն:

Արդ, ասելուց հետո, թե **Քո Միածինն տվեցիր մեզ որպես պարտապան և պարտք, ողջակեզ և օծյալ**, ով զոհն է մատուցում, **գառ, երկնավոր հաց, քահանայապետ և պատարագ**, ավելացնում է.

***Քանի որ Նա է բաշխողը և նույն Ինքն է բաշխվում մեր մեջ միշտ ու անսպառ:***

Այս ամենի մասին Պողոսը հաճախակի է խոսում՝ ասելով, որ Քրիստոսը քահանայապետ դարձավ, պատարագ մատուցեց և Իր իսկ արյամբ մտավ հավիտենական սրբարանը: Եվ մենք սեղան ունենք, որից նրանք, ովքեր խորանի ծառայությունն են կատարում, իրավունք չունեն ճաշակելու: Այս սեղանից է Քրիստոսը բաշխում և Ինքն է, որ **բաշխվում է**: Քանզի ինչպես որ Վերնատանը առաքյալներին **բաշխեց և բաշխվեց**, այդպես էլ այն օրվանից մինչև այսօր բոլոր եկեղեցիներում բոլոր հավատացյալներին նույն Ինքն է **բաշխում, բաշխվում** ու չի սպառվում: Այդ պատճառով է ասվում, թե **բաշխվում է մեր մեջ անսպառ**: Ապա՝ հաջորդ խոսքով, նաև այսպիսի շնորհի օրինակն է ցույց տրվում, թե ինչպես է **քահանայապետ և պատարագ, օծյալ և երկնավոր հաց, բաշխող և բաշխվող**:

***Որովհետև մարդացավ ստուգապես և առանց ցնորքի:***

Ոչ թե ցնորքով, այսինքն՝ երևութապես, այլ ստուգապես մարդացավ:

***Եվ անշփոթ միավորությամբ մարմնացավ սուրբ Կույս  
և Աստվածածին Մարիամից:***

Ասում է՝ ***անշփոթաբար*** միացավ մարմնին, որովհետև աստվածային կամ մարդկային բնությունները չփոփոխեց, այլ միացրեց՝ լինելով և՛ Աստված, և՛ մարդ, որպեսզի խոսքն Աստված մարմին առնի, կույսից մարմնացածն Աստված մնա, և նույն Ինքը լինի Աստված և մարդ, իսկ խոսք Աստծուն ծնած ***Մարիամը՝ Աստվածածին և Կույս:***

***Մարդկային կյանքի բոլոր կրքերի միջով  
ճանապարհորդեց առանց մեղքի:***

Սուրբ Գիրքը սովոր է այս կյանքը ***ճանապարհ*** կոչել, որի, այսինքն՝ մարդկային վարքի միջով, ասվում է, Քրիստոսն անցավ ու չմեղանչեց՝ մարմնի բոլոր ***կրքերը կրելով***, այսինքն՝ ծնվեց, սնվեց, քաղցեց, ծարավեց, հոգնեց, կերավ, խմեց, հագավ, հոգս արեց, տրտմեց, արտասվեց և կրեց այն ամենն, ինչ մարմնին է հատուկ, սակայն ***մեղքից*** ազատ մնալով՝ հաղթեց մարմնական սխալներին:

***Եվ կամավորապես եկավ աշխարհակեցույց  
և մեր փրկության առիթ խաչի վրա բարձրանալու:***

***Առիթը*** պատճառ է նշանակում, իսկ ***խաչելությունը*** Տիրոջ կողմից ցույց տրվեց իբրև ***աշխարհի*** և մարդկանց փրկության պատճառ, ուստի գոհանալով՝ այս խոսքն ***աշխարհակեցույց և մեր փրկության առիթ*** է կոչում խաչը:

**Վերցնելով հացն Իր ամենասուրբ  
ու կենդանարար ձեռքերի մեջ:**

Արդարև **ամենասուրբ ու կենդանարար** էին աստվածային **ձեռքերը**, քանզի արարչագործության ժամանակ դրանցից կենդանություն տրվեց մարդկանց, և մեր կյանքի նորոգությունը դրանցով շնորհվեց: Որովհետև նույն **ձեռքերն** էին, որ Ադամին ստեղծեցին, թեև այն ժամանակ անմարմին էին, իսկ այժմ՝ մարմնավոր: Նույն ամենակարող ու ամենքին կյանք պարգևող **ձեռքերն** էին, որ հողը հոգևոր ու բանական մարդու վերածեցին, հացը վերցնելով՝ աստվածային Մարմնի փոխարկեցին, այն ժամանակ մարդկային հոգին միացրին Ադամի մարմնին, իսկ այստեղ աստվածային բնությունը միացրին մարդկայինին. այն ժամանակ, ասում է, հոգին, որ Սուրբ Հոգին է, մարդու երեսին փչվեց և նրա մեջ կենդանի շունչ ստեղծվեց, իսկ այստեղ, ասում է, **հացը վերցնելով՝ օրհնեց:** Եվ **օրհնելը** դրան Սուրբ Հոգի տալն է, Ով Մարիամի մեջ առաքվելով՝ նրա մեջ անձառելի տնօրինությունն իրականացրեց և Կույսից վերցված մարմինը Խոսք Աստծուն միացրեց, որպեսզի նույն կերպ նաև Աստծո Որդու հետ **հացի** միությունը հրաշագործի: Ասում է.

**Օրհնեց, գոհացավ:**

Մեր քահանայապետը լինելով և Իր մարմինը պատարագ մատուցելով՝ իբրև մարդկանցից մեկը գոհանում է Աստծո բարերարությունների համար, որոնք մեր մարդկային ցեղի հանդեպ եղան ի սկզբանե ու հավիտենապես, և ասես մարդկության կողմից՝ փոխարենը այսպիսի ընծա է տալիս Աստծուն: Ապա ասվում է.

***Տվեց իր ընտրյալ աշակերտներին՝ ասելով.  
«Վերցրե՛ք, կերե՛ք դրանից բոլորդ. սա՛ է իմ մարմինը,  
որ բաշխվում է ձեզ և շատերի համար»:***

Տերն ուրիշ աշակերտներ էլ ուներ, սակայն գլխավորները տասներկուսն էին, ում այս աղոթքն ***ընտրյալներ*** է կոչում. Տերը սուրբ Խորհուրդը նախ նրանց շնորհեց: Եվ քանի որ բոլոր հավատացյալներին էլ պետք է պարզներ, այդ իսկ պատճառով ***բաշխվում է*** խոսքին ավելացրեց ***շատերի համար***-ը՝ ցույց տալով, որ այդ օրից մինչև աշխարհի վախճանը ճշմարիտ հավատացյալներին Այն անսպառօրեն որպես կերակուր էր տալու:

***Ըստ նույն օրինակի նաև բաժակը վերցնելով՝  
օրհնեց, գոհացավ, տվեց իր ընտրյալ աշակերտներին՝ ասելով.  
«Բոլորդ վերցրե՛ք խմե՛ք սրանից. սա՛ է Նոր ուխտի իմ արյունը, որ  
հեղվում է ձեր և շատերի մեղքերի քավության համար»:***

Այս Պատարագի սկզբը մեր Տերը դրեց և սովորեցրեց, թե ինչպե՛ս պետք է գոհությամբ կատարել այն, քանզի ոչ միայն արարչության, այլև ընդհանուր մարդկության խնամքի ու փրկության համար պետք է գոհանանք, ինչպես նաև այս ընդհանուր բարիքների հետ Աստծուց գտած յուրաքանչյուր առանձին բարիքի համար սուրբ Պատարագի միջոցով շնորհակալությամբ երախտահատույց լինենք, որովհետև Տերը եկավ մեզ ոչ միայն փրկելու և կյանք պարզելու, այլ նաև ամեն տեսակ կարգերի ու կրոնական սովորությունների մեր ուսուցիչը լինելու:

Եվ արդ, ուշադրություն դարձրու սկզբից եղածների վրա: Ծնվեց, իր համար աղքատ մայր ընտրեց, որպեսզի դու չփախչես աղքատությունից, ինչը հավանեց ամենքի Թագավորը: Մանուկ տարիքում գաղթեց Եգիպտոս. և այսպես՝ շատ անգամ, երբ հրաշքներով բարիք էր գործում, հալածվում էր, որպեսզի դու չտաղտկանաս հալածանքների մեջ և չզայրանաս, եթե նեղվես նույնիսկ նրանց կողմից, ում բարիք ես գործել, քանի որ չես կարող



այնքան բարեգործություն անել, որքան Նա, Ով Աստված ու Փրկիչ էր, այնքան ազատ չես պարտքերից, որքան Նա, Ով բոլորովին անմեղ էր, այլև չես կարող ինքդ քեզ Աստծո Որդուց առավել պատվի ու մեծարանքի արժանի համարել: Հանդերձ հազավ ոչ թե զարդարվելու, այլ մարմինը ծածկելու համար, որպեսզի դու ավելորդությունների մասին չհոգաս, այլ հարկավորների: Ինչպես հագնվեց, այդպես էլ կերավ ու խմեց՝ շռայլության չտալով Իրեն, այլ Իր մարմնի կարիքները չափավորապես բավարարելով: Հարսանիքի մասնակցեց (*Հովհ. Բ 1-10*) և զվարճության չափը համեստությամբ ու հրաշքով ընծայատրությամբ ցույց տվեց: Իր սիրելիին՝ Ղազարոսին (*Հովհ. ԺԱ(11) 35*) սգալով՝ Իր արտասուք թափելու և սգի չափը հայտնի դարձրեց: Նաև ճանապարհորդներին օրինակ տվեց, թե ինչպիսի գրաստներով է պատշաճ ճանապարհի նեղությունը հաղթահարել, քանզի ոչ թե ոսկեսանձ ու երևելի ձիու, այլ էշի վրա նստեց: Սովորեցրեց նաև, թե փորձությունների մեջ ինչպես է պետք աղոթել (*Ղուկ. ԻԲ(22) 40*) կամ ինչպիսի հեզություն է պետք փորձիչների նկատմամբ ցուցաբերել և չարի փոխարեն բարիով հատուցել, ինչպես Ինքը ծառայի ականջը բժշկեց (*Մատթ. ԻԲ(22) 51*): Եվ արդ, ինչպես որ կամեցավ ուսուցանել սրանցով և Իր կյանքի ուրիշ շատ դրվագներով, մանավանդ տեսակ-տեսակ խոնարհություններով, մինչև անգամ աշակերտների ոտքերը լվանալով, այդպես էլ ուսուցանեց, թե ինչպես պետք է այս Խորհուրդն օրհնությամբ ու գոհությամբ կատարել: Եվ քանի որ Ինքն է ախորժում մեզ պարտական մնալ և ոչ թե մենք՝ Իրեն, այդ պատճառով էլ, երբ մենք գոհություն ենք հայտնում Աստծուն, փոխարենը մեծ Պատարագն է մատուցում, որպեսզի նրանով մեռածների ու ողջերի պարտքերը հատուցվեն, և մեր պարտատուն ու պարտապանը Ինքն Աստված լինի:

Այսպես, բաժակը աշակերտներին տալով՝ ասում է. «Սա՛ է Նոր ուխտի Իմ արյունը, որ հեղվում է ձեր և շատերի մեղքերի քավության համար»: Նկատի ունե՛ր այն արյունը, որ խաչի վրա էր

թափվելու, նաև խաչին բևեռվելն ու կողի խոցվելը: Եվ չասաց միայն՝ «Իմ արյունը», այլև այն «Նոր ուխտի» անվանեց, որովհետև Հին ուխտը, որ հրեաների հետ կնքվել էր պարզապես երկրի համար, անասունների արյամբ էր<sup>16</sup>, իսկ այս Նոր ուխտը եղավ Նրա պատվական արյամբ, ինչի մասին նախապես խոսեց Երեմիայի միջոցով, թե նոր ուխտ պիտի կնքի՝ տալով Իր օրենքը մեր սրտին ու մտքին, մեր Աստվածը պիտի լինի, մեզ Իր ժողովուրդը դարձնի և այլևս չի հիշելու մեր մեղքերն ու անօրինությունները (*տես Երեմ. ԼԲ(32) 38-40*): Իսկ այստեղ Իր սուրբ բերանով միայն այսքանը չասաց, այսինքն՝ Իր արյամբ ուխտելը, այլև սա էլ ավելացրեց, թե՝ «Ես և Հայրն արքայությունն ենք ուխտում ձեզ, նաև Ինձ ուրախակից լինելը», քանզի հետևյալ խոսքը Նրա հետ ուրախանալն է հայտնում. «Կուտեք ու կխմեք Իմ սեղանից Իմ Հոր արքայության մեջ» (*Ղուկ. ԻԲ(22) 30*):

**10. Քարեղար և մարդասեր Տերը պատվիրեց մեզ  
սա միշտ կատարել Իր հիշատակի համար:**

Քանի որ Կենարարն ասաց. «Քանի անգամ, որ այս հացն ուտեք և այս բաժակից ըմպեք, Իմ մահը հիշեք, մինչև Ես գամ» (*Ա Կորնթ. ԺԱ(11) 26*), ուստի սա՛ է, որ ասում ենք. այն նույն խորհուրդը, որն Ինքը կատարեց, նաև մեզ հրամայեց միշտ կատարել Իր մահվան հիշատակի համար:

**Եվ մահվան ստորին վայրերն իջնելով:**

**Ստորին վայրերը** ներքին վայրերն են, և աղոթքն այսպես է կոչում գերեզմանը, ուր աստվածային մարմինը դրվեց, որը վերցվել էր Մարիամից: Որովհետև ասում է.

**Եվ մահվան ստորին վայրերն իջնելով՝**

---

<sup>16</sup> Իսրայելի ժողովրդի հետ Աստծո կնքած ուխտի մասին տես Ելք ԻԴ(24) 1-11:

***մեր ցեղակցից ընդունած Իր մարմնով:***

Սուրբ Մարիամ Աստվածածինն է ***ցեղակից*** անվանում. և ինչպես որ մարմնով, ուրիշների մարմինների նման, գերեզման ***իջավ***, այդպես էլ Հոգով գնաց ուրիշ մահացածների հոգիների մոտ, շատ սրբերի հարություն շնորհեց և մահվան զորությունը խափանեց: Այս պատճառով սրան հարում է.

***Եվ դժոխքի փականքները հզորապես փշրելով՝***

***Իրեն ճշմարտապես հայտնեց***

***իբրև ողջերի ու մեռածների Աստված:***

Մարմինների հարությունն արգելափակված հոգիների՝ իրենց մարմիններին վերադառնալն է: Աստված Ադամին մահ սպառնաց, եթե ճաշակեր պտուղը, և քանի որ Ադամը պատվիրանի նկատմամբ հանցավոր գտնվեց, իր զավակներով հանդերձ մահվան ու մեղքի իշխանության տակ ընկավ, և մարդկանցից չգտնվեց և ոչ ոք, ով իր անմեղությամբ վճարեր մահվան պարտքը: Ուստի մեղքի պարտքից ազատ Աստծո Որդին Ադամի որդի դարձավ և մեր՝ մեղավորներիս ու պարտապաններիս փոխարեն մեռավ, ապա իշխեց մահվան վրա՝ կոտրելով նրա դարպասները և հանելով նրա կողմից բռնվածներին: Սա կարող էր նաև առանց Իր մահվան անել, ինչպես Ղազարոսի պարագային, սակայն չկամեցավ միայն իշխանությամբ փրկել, այլև արդարությամբ, ինչպես մարգարեներից մեկն ասաց. «Արդարությամբ ու ողորմությամբ կփրկվեն նրա գերիները» (*հմմտ. Օտեբ P 19*): Ողորմությամբ, քանզի մարդ լինելով՝ մահացավ մեզ համար, և արդարությամբ, քանզի Անմեղի մահը մեղավորներիս կյանքն է արդարացնում: Իսկ արգելարանի դարպասների խորտակման օրինակով է խոսում, որպեսզի ցույց տա, որ դժոխքը բանտի պես է, որի դարպասները խորտակվում են և ***փականքները*** փշրվում, ինչպես և ասաց՝ ***փշրելով***: Եվ մանավանդ, ինչպես երբ բանտապետը կապվում է անքակտելի կապանքներով, այնուհետև արգելափակվածների համար չկա դուրս ելնելու որևէ խոչընդոտ,

այս նույն օրինակով նաև մեր հարությանը որևէ խոչընդոտ չի լինելու՝ Քրիստոսի միջոցով մահվան խափանման պատճառով: Եվ այս ամենով **Ճշմարտապես**, այսինքն՝ ստուգությամբ, հայտնվեց, թե Նա, Ով մեռավ, **ողջերի ու մեռածների Աստվածն** է, ինչպես և ասում է առաքյալը. «Քրիստոսը մեռավ և կենդանացավ, որպեսզի ողջերին ու մեռելներին հավասարապես տիրի» (*Հռոմ. ԺԴ(14) 9*):

**Եվ հիմա մենք, Տե՛ր, այդ հրամանի համաձայն  
մատուցելով Քո Միածնի մարմնի և արյան  
այս փրկական խորհուրդը:**

Ասում է, որ Նա մեզ էլ **հրամայեց** այն նույնն անել, ինչն Ինքն արեց: Դրա համար էլ ասում ենք, թե **այդ հրամանի համաձայն ենք մատուցում: Մատուցելը** հացն ու գինին սեղանին դնելն է, որոնք Աստծո Որդու **մարմնի և արյան խորհուրդն են: Խորհուրդը** հավատալն է ո՛չ թե համաձայն նրա, ինչ երևում է, այլ ինչ ընկալվում է, քանզի այս խորհուրդը տեսնվում է իբրև հաց ու գինի և ընկալվում իբրև Աստծո Որդու **մարմին** ու **արյուն**: Եվ կոչվում է **փրկական**, քանզի նրանով փրկվեցինք ու փրկվում ենք թե՛ ապրելիս և թե՛ մեռնելիս:

**Հիշում ենք մեզ համար Նրա կրած  
փրկագործ չարչարանքը:**

Արդ, ասելով, թե **հիշում ենք**, որ Նա մեզ համար **չարչարվեց՝** մտաբերենք այն, որ Աստծո Որդին կապվեց՝ մեզ մեղքերի կապանքներից ազատելու համար. պիղծերի կողմից դատապարտվեց, որպեսզի երկիրը դատելիս մեզ անդատապարտ դարձնի. աստվածային դեմքին թուք ընդունեց և ծնոտին՝ ապտակ, որպեսզի նորոգի մեր կողմից ապականված Իր պատկերը: Նա Իր անարատ գլխին հարվածներ ու փշե պսակ ընդունեց, որպեսզի մեր հոգիներից վերացնի խավարի ծածկույթը և ախտերի տեսակ-տեսակ չարչարանքները: Զինվորների կողմից ծիրանիով, փշե

պակով, եղեգով ու երկրպագության խաղով ենթարկվեց ծաղրանքի, որպեսզի մեզ ճշմարտապես թագավորեցնի ու աստվածացնի, շնորհի մեզ փառքի հագուստը, արքայության թագը, զորության գավազանը: Հերովդեսից անարգվեց, Պիղատոսից մտրակվեց, որպեսզի մեզ պատվական դարձնի և մեզ համար պատրաստի հավիտենական կյանքի ճանապարհը:

***Կենդանարար խաչելությունը:***

Քանի որ մինչ մեռած էինք մեղքերի մեջ, Նա մեռավ խաչի վրա և կենդանացրեց մեզ՝ մեռածներիս, ուստի ***կենդանարար*** ենք անվանում Նրա ***խաչ ելնելը***:

***Երեքօրյա անապական թաղումը:***

Քանզի համաձայն մարգարեի՝ Նրա հոգին չմնաց դժոխքում, և ոչ էլ Նրա մարմինն ապականություն տեսավ (*տե՛ս Սաղմ. ԺԵ(15) 10*): Այլև մեր հոգիները հանեց դժոխքից և մեր մարմինը փրկեց ապականությունից:

***Երանելի հարությունը:***

Սուրբ Գրքում ***երանելի*** է ասվում ամեն բարիքով բովանդակվածը, որն ամբողջությամբ ***երանելի*** է, ինչպես նույնն Ինքն Աստված, Ով ոչ միայն ***երանելի*** է, այլև բոլոր երանությունների պարզևիչը, քանզի մարդ և մարմին լինելով՝ Իր հարությամբ ճշմարտապես Աստված երևաց:

***Աստվածապես համբարձումը:***

Քանզի Նա մեր այս հողեղեն բնությունը մինչև աստվածային աթոռ բարձրացրեց և մեզ Իր հետ հարություն տվեց ու նստեցրեց երկնայինների մեջ:

***Ահավոր և փառավոր մյուս գալուստը:***

Արդարև *ահավոր*, ահագրու, *փառավոր* և սոսկալի է այդ *գալուստը*, քանզի Տերը Հոր *փառքով* ու բոլոր հրեշտակներով է գալու, համայն մարդկությանը հավաքելու է դատելու համար և յուրաքանչյուրին հատուցելու է նրա գործերի համաձայն՝ մշտնջենական անպատմելի փառք շնորհելով արդարներին և հավիտենական անողորմ չարչարանքներ՝ մեղավորներին: Արդ, ասում ենք, թե հիշում ենք այս բոլորը և գոհանում փոխարենը սուրբ Պատարագն իբրև այսպիսի նվեր և բարիքների ընծա տալով: Եվ սրանով աղաչում ենք փրկվել հանդերձյալ դատաստանից: Այս պատճառով խորանի առջևում կանգնածները միաձայն ասում են.

***Ամեն ինչում գովում ենք Քեզ:***

Այսինքն՝ գովում ենք Քեզ ամեն ինչի համար:

***Օրհնում ենք Քեզ, գոհանում Քեզանից,  
աղաչում ենք Քեզ, մեր Տե՛ր Աստված:***

Այս խոսքը, որ երգում է ժողովուրդը, քահանան կրկնում է և բացատրում իմաստը՝ այսպես ասելով.

***11. Արդարև գովում ենք Քեզ, մեր Տե՛ր Աստված,  
և գոհանում Քեզանից, որ մշտապես անտեսեցիր  
մեր չարագործությունները:***

Ասում է՝ ***գովում ենք*** Քո քաղցր, անոխակալ, առատաբուխ ու բազմագութ ներողամտությունը և ***գոհանում*** Քո առատապարզ և բարերարությունների համար, քանզի մենք մշտապես մեղանջում ենք խորհուրդներով, խոսքերով ու գործերով, սակայն Դու նայելով դրան՝ վրեժխնդիր չես լինում, այլ իբրև թե չտեսնելով զանց ես առնում և այդպես ներում: Եվ ոչ միայն մեր հանցանքներն ու չար գործերն ես անտեսում, այլև խնամք ու ողորմություն ցուցաբերում՝ ոչ միայն մարմնին, այլև հոգուն, ոչ միայն փոքր բաներով, այլև մեծերով, ինչն էլ ցույց է տրվում հաջորդ խոսքով.

***Որ այսպիսի ահավոր ու անպատմելի  
խորհրդին սպասավորներ կարգեցիր:***

Սուրբ Խորհուրդն ***անպատմելի*** է անվանվում, քանի որ խոսքն անկարող է արտահայտել Նրա որպիսությունը: Իսկ ***ահավոր*** է ոչ միայն մարդկանց, այլև հրեշտակների համար:

***Ոչ թե մեր ինչ-ինչ բարեգործություններին,  
որոնցից իսպառ զուրկ ենք միշտ, այլ Քո լիառատ  
ներողամտությանը մշտապես ապավինելով՝  
համարձակվում ենք մերձենալ  
Քո Միածնի մարմնի և արյան սպասավորությանը:***

Քանի որ ***ահավոր*** է, ուստի մենք ***համարձակվում ենք սպասավորել*** վստահ լինելով ո՛չ թե այն պատճառով, որ ինչ-որ բարիք գործեցինք, այլ որովհետև Քո մեծ ու ***լիառատ*** բարերարությանն ***ապավինեցինք***: Սա՛ է նշանակում ***մշտապես համարձակվում ենք մերձենալ Քո Միածնի մարմնի ու արյան սպասավորությանը*** խոսքը:

Եվ ինչո՞ւ է ասում խորհրդի ***սպասավորությանը***: Որովհետև խորհուրդը կատարողը մենք չենք, այլ ինչպես երանելի Հովհանն<sup>17</sup> է ասում, մենք ***սպասավորների*** աստիճան ունենք, իսկ սրբագործում ու վերակազմում է Նա, այսինքն՝ Քրիստոսը: Քանզի մենք Պատարագը Սեղան ենք բարձրացնում և սպասավորում գոհանալով Աստծո բարերարությունների համար, իսկ հացն Իրեն միավորելը և կենսատու դարձնելը Քրիստոսի գործն է:

***Խաղաղություն ամենքին:  
Երկրպագենք Աստծուն:***

Ապա քահանան ասում է.

---

<sup>17</sup> Տե՛ս ծնթ. 4:

**12. Երկրպագում, աղաչում և խնդրում ենք Քեզ, Տեր,  
ուղարկիր Քեզ հավիտենակից և էակից Սուրբ Հոգիդ  
առջևում դրված այս Ընծայի և մեզ վրա:**

**Երկրպագում, աղաչում և խնդրում ենք Քեզ, Տեր:** Ինչո՞ւ է ասում **Քեզ**. Որովհետև երկրպագությանը խնդրում ու աղաչում ենք **Քեզ**, որ Արարիչ և Հայր ես, որ բոլոր ժամանակներում մարդասեր, բարերար և մարդկության հանդեպ գթած ես եղել, որ ոչ միայն արարածներին ստեղծեցիր մեր կարիքների համար, այլև Քո միակ և սիրելի Որդուն տվեցիր մեզ իբրև փրկանք ու փոխանակ: Եվ հենց Նրան էլ դնում ես Սեղանին ու մեզ կերակրում Նրանով, ինչի համար ապավինելով Քո անբավ բարերարությանը՝ **խնդրում ենք ուղարկել Քո Սուրբ Հոգին մեզ և այս Ընծայի վրա, որպեսզի նաև մեզ սրբի Սուրբ Հոգիդ:**

**Ով այս հացն օրհնելով՝ ճշմարտապես կվերածի  
մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի մարմնին,  
իսկ սկիհի գինին օրհնելով՝ ճշմարտապես կվերածի  
մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի արյանը:**

Քանզի **Փրկիչը** մարմնացավ Կույս Մարիամից՝ Սուրբ Հոգու միջոցով, Ով ուղարկվելով Հորից՝ Մարիամի արգանդից մարմին վերցրեց և խառնեց, միացրեց Խոսք Աստծուն, Ով Մարիամից ծնվելով՝ իբրև մի Որդի և Աստված հայտնվեց: Սուրբ Հոգին նույնն է գործում նաև եկեղեցում և սուրբ Սեղանի վրա. վերցնելով հացը, ինչպես և սկիհի գինին՝ միացնում է Աստծո Որդուն, և սա **ճշմարտապես** դառնում է **Քրիստոսի** մարմնին ու արյունը: Սա՛ ենք խնդրում և հավատում ենք դրա կատարմանը, որովհետև ճշմարիտ է Քրիստոսի խոսքը, Ով ասաց, թե մինչև Իր գալուստը պետք է Իր կողմից սկզբնավորված այս խորհուրդը կատարել Իր հիշատակի համար: Իսկ երբ ասում ենք, թե Սուրբ Հոգին հավիտենակից և էակից է, դրանով խոստովանում ենք Նրա՝ միշտ Հոր մոտ և Հոր հետ լինելը: Ինչպես Հայրը կար, կա և միշտ լինելու է, և չկա մի



ժամանակ, երբ չկար, այդպես էլ Սուրբ Հոգին միշտ Հոր ու Որդու հետ էր և է՝ մշտնջենավորապես ու իբրև էություն, Ով էլ այսպիսի մեծամեծ հրաշքներ է գործում՝ սովորական հացն ու գինին Աստծո Որդու անապական մարմնի և արյան փոխարկելով:

***Որպեսզի սա մեզ՝ մերձեցողներիս, չբերի դատապարտություն, այլ մեղքերի քավություն ու թողություն:***

Հավատով խնդրելով Սուրբ Հոգու էջքը սուրբ Պատարագի վրա՝ համաձայն տերունական խոսքի՝ կենդանարար մարմին և արյուն ենք խոստովանում Այն, ապա աներկբա սրտով սկսում մեր խնդրանքները՝ անկասկած ու անտարակույս մտքով գիտակցելով, որ Աստծո Որդին սուրբ Սեղանի վրա է: Ինչպես նաև մեր աչքերի առջև ենք բերում Նրա մահը, որ մեզ համար եղավ, քանզի դրանից հետո հացն ու գինին այն մարմինն է դառնում, որը խաչի վրա էր և գերեզմանում: Սրանով թե՛ կենդանիների և թե՛ մահացածների համար փրկություն ենք հայցում՝ նախևառաջ խնդրելով, որ անդատապարտ մնանք այս ահավոր Խորհրդին սպասավորելով, նաև՝ որ Նրան ***մերձենալը*** մեղքերի թողություն պարգևի մեզ: Այս պատճառով էլ ասում է՝ ***մերձեցողներիս***. քանի որ անարժանների համար դատապարտություն են թե՛ մոտ կանգնելը և թե՛ հաղորդվելը: Եվ անպատրաստները դուրս են գալիս, որպեսզի աստվածային առագաստն աղտեղի հոգով մտնելու պատճառով չդատապարտվեն: Իսկ քանի որ անբիծ ոչ ոք չկա, աղաչում ենք, որ Քրիստոսի պատարագումով ներվեն մեր հանցանքները՝ գիտակցական և անգիտակցական: Ովքեր խղճի խայթ ունեն և խոստովանությամբ ու ապաշխարությամբ չեն սրբվել, սարկավազի առաջին քարոզը նրանց հեռացրեց, իսկ նրանք, ովքեր խղճի խայթ չունեն և կամ համաձայն Սուրբ Գրքի ապաշխարել են ու մնացել ներսում, պարտավոր են ահուդողի մեջ լինել, քանի որ մշտապես սխալների մեջ ենք ընկնում՝ խորհուրդներով, խոսքերով, գործերով, կամա և ակամա, գիտությամբ և անգիտությամբ: Այս պատճառով էլ

պետք է հառաչանքներով ու ջերմեռանդ արտասուքով պաղատանքներ մատուցել՝ ամեն մեղքից ազատվելու և Մաքուրին մաքրությամբ մերձենալու համար:

**13. Մրանով սեր, հաստատություն և ըղձալի խաղաղություն  
շնորհիք Քո սուրբ Եկեղեցուն:**

*Մրանով*-ը Պատարագի մասին է ասում: *Շնորհել* է ասում և ոչ թե «տալ», որպեսզի չկարծենք, թե բարի գործերի փոխարեն հատուցում է տրվում, այլ բարերարության ձրի պարզև է: Հայցում ենք, որ *Եկեղեցուն*, այսինքն՝ հավատացյալ ժողովրդին, շնորհվեն *սեր*՝ Աստծո և միմյանց նկատմամբ, *հաստատություն* հավատքի և բարի գործերի մեջ, և *խաղաղություն*՝ արտաքին թշնամիներից, նաև ամբարիշտներից ու հերձվածողներից անսասան մնալու կարողություն: Հայցում ենք նաև ամեն բանում փափագելի ու ցանկալի *խաղաղություն* ունենալ, ինչն *ըղձալի* կոչեց:

Այնուհետև նույնն է հայցում բոլորի համար առանձին-առանձին և ըստ կարգի.

***Բոլոր ուղղափառ եպիսկոպոսներին:***

Այսինքն՝ այն եպիսկոպոսներին, ովքեր ուղիղ հավատ ունեն:

***Քահանաներին, թագավորներին, իշխաններին, ժողովուրդներին,  
ճանապարհորդներին***

***և բարբարոսների դեմ պատերազմողներին:***

Քրիստոսի պատարագի միջոցով բոլորի համար ողորմություն է հայցում: Վտանգվածներ են, ովքեր որևէ նեղության մեջ են, և ***բարբարոսների դեմ պատերազմում են***, ովքեր այլազգիների կամ այլ անհավատների հետ մարտի բռնված՝ կռվում են Քրիստոսի Եկեղեցին անդորրության մեջ պարսպելու համար:

***Սրանով շնորհիք նաև եղանակի բարեխառնություն,  
առատ պտղաբերություն և զանազան ցավերով հիվանդներին՝  
շուտափույթ առողջացում:***

***Բարեխառն եղանակն*** այն է, որ չի վնասում բույսերին ու ծառերին, այլ բարվոք սնուցում ու պտղաբեր է դարձնում: Ասվում է՝ ***զանազան ցավերով հիվանդներին***, որպեսզի խնդրանքի միջոցով շուտափույթ առողջություն գտնեն թե՛ մարմնով, թե՛ հոգով և թե՛ մտքով վտանգվածները:

***Սրանով հանգիստ պարզևիր մեզանից առաջ Քրիստոսով  
վախճանված բոլոր ննջեցյալներին:***

Այսինքն՝ Ադամից հետո ***Քրիստոսով*** ու հավատով ննջածներին, քանզի ոչ միայն Քրիստոսի գալուստից հետո, այլ նաև նախքան Նրա գալուստը Աստծուն հավատացողները ***Քրիստոսով ննջեցին***, որովհետև Նա սկզբից էլ Աստծո մոտ էր և Աստված էր *(տե՛ս Հովհ. Ա 1)*: Սրբերը նախապես էլ ճանաչում էին Նրան, ինչպես և ասում է երանելի Գրիգոր Աստվածաբանը<sup>18</sup> կատարյալների մասին: Իսկ անկատարները, մարգարեների և արդարների կողմից քարոզվածին Աստված դավանելով, Սուրբ Երրորդությանն էին երկրպագություն մատուցում, թեև անծանոթ էին առանձին Անձերին: Այս պատճառով

<sup>18</sup> Ս. Գրիգոր Նազիանզացի (Աստվածաբան)- Դ դարի Եկեղեցու հայր, մեկը Եկեղեցու Տասներկու վարդապետներից:

էլ նրանց մասին ևս ասվում է, թե *Քրիստոսով ննջեցյալներ* են: Ուստի ասելով *հանգիստ պարգևիր Քրիստոսով ննջածներին*՝ թվում է ոչ միայն նոր ժամանակների ննջեցյալներին, այլև Ադամից մինչև Աբրահամ և վերջինիս հաջորդած սուրբ հայրերին:

*Մարգարեներին, առաքյալներին, մարտիրոսներին,  
եպիսկոպոսներին, երեցներին, սարկավազներին  
և Քո սուրբ Եկեղեցու ամբողջ ուխտը:*

այսինքն՝ կիսասարկավազներին, դպիրներին, զրակարդացներին, սաղմոսողներին: *Ամբողջ* ասելը ցույց է տալիս բոլոր եկեղեցական կարգ ունեցողներին, իսկ Եկեղեցու *ուխտ* է ասում, քանզի բոլորն էլ նվիրված են սուրբ Եկեղեցու սպասավորությանն ու կարգավորությանը:

*Նաև Քեզ հավատացող աշխարհական  
տղամարդկանց ու կանանց:*

Այստեղ հիշատակում է բոլոր աշխարհական հավատացյալներին՝ թե՛ հին և թե՛ նոր ժամանակներում հավատով վախճանվածներին, քանզի ինչպես սրբերի աղոթքներն ու բարեխոսությունն ենք խնդրում մեզ օգնելու, այդպես էլ մենք ենք պարտավոր մինչև այժմ ննջածներին օգնել աղոթքներով, մանավանդ սուրբ Պատարագով, որը ննջեցյալների համար հույս, կենդանություն և փրկություն է: Մեր ննջեցյալներին, սիրելիներին և ծանոթներին պարտավոր ենք հանվանե հիշել՝ թե՛ բերանով, թե՛ մտքով: Իսկ ուրիշներին հիշել ամենագետ Աստծուն ենք խնդրում, ըստ կարգերի՝ հիշում ենք սրբերին և նրանց հետ նաև բոլոր հավատացյալներին՝ միմյանց հարելով իբրև Քրիստոսի մեկ մարմին՝ բոլորի գլուխ Քրիստոսի պատարագի միջոցով հիշատակելով Հայր Աստծո առջև: Եվ այս խոսքով ենք ավարտում.

*Որոնց հետ և մե՛զ այցելիր,*

***բարերար և մարդասեր Տեր:***

Այն բոլորի հետ, ում հիշատակեցինք, նաև ***մեզ այցելիր***, այսինքն՝ մեզ էլ փնտրիր և քոյինների հետ խնամածու եղիր:

Այս նույնը, որ ասում է քահանան, սարկավազը բարձրաձայն կրկնում է՝ առանձին-առանձին տների բաժանելով: Եվ յուրաքանչյուր տնից հետո խորհրդին մասնակցող ժողովուրդը եղանակելով ասում է.

***Հիշիր, Տեր, և ողորմիր:***

Բուն քարոզը շատ տներ ունի. նախ՝ Աստվածածնի մասին, ապա՝ առանձին-առանձին, ըստ կարգի՝ սրբերի՝ նախահայրերի, մարգարեների, առաքյալների, եպիսկոպոսների, մարտիրոսների, քահանաների, սարկավազների, ընտրյալ կանանց, մարտիրոս կանանց, սուրբ թագավորների, սուրբ իշխանների, սուրբ վարդապետների, առաքինի և նահատակ հայրերի, առաջնորդների ու բոլոր ճգնավորների, նաև նրանց, ովքեր որևէ այլ կերպ են հաճոյացել Աստծուն: Յուրաքանչյուր խմբից ոմանց հանվանե են հիշում և ապա առանց անվանապես հիշելու՝ սրանց հարում բոլոր մյուս կարգակիցներին: Ջատկի տոնին այսպես են հիշատակում բարեկարգության մասին հոգ տանողները: Իսկ այն, ինչ համառոտաբար հարկ է ասել սուրբ Պատարագի ժամանակ, սա է.

***14. Կույս Մարիամ Աստվածածնի, Հովհաննես Մկրտչի և սուրբ Ստեփանոսի հիշատակը թող լինի:***

***Սուրբ առաքյալների, մարգարեների, մարտիրոսների, Պետրոսի,***

***Պողոսի և բոլոր սրբերի հիշատակը թող լինի:***

***Սուրբ հայրապետերի, երանելի սուրբ Գրիգորի, բոլոր սուրբ և ուղղափառ եպիսկոպոսների ու քահանաների, նաև Եկեղեցու ամբողջ ուխտի հիշատակը թող լինի:***

***Ի Քրիստոս հավատով ննջած տղամարդկանց և կանանց  
հիշատակը թող լինի:***

Իսկ թե ի՞նչ են նշանակում այս հիշատակությունները, իմ տկար հասկացողության համաձայն ջանամ ցույց տալ: Աստծո բազում և զանազան երախտիքների դիմաց Աստծուց շնորհի ստացանք փոխհատուցելու Նրան սուրբ Պատարագի՝ Քրիստոսի ընծայմամբ, ինչի միջոցով հիշելով Աստծո կատարած բոլոր բարերարությունները՝ ամեն ինչի համար գոհություն ենք մատուցում: Եվ ի հավելումն այս ամենի՝ սուրբ Խորհրդով գոհանում ենք Նրա կողմից ընտրվածների համար, քանի որ բոլորս մեկ ենք Քրիստոսով, և եղբայրների փառավորումը մեր փառքն է: Մեծ Նվերն իբրև նրանց գոհության հիշատակ ենք մատուցում՝ այն պատճառով, որ նրանց այդպես լավ ու պիտանի և Բանասարկուի բոլոր մարտերի ժամանակ աղոթարար դարձրեց: Եվ ոչ միայն սրբերի համար ենք գոհանում, այլև Աստծո բոլոր արժանավոր հավատացյալների, քանզի ինչպես ասել է Սողոմոնը, «Աստծուն ճանաչելը բովանդակ արդարություն է» (*Իմաստ. ժե(15) 3*): Մեծ պարզև է Նրա ժողովուրդ, սուրբ Ավագանի ծնունդ, սուրբ Հաղորդությունն ընդունող լինելը, ինչպես նաև այս կյանքից Քրիստոսի սուրբ անվամբ հեռանալը: Սրանցում ամենքի և այսպիսի պարզեանքների գոհությունն իր լրմանն է հասնում սուրբ Պատարագով: Որով ոչ միայն գոհություն ենք մատուցում Աստծուն յուրաքանչյուրի համար, այլև մաղթանքներ՝ հիշելով սրբերի նահատակություններն ու առաքինի վարքը: Ապա երկնավոր Հոր առջև բարեխոս ունենալով Քրիստոսի՝ մեզ համար եղած մահը և սրբերի ճգնությունը՝ գոհանում ենք սուրբ Խորհրդով՝ բոլոր հավատացյալների՝ թե՛ ողջերի և թե՛ ննջեցյալների համար: Քանզի ինչպես որ մենք, սրբերի հետ ցնծալով, Աստծուն ընծա և գոհություն ենք մատուցում՝ նրանց պսակումը մերը համարելով, այդպես և նրանք, իբրև իրենց անդամների, խնամակալ են լինում մեզ՝ բարեխոսելով Տիրոջը, մանավանդ ահավոր Պատարագի

ժամանակ: Եվ մենք նրանց միջոցով գոհանալով՝ յուրաքանչյուր տնից հետո ասում ենք.

**Հիշիր, Տեր, և ողորմիր:**

Այսինքն՝ **հիշիր** սրբերի՝ Քո նկատմամբ եղած սերն ու վաստակը **և ողորմիր մեզ**, քանզի նրանք մերն են և մեզանից, և մենք ամենքս մեկ Եկեղեցու ենք պատկանում, մեկ Քրիստոսի, որ մեր գլուխն է, Ում մարմինն ու անդամներն ենք բոլորս, ինչ պատճառով էլ սրբերի հիշատակությամբ դարձյալ սկսում ենք, ըստ կարգի, ողորմություն խնդրել սուրբ Պատարագի միջոցով.

**15.<sup>19</sup> Հիշիր, Տեր, ողորմիր և օրհնիր սուրբ Միոնը,  
Քո ընդհանրական<sup>20</sup> առաքելական Եկեղեցին, որը փրկեցիր և  
ազատեցիր Քո Միածնի պատվական արյամբ,  
և տո՛ւր նրան Քո անսահման խաղաղությունը:**

**Միոն**-ը մեր լեզվով մայր է նշանակում, և եթե մաղթանքը Երուսաղեմի Եկեղեցու մասին է, Երուսաղեմի սուրբ վայրերին է վերաբերում, քանզի պետք է նախ այն հիշել և հետո՝ աշխարհի բոլոր Եկեղեցիները: Իսկ եթե ամբողջ Եկեղեցին է մայր **Միոն** անվանում, ապա սա հեռու չէ դիտավորությունից, որովհետև սուրբ Եկեղեցին մեզ ծնում է սուրբ Ավագանով և սնուցում հոգևոր սննդով: **Կաթողիկե (ընդհանրական)** նշանակում է համաշխարհային: **Ողորմություն** ենք հայցում բոլոր Եկեղեցիների համար, որոնք համայն աշխարհում հաստատվել են առաքյալների քարոզչության հետևանքով, ինչ պատճառով և **առաքելական** ենք անվանում: Իսկ նրանք, որոնք շեղվել են առաքյալների դավանությունից, այլևս **առաքելական** չեն կոչվում: Իսկ առաքելական Եկեղեցիները թեպետև բազում վայրերում են, սակայն մեկ են ասվում

<sup>19</sup> Այս և հետագա մաղթանքները՝ մինչև սարկավագի քարոզը, ասում է պատարագի քահանան:

<sup>20</sup> Գրաբար բնագրում՝ «կաթողիկե»:

միասնական հավատքի պատճառով, ուստիև այստեղ բոլոր Եկեղեցիներն իբրև մեկ են ներկայացվում:

***Որոջ փրկեցիքի և ազատեցիքի Քո Միածնի պատվական արյամբ:***

Քանզի Քրիստոսի սուրբ ***արյամբ փրկվեցինք*** թե՛ անեծքից, թե՛ մեղքից, թե՛ մահվանից և ***ազատվեցինք*** սատանայի ծառայությունից: Արդ, բազմանունաբար չի ասում «Եկեղեցիներ», այլ՝ ***Եկեղեցի***, և ոչ էլ՝ «որոնց փրկեցիք», այլ՝ ***որոջ փրկեցիք***, նաև չի ասում «տուր նրանց», այլ՝ ***տուր նրան Քո*** անշարժ ***խաղաղությունը***:

***Հիշիր, Տեր, և ողորմիր ու օրհնիր բոլոր ուղղափառ  
եպիսկոպոսներին, ովքեր ուղիղ են ամփոփում  
ճշմարտության խոսքը:***

Ի՞նչ է ***ուղիղ ամփոփելը***: Դա ճիշտ, ուղիղ և ստույգ վարդապետությունն է, որին չի զուգակցվում որևէ շեղում կամ խոտորում՝ աջ կամ ձախ. այդ պատճառով էլ այս խոսքին հարում է՝ ***ճշմարտության խոսքը***, քանզի ***ճշմարտությունը*** մեկն է, իսկ սուտը՝ բազում: Այս «ամփոփ» խոսքի մասին Եսային կանխագուշակեց (*Եսայի Ժ 22*) և Պողոսն էլ մեկնում է. «Վճռական և ***ամփոփ*** մի բան է կատարվելու արդարությամբ, այդ վճռական բանը Տերն է կատարելու երկրի վրա» (*Հռոմ. Թ 28*), որովհետև ոչ թե բազմապատիկ օրենքներով, այլ Սուրբ Երրորդության և Քրիստոսի տնօրինության հանդեպ ունեցած հավատքով ենք արդարանում:

Արդ, Աստծո ողորմությամբ խնդրում ենք զորացնել ***ուղղաքարոզ եպիսկոպոսներին*** իրենց առաջնորդության գործերում: Ամենքի համար խնդրելով՝ առավել ևս պաղատում ենք մեզ առաջնորդողի համար՝ այսպես ասելով.



***Առավել ևս հիշիր մեր ուսուցչին, վերակացուին,  
մեր հոգիների տեսչին՝ (այսինչ) եպիսկոպոսին,  
և նրան մեզ համար շնորհի՛ր, Տեր, երկար օրեր:***

Ինչո՞ւ չբավարարվեց միայն **եպիսկոպոս** ասելով, այլ նաև կոչեց նրան **մեր ուսուցիչ, վերակացու** և **մեր հոգիների տեսուչ**. որպեսզի ջերմեռանդ սրտով ու ճշմարիտ սիրով խնդրենք նրա համար՝ գիտակցելով, որ խնդրանքներն ավելի մեզ համար են, քան **եպիսկոպոսի**: Որովհետև եթե նա ջանասեր է ուսուցման մեջ, վերակացությունը լավ է կատարում, քննում է բոլորի հոգիները, թե ինչ վիճակում են, և տեսնելով, որ այս կամ այն մարդիկ ծույլ են բարեգործության մեջ և կամ իրենց հոգիներում որևէ արատ կամ բիծ ունեն՝ չի ծուլանում նրանց համար աղոթել, նրանց խրատել ու կատարյալ արթնությամբ հսկել, ապա հոտի շահն առավել է փնտրում, քան իրենը: Եվ մենք, սա գիտենալով, ամենայն փութեռանդությամբ խնդրենք մեր առաջնորդների համար՝ խորհելով, որ պարտավոր ենք նրանց համար մեր աղոթքներով հատուցել մեզ համար նրանց աղոթքները, քանզի երբ մենք նրանց համար աղաչում ենք, մեզ համար կատարվող նրանց խնդրանքներն այսպես առավել լսելի են դառնում Աստծուն: Պողոս առաքյալն էլ կորնթացիներին այսպիսի խրատ է տալիս. «Մեր բերանները բաց են ձեզ համար և մեր սրտերն՝ ընդարձակ: Դուք մեր կողմից որևէ նեղություն չեք կրում» (*Բ Կորնթ. Ձ 11-12*): Սա նշանակում է հետևյալը. թեպետև դուք բազում եք և ուրիշներ էլ կան, ում համար հոգ ենք տանում, սակայն մեր սրտերը չեն նեղվում՝ մեզ ստիպելով որևէ մեկին մոռանալ և խրատից ու աղոթքից զրկել: Բայց «դուք,- ասում է,- ձեր սրտում նեղվում եք» և իմ՝ մեկիս մասին իսկ այնքան չեք հոգում, որքան ես՝ ձեր ու ամենքի, և ավելացնում է. «Արդ, դուք էլ, նույն հատուցումն անելով (որդիների տեղ եմ դնում ձեզ), լայնորեն բաց արեք ձեր սիրտը»: Սա ասում էր, որպեսզի, հատուցող դարձնելով, օգուտ տա նրանց. միայն իր օգուտը չէր փնտրում, այլ շատերի, ինչպես և ինքն ասաց:

Այդ պատճառով բոլոր թղթերում հրամայում էր իր համար աղոթել նրանց օգուտի մասին առավել հոգալով, քան իր: Պողոսը նրանց աղոթքն էր խնդրում, բայց կամենում էր, որ իր՝ նրանցից օգտվելուց նրանք և՛ն շահեն: Այդ պատճառով էլ աղոթքի վերաբերյալ խոսելիս չէր ասում «որպեսզի շահեն», այլ՝ «որպեսզի խոսքի գերազանցություն լինի մարդկանց փրկության համար» (*հմմտ. Ա Կորնթ. Բ 1*):

***Հիշիր, Տեր, ողորմիր և օրհնիր մեզ, Քո առջև կանգնած այս ժողովրդին ու Պատարագը մատուցողիս և յուրաքանչյուրին պարզևհի պիտանին ու օգտակարը:***

*Մեզը* վերաբերում է Խորհրդի *առջև կանգնածներիս*<sup>21</sup>, իսկ *ժողովուրդ* ասելով նկատի ունի ամբողջ ժողովրդին. պատարագ մատուցողն էլ, պարզ է, որ խորհուրդը կատարողն է: ***Եվ յուրաքանչյուրին պարզևհի պիտանին ու օգտակարը:*** Մենք, ասում է, հաճախ անօգտակարն ենք խնդրում, սակայն Դու, որ գիտես մեր կարիքներն ու օգուտը, հայրաբար և արարչապես շնորհիր *յուրաքանչյուրին*, այսինքն մեզ ամենքիս, ըստ օգտակարության:

***Հիշիր, Տեր, ողորմիր և օրհնիր Քո սուրբ Եկեղեցու ընծայաբերներին, նաև նրանց, ովքեր ողորմածությամբ հիշում են աղքատներին, և Քո ընդարույս առատաձեռնությամբ պարզևհի նրանց խնդրանքները՝ հարյուրապատիկն այստեղ և հանդերձյալում:***

Ոմանք սրբազան սպասքներ են *ընծայում* Եկեղեցուն, ոմանք՝ Աստվածաշունչ գրքեր, ոմանք էլ նվիրաբերում են կալի ու հնձանի բերքից և անասուններից, ըստ իրենց կարողության *ընծայաբերում* են նաև փրկչական տոներին ու սրբերի հիշատակության օրերին: Ուստի մենք խնդրում ենք նրանց, ինչպես նաև *ողորմածների* համար, ովքեր իրենց ունեցվածքից բաժին են հանում

<sup>21</sup> Նկատի ունի Եկեղեցու՝ ս. Պատարագի արարողությանը մասնակից սպասավորներին:

**աղքատներին:** Եվ **ողորմածությամբ** բառը զուր տեղը չի ավելացնում, այլ որպեսզի հասկանանք, որ **աղքատին** գթությամբ, **ողորմությամբ** և կամեցողությամբ հիշելն ավելի հաճելի է Աստծուն, քան տուրքերը, ինչի մասին նաև առաքյալն է ասում (*տե՛ս Բ Կորնթ. Թ 7*): **Ողորմությունը** կախված է կամքից, իսկ տալը՝ ունեցվածքից, և ողորմություն գործողների պարտապանն Աստված է: Աղաչում ենք Նրան, որ հատուցի Իր **ընդաբույս առատաձեռնությամբ. ընդաբույս** նշանակում է ինքնաբույս, այսինքն՝ ողորմությունը հատուկ է Քր բնությանը: Եվ **հարյուրապատիկը** հատուցիր, **այստեղ** մեկի դիմաց՝ **հարյուր**, իսկ **հանդերձյալում**՝ պատրաստված անպատմելի բարիքները:

**Հիշի՛ր, Տե՛ր, ողորմի՛ր և օրհնի՛ր  
ննջեցյալների հոգիները:**

Խնդրում ենք **հիշել** նրանց Իր արքայության մեջ, ինչպես ավագակին, և **ողորմությամբ օրհնել** աջակողմյանների հետ, ովքեր լսում են երանալից այս խոսքը. «Եկե՛ք, Իմ Հոր օրհնյալներ, ժառանգեցե՛ք ձեզ համար պատրաստված արքայությունը» (*Մատթ. ԻԵ(25) 34*):

**Հիշի՛ր, Տե՛ր, նաև նրանց, ովքեր հանձնարարեցին  
աղոթել իրենց համար, և նրանց ու մեր խնդրանքների կամքն  
առաջնորդիր դեպի ճշմարիտն ու փրկությամբ լին:**

Ինչպես որ կառապանն է ձիերին ուղղում և թույլ չի տալիս խոտորվել պողոտայից, այդպես էլ Դու եղիր մեր աղոթքների ուղղիչը, որպեսզի դրանք չշեղվեն Քո կամքից և չխնդրենք որևէ երկրավոր բան կամ թշնամիների չարիքին հատուցում, կամ մտքներս չհեռացնենք աղոթքների իմաստներից և այս ու այն կողմ չթափառեցնենք, այլ որպեսզի մեր հոգիները երկինք բարձրացնելով՝ մաքուր մտքով խնդրենք Նրանից պիտանին ու օգտակարը, ինչն էլ իրականացնում է մեր ամբողջական **փրկությունը**:

**Եվ վարձատրոհի բոլորին:**

Այսինքն՝ **բոլորին վարձ** տուր: Ի՞նչ վարձ:

**Անանց ու երանելի բարիքներով,**

որոնք չեն անցնում, այլ երանելի են դարձնում ընդունողներին:

**Մեր խորհուրդները մաքրելով՝**

այսինքն՝ ազատելով խղճմտանքից ու չար գործերից,

**մեզ տաճար դարձրու՝ ընդունելու Քո Միածնի և մեր Տեր**

**ու Փրկիչ Հիսուս Քրիստոսի մարմինն ու արյունը:**

Ասում է՝ այս փրկական Պատարագով մեզ իբրև բնակարան և տաճար պատրաստիր **Քո Միածնի** համար:

**Ում հետ Քեզ՝ ամենակալ Հորդ,**

այսինքն՝ Որդու **հետ** նաև **Քեզ՝ ամենակալ Հորդ,**

**կենդանարար և ազատիչ Սուրբ Հոգով հանդերձ,**

**վայել են փառք, իշխանություն և պատիվ**

**այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:**

Ք ա թ ո գ

**16. Քեզ՝ ամենակալ Հորդ, գոհություն ու փառաբանություն ենք**

**մատուցում սուրբ Սեղանին դրված այս սուրբ, անմահ և**

**աստվածային Պատարագի համար:**

Նա Միածին Որդու **Հայրն** է ու ամեն ինչի Տերը և Աստված լինելով՝ **ամենակալ** է: Ասում է՝ **գոհություն ու փառաբանություն ենք** մատուցում, որ արժանի արեցիր մեզ ահավոր **Սեղանին** այսպիսի **պատարագ** դնելու, որը ոչ թե երկրից է, անասուններից, այլ

երկնքից ու աստվածային, քանզի զոհն Աստծո Որդին է՝ անարատն ու անմեղը, Ուն աղոթքը *սուրբ* է կոչում: Եվ թեպետ զոհը մահ է ցույց տալիս, սակայն Սա կենդանարար է, դրա համար էլ *անմահ* է անվանվում: Քանզի ինչպես երբ Քրիստոսը մարդկային հոգին ավանդեց, մարմինն աստվածությամբ կենդանի մնաց, քանզի Աստված Իր հետ միավորված և խառնմամբ մեկ դարձած մարմին էր առել, և երբ կամեցավ, Ինքն Իրեն հարություն տվեց, այդպես էլ թե՛ հացին և թե՛ գինուն միացած կենդանի աստվածությունն *անմահ* է և անմահություն է պարզում մերձեցողներին: Ինչպես որ, օրինակ, Նրա մարմինը մեռնելիս մեռելներից շատերին կենդանացրեց (*Մատթ. ԻԷ(27) 52-53*), այդպես էլ Պատարագը, լինելով տերունական մահվան հիշատակ, կենդանի է դարձնում խղճմտանքից մաքրվածներին, ովքեր հաղորդվում են Նրան, քանզի իբրև սրա կանխագուշակություն հարություն առան նրանք, ովքեր Քրիստոսի մեռելությամբ կենդանացան: Արդ, նայի՛ր այն ժամի խաչին և հավատա՛, որ նույնն է կատարվում նաև այժմ, քանզի Սա փոքր չէ այն մարմնից, այլ հենց նույնն է: Այդ պատճառով էլ Տերը խոստացավ Սա ճաշակողներին հավիտենական կյանք տալ: Սակայն ինչպես այն ժամանակ անմաքուրներից ոչ ոք չկենդանացավ, այդպես էլ այժմ առանց սրբության կամ ապաշխարության որևէ մեկը կենդանություն չի գտնում: Իսկ եթե երբեմն հանդգնում են առանց ապաշխարության հաղորդվել, ինչպես Հուդան, նրա նմանությամբ էլ դատապարտվում են:

Այսպիսի մեծ պարզևների համար գոհանալուց հետո քարոզիչը խնդրում է.

***Սա պարզկի՛ր մեզ***

***մեր փրկության և կենդանության համար:***

Եվ Սա, որ Սեղանի վրա է, այս պատարագման միջոցով նո՛ւյնը դարձրու:

***Սրանով շնորհիր սեր, հաստատություն և  
ըղծալի խաղաղություն Քո սուրբ Եկեղեցուն,  
բոլոր ուղղափառ եպիսկոպոսներին, մեր եպիսկոպոսապետին և  
այս Պատարագը մատուցող քահանային:***

Արդ, թեպետ քահանան այս մասին մի անգամ խնդրել էր, սակայն սարկավազը բարձրաձայն կրկնում է, որպեսզի լսելի լինի ամենքին, բոլորը միաբան պաղատեն, և որպեսզի սովորենք, թե որքան օգտակար են Աստծո և միմյանց նկատմամբ ***սիրո***, նաև ***հաստատության*** ու ***խաղաղության*** պարզևները և առաջնորդների համար խնդրանքները:

Նաև ավելացնում է.

***Ուստի, Տե՛ր, Քո անմոռաց գթությամբ հիշի՛ր***

***այս Պատարագը մատուցողներին:***

Քանի որ Աստծո արարչական ***գութը*** տարածվում է բոլոր արարածների վրա, սարկավազը մատուցողների անունից աղաչում է Նրան չմոռանալ արարչական գութն իրենց նկատմամբ, այլ մշտապես հիշել ու այցելել իրենց:

***Հիշի՛ր, Տե՛ր, Քեզ վրա իրենց հույսը դրած***

***ննջեցյալների հոգիները:***

Քանի որ հրաման ունենք խնդրել հավատով ու հույսով ննջածների համար, ուստի սարկավազը խնդրում է ***հիշել*** Նրա վրա ***իրենց հույսը դրած ննջեցյալների հոգիները:***

***Տե՛ր, Քո զորությանը և այս անմահ Պատարագով  
ապրեցրո՛ւ և ողորմի՛ր մեզ:***

Քանի որ, ասում է, ***այս Պատարագը*** մեզ համար է, հանուն այս սուրբ Պատարագի՝ ***Քո ապրեցնող զորությունը թող ողորմի մեզ:***

Աղ ո թ ք

***17. Աստված ճշմարտության և Հայր ողորմության:***

Ասում է՝ բնությանը ***Աստված*** ես, որովհետև արարիչ ես, իսկ ***Հայր*** դարձար, որովհետև ողորմեցիր մեզ, այդ պատճառով էլ ***ճշմարտություն*** բառով նկատի է առնվում այն, ինչ ստույգ է, իսկ ***ողորմություն*** բառով ցույց է տրվում Հոր խնամածությունը:

***Գոհանում ենք Քեզանից, որ մեր՝ մեղավորներիս բնությունն ավելի  
մեծարեցիր, քան երանելի նահապետներինը:  
Որովհետև նրանց համար Աստված կոչվեցիր,  
իսկ մեզ համար կամեցար Հայր կոչվել:***

Աստված ասաց. «Ես եմ Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստվածը» (Ելք 4 6), իսկ հավատացյալների մասին ասաց, որ Իր որդիներն են, այդ պատճառով էլ Քրիստոսը մեզ հրամայեց աղոթելիս Աստծուն ***Հայր*** անվանել (տե՛ս Մատթ. 2 9), իսկ առաքյալն ասում է. «Այսուհետև ծառա չես, այլ որդի» (Գաղատ. 7 7): Արդ, պատարագիչն Աստծուց ***գոհանում է*** Նրա անչափ մարդասիրության համար, քանզի Նա մեղքի պարտքի տակ ընկած մեր բնությունը գթալով առավել մեծարեց, քան սուրբ նահապետներինը:

***Եվ այժմ Քեզանից տրված այս նոր ու պատվական  
անվանադրության շնորհն օրըստօրե պայծառացնելով ծաղկեցրու՝  
Քո Եկեղեցում:***

Քանի որ, ասում է, մեր բնությունն այնքան սիրո արժանացրիր, որ մեզ Քո որդիներն անվանեցիր, իսկ Քեզ՝ մեր Հայրը, ուստի երբեք մի՛ մոռացիր մեզ գթալ, ինչպես հայրը՝ որդիներին, թեև մեղանչում ենք, և մի՛ զրկիր մեզ այսպիսի մեծապարզ և ***շնորհից***, այլ ջերմագութ գորովով, ինչպես նորոգեցիր մեր մեջ ***այս պատվական անվանադրության շնորհը, օրըստօրե պայծառացնելով և ծաղկեցնելով*** պահիր ***Քո Եկեղեցում***, այսինքն՝ Քեզ հավատացողների մեջ:

***Եվ տուր մեզ համարձակաձայն բացել մեր բերանը,  
կանչել Քեզ, երկնավոր Հայր, և ասել:***

Քո ողորմության շնորհով տո՛ւր մեզ համարձակվել և ապավինել Քո քաղցրությանը, գթությանն ու անբավ ներողամտությանը և Քեզ՝ սուրբ ու երկնավոր Հորդ, հողեղեններիս ու մեղավորներիս ***Հայր*** անվանել: Եվ զուր տեղը չի ավելացնում ***բացել մեր բերանը*** խոսքը, ***այլ*** քանի որ մեր բերանի մշտապես գործվող սխալները փակում են այն, ուստի աղաչում ենք քավել ու մաքրել ***մեր բերանը*** և ապա վստահություն տալ այն ***բացելու*** և ***համարձակությամբ*** Աստծուն ***Հայր*** անվանելու:

«Հայր մեր, որ երկնքում ես» աղոթքը ս. Գրիգոր Նյուսացին և ս. Հովհան Ռսկեբերանը<sup>22</sup> մանրամասնորեն մեկնել են, կամեցողները կարող են նրանցից ստուգապես սովորել<sup>23</sup>:

<sup>22</sup> Ընդհանրական Եկեղեցու սրբերի դասը կարգված Դ դարի հայրեր, Եկեղեցու Տասներկու վարդապետներից:

<sup>23</sup> Այս գործերի մասին տես Ջարբհանալեան, Մատենադարան հայկական թարգմանություն, Վենետիկ, 1889, էջ 364, 582:



**18. Հայր մեր, որ երկնքում ես<sup>24</sup>**

Քանի որ մեր մարմնավոր ծննդի համաձայն ունենք երկրավոր հայր, իսկ Ավագանից Սուրբ Հոգով ծնված և Քրիստոսի մարմնով ու արյամբ Նրան կցորդված լինելով՝ մեզ իբրև հայր ունենք **երկնավոր Հորը**՝ Ծնողին Քրիստոսի, Ում մենք միացանք, այդ պատճառով էլ Տերը սովորեցրեց այսպես ասել.

**Հայր մեր, որ երկնքում ես,**

**Թող սուրբ լինի անունը:**

Այսինքն՝ թող մեզ համար **սուրբ** և փառավոր **լինի Քո անունը:**

**Թող Քո արքայությունը գա:**

**Արքայությունը** թագավորությունն է: Խնդրում ենք, որ Քրիստոսի թագավորությունը Նրա շնորհով տիրի մեզ, որպեսզի մեր մեղքերը թագավորելով՝ չծառայեցնեն մեզ սատանային: Նաև ցանկանում ենք Նրա հանդերձյալ թագավորության գալուստը, որ խափանում է սատանայի ու մեղքի իշխանությունը:

**Թող Քո կամքը լինի երկրում,**

**ինչպես որ երկնքում է:**

**Ինչպես որ երկնքում** չկա մոլորություն ու մեղք, այլ ամեն ինչ **Քո կամքի** համաձայն է, այդպես էլ թող երկրից վերանա ամբարշտությունը, մարդիկ հրեշտականան, և բոլորը դառնան Քո կամարարները:

**Մեր հանապազօրյա հացը տո՛ւր մեզ այսօր:**

Այսինքն՝ մեր մարմնին հարկավոր բաներն ամեն օր պարզևհի՛ր մեզ:

---

<sup>24</sup> Այստեղ չկա որևէ նշում այն մասին, թե «Հայր մեր»-ն ով է արտասանում միայն պատարագի՞չը, ժողովո՞ւրդը, թե երկուսը միասին: Ըստ Հ. Գաթրճյանի՝ «Հայր մեր, որ երկնքում ես» բառերն ասում էր պատարագիչը, մնացածը՝ ժողովուրդը (տես Հ. Յովսէփ վ. Գաթրճեան, Սրբազան պատարագամատոյցք հայոց, հտ. Ա, Վիեննա, 1897, էջ 293):

***Եվ թող մեզ մեր պարտքերը:***

Այսինքն՝ ների՛ր մեզ այն ամենը, ինչով մեղանչեցինք և պատիժների  
*պարտապան* դարձանք:

***Ինչպես որ մենք ենք թողնում մեր պարտապաններին:***

Այսինքն՝ նրանց, ովքեր մեզ են պարտապան:

***Եվ մեզ մի՛ տար դեպի փորձություն՝***

փորձվելու կան սատանայից և կան մարդկանցից՝ մեղքերով կամ  
որևէ վտանգով:

***Այլ փրկի՛ր մեզ չարից:***

Այսինքն՝ սատանայական ամեն տեսակ որոգայթներից:

***Տե՛ր տերերի, Աստված աստվածների:***

Բոլոր *տերերի* և *աստվածների Աստված* և *Տե՛ր*, Դու հրեշտակների  
ու քահանաների Աստվածն ես:

***Հայր երկնավոր, աղաչո՛ւմ ենք Քեզ, մեզ մի՛ տար դեպի փորձություն  
ու դատապարտություն, այլ փրկի՛ր չարից և ազատի՛ր  
փորձությունից:***

Ասում է՝ հայրաբար փրկի՛ր մեզ *փորձությունից*, անդատապարտ  
պահիր և ազատի՛ր չարից, քանզի ամեն բան կարող ես, և ամենքին  
հաղթող է Քո տերությունը: Այս պատճառով ավելացնում է.

*Քոնն են զորությունն ու արքայությունը,  
և Քեզ վայել են փառք, իշխանություն և պատիվ  
այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից:*

Աղ ո թ ք

**19. Որ կյանքի ու փրկության աղբյուրն ես և  
ողորմության բխում:**

Այսինքն՝ *կյանքն ու ողորմությունը* Քեզանից են *բխում*՝ իբրև աղբյուրից:

**Ողորմիր այս ժողովրդին, որ խոնարհվելով  
երկրպագում է Քո Աստվածությանը:**

Քո այս ժողովուրդը, որ *երկրպագում է Քո Աստվածությանը* և *խոնարհվում* Քո առջև, թող վայելի այդ մշտնջենահոս աղբյուրից:

**Եվ ամբողջական պահիր:**

*Ամբողջական* այն է, որ մենք անվանում ենք «համբողջ»: Արդ, ասում է՝ թող բոլորն *ամբողջական* պահվեն:

**Դրոշմիր սրանց հոգիներում տեսանելի մարմնիդ ձևը:**

Քանզի ինչպես որ մեր *մարմնի* աչքերին այս խորհուրդը մարմնավոր ձևով է երևում, այդպես էլ մեր *հոգիներում* թող պատկերվի այս աստվածավայելուչ փառավոր խորհրդի ահավորությունը, քանզի դրոշմը պատկեր է: Արդ, ինչպես առաքյալն է Աստծո մասին ասում, թե Նրա փառքը տեսնում ենք, ինչպես հայելու մեջ (*տես Ա Կորնթ. ԺԳ(13) 12*), այդպես էլ մենք ենք աղաչում, որ Պատարագի աներևույթ փառքը տեսնող լինենք:

**Ժառանգելու և իբրև բաժին ստանալու**

**հանդերձյալ բարիքները:**

«Ժառանգեցինք,- ասում է առաքյալը,- մեզ վիճակված բաժինը»  
(Եփես. Ա 11): Աղաչում ենք, թող ոչ ոք խոտան չգտնվի, այլ բոլորս  
լինենք **հանդերձյալ բարիքների ժառանգ** և բաժնետեր:

Ապա ավելացնում է.

**Մեր Տեր Հիսուս Քրիստոսով:**

Այսինքն՝ թող ժողովուրդը Նրա օգնությամբ ու շնորհով արժանանա  
**հանդերձյալ բարիքներին**, որոնք **մեր Տեր Հիսուս Քրիստոսով** իբրև  
առհավատչյա ընդունեց:

**Ում հետ Քեզ՝ Սուրբ Հոգուդ, և ամենակալ Հորդ  
վայել են փառք, իշխանություն և պատիվ  
այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:**

**20. [Սրբությունները սուրբերին են վայել<sup>25</sup>:**

**Հայր սուրբ, Որդի սուրբ, Հոգի սուրբ:]**

**21. Սուրբ Հայր, որ մեզ Քո Միածին Որդու  
անունով քրիստոնյա կոչեցիր:**

Ավարտին հասցնելով Պատարագի մատուցման համար բոլոր  
գոհություններն ու աղոթքները և եզրափակելով Սուրբ Երրորդ-  
դությանն ուղղված մասնավոր օրհնությամբ՝ պատարագիչը դար-  
ձյալ միասնական օրհնություն ու փառաբանություն է մատուցում և  
նորից սկսում գոհություն ու մաղթանքներ, սակայն ոչ թե ամբողջ  
մարդկության համար, այլ միայն հավատացյալների: Եվ քանի որ  
բարձրաձայն ասաց, որ **Սրբությունները սուրբերին են վայել**, և  
հայտնեց, թե որոնք են **սրբությունները**՝ ասելով՝ **Հայր Սուրբ, Որդի**

<sup>25</sup> Հետագայում այս խոսքը («Սրբութիւնք սրբոց վայելեն») փոխարինվել է այժմյան  
«Ի Սրբութիւն սրբոց»-ով: Տե՛ս Յ. Գաթրճեան, Սրբազան պատարագամատոյցք  
հայոց, էջ 154, 295:

*Սուրբ, Հոգի Սուրբ*, և որ Քրիստոսի սուրբ պատարագն է իբրև ընծա վայել Սուրբ Երրորդությանը, ուստի նրանք, ովքեր հաղորդվում են *Սրբություններին*, պարտավոր են մաքուր ու *սուրբ* լինել: Բայց քանի որ մեր մարդկային բնությունը միշտ աղտոտվում է սխալներից և ամբողջապես անախտ մնալ չի կարող, ուստի պատարագիչը մեր տկարությանն իբրև օգնական՝ Աստծո գթությունն է կանչում, որպեսզի դրանով մաքրություն ստանալով՝ Մաքուրին մերձենանք: Արդ, նախ և առաջ *Հայր* ասելով՝ գթության է շարժում Աստծո մարդասիրությունը, ապա այն խոսքով, որ «Հայր» բառին է ավելացնում՝ *որ մեզ Քո Միածին Որդու անունով քրիստոնյա կոչեցիր*, ասում է՝ *Քո Միածին Որդու անունն* ընդունելու չափ շնորհ տվեցիր մեզ. քանզի Նա կոչվում է Քրիստոս, իսկ մենք՝ քրիստոնյա, այսինքն՝ քրիստոսյան: Սրանով և՛ գոհություն ենք հայտնում, և՛ Աստծուն գթության մղում: Որովհետև եթե մինչ օտար էինք, Քո սերը ստիպեց Քեզ այնպես գթալ մեզ, որ մինչև իսկ մեզ *Միածինը* բաժինն ու ժառանգությունը դարձրիր և Նրա անունով կոչեցիր, ապա որքան առավել մեզ՝ քրիստոնյա դարձածներիս, կարեկից կլինես՝ Քո *Միածինն* և սիրելի *Որդուն* մեր պատկանելու և Նրա *անունով* կոչվելու պատճառով:

***Եվ հոգևոր Ավագանով մեզ մկրտություն շնորհեցիր  
մեղքերի թողության համար:***

Ասում է, ոչ միայն *Քո Միածին Որդուն* իբրև բաժին և ժառանգություն տվեցիր մեզ՝ համաձայն մարգարեի միջոցով տրված խոստման, թե՛ «Հեթանոսներին Քեզ իբրև ժառանգություն պիտի տամ» (*Սաղմ. Բ 8*), այլ նաև կամեցար մեզ դարձնել եղբայրներ *Քո* սիրելի և համագո *Որդուն*, որպեսզի «Նա լինի անդրանիկը բազում եղբայրների մեջ» (*Հռոմ. Ը 29*): Այդ պատճառով էլ մեր մեղքերի աղտեղությունը լվացիր Ավագանի մկրտությամբ և Սուրբ Հոգու միջոցով վերստին ծննդյամբ մեզ որդիներ դարձրիր: Սա ասելով նաև ցանկանում է բոցավառել ու բորբոքել հայրական սերը, «որպեսզի Քեզանից

ելնող Սուրբ Հոգին, որ երկնեց մեզ և Քեզ որդեգիր դարձրեց, արժանացնի մեզ հաղորդվելու **Քո Միածնի** մարմնին և արյանը: Եվ քանի որ խիստ սաստկացավ Քո սերը մեր հանդեպ, ուստի չկարողացար բնությամբ Քո Որդուն և մեզ՝ շնորհով որդիացածներին, իբրև տարբեր որդիներ ունենալ, այլ հաղթվելով Քո մարդասիրությունից՝ կամեցար Նրան մեզ հետ խառնել, որպեսզի Նա մեր գլուխը լինի, մենք՝ Նրա մարմինն ու անդամները, և մեկ լինենք Քրիստոսի մարմնով ու արյամբ՝ Նրան միացած ու համաձայնեցված. «Քանզի բոլորս մի մարմին ենք Քրիստոսով» (*Հռոմ. ժԲ(12) 5*),- ասաց առաքյալը, և ըստ այսմ՝ բոլորս՝ մի որդի: Արդ, այսպիսի անպատմելի սիրո հիշատակը կատարելով՝ պատարագիչն այնուհետև աղաչանք է մատուցում, որ մեր մեղսալից սխալների պատճառով պատվից ու շնորհներից չզրկվենք: Ուստի, ասում է, ինչպես որ մեր նախկին այնքան վատթարություններից հանելով՝ մեզ այսպիսի լավ վիճակի մեջ դրեցիր, այժմ էլ մաքրի՛ր մեզ և այդպես մերձեցրո՛ւ Քրիստոսի մարմնին ու արյանը:

Ապա ասում է.

***Այժմ էլ արժանացրու ընդունել այս Հաղորդությունը  
մեր մեղքերի թողության համար:***

*Հաղորդություն* է անվանում, քանզի Նա միանում է մեզ, իսկ մենք՝ Նրան: Այդ պատճառով էլ պետք է արժանապես գոհանալ այսպիսի շնորհի համար: Այսպես է ասում.

***Եվ ամեն ինչի համար անդադար փառավորել  
Հորդ, Որդուդ և Սուրբ Հոգուդ այժմ և միշտ և  
հավիտյանս հավիտենից:***

***22. [Ճաշակենք] մեր Տիրոջ և Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի  
սուրբ և պատվական մարմնից ու արյունից, որ բաշխվում է  
մեր մեջ: Սա է կյանքը, հարության հույսը,***

***մեր մեղքերի քավությունն ու թողությունը:***

Քահանան խոսքն ուղղում է ժողովրդին՝ զգուշացնելով, որ Նա, Ում մերձենում և Ում հետ հաղորդվում են, սրբերի Սուրբն է, առավել պատվական է, քան երկինքը, երկիրն ու բոլոր արարածները, և ամենքի արարիչն է ու բոլոր պատվական գոյերի հաստատիչը: Ասում է՝ Նրանն է ***այս մարմինն ու արյունը***, Ում մենք հավում ենք: Նա մեր Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոսն է, Ով փրկեց մեզ սատանայից, ազատեց մեր մեղքերի ծառայությունից և տիրեց մեզ: Նա մեզ համար խաչվելիս անփշրելի ոսկորներով մնաց խաչի վրա (*Հովհ. ԺԹ(19) 33*), իսկ այժմ բաժանվում ու բաշխվում է մեր մեջ՝ ամենքիս հետ միավորվելու համար: Սա է ***կյանքը***, որովհետև մեր Տերն ասաց. «Ով այս հացն ուտում է, հավիտյան կապրի» (*Հովհ. Զ 51*): Նաև ***հարության հույսն*** է, քանզի մեր Տերը նաև սա ասաց. «Ով ուտում է սրանից, Ես նրան վերջին օրը հարություն կտամ» (*Հովհ. Զ 55*): Ո՛չ թե այս հացից չուտողները հարություն չեն առնելու, այլ քանի որ հարություն են առնելու ոչ թե ապրելու, այլ դատաստանի համար, այդ պատճառով էլ այդ ***հարությունը*** պարզև չէ, այլ պատիժ: Քանզի Տերն ասաց. «Կգա ժամանակ, երբ գերեզմաններում բոլոր գտնվողները կլսեն Նրա ձայնը և դուրս կգան» [ովքեր բարիք են գործել՝ կյանքի հարության համար, իսկ ովքեր չարիք են գործել՝ դատաստանի ***հարության*** (*Հովհ. Ե 29*): Այս պատճառով է, որ Իր մարմինը վայելողներին համարում է ստուգապես հարություն առածներ, և այս հույսն է քահանան տալիս ժողովրդին՝ ասելով. «***Սա է կյանքը, հարության հույսը***»:

Այլև մեր ***մեղքերի քավությունն ու թողությունն*** է անվանում. քանզի Մկրտության ավագանից հետո խոստովանությամբ ու ապաշխարությամբ Սրան մերձենալն է մաքրում մեր աղտերը, որովհետև Ավագանով մաքրվելը լվացման ձևով է կատարվում, իսկ այս Խորհրդին հաղորդակցությունը՝ հնոցի օրինակով: Քանզի Ավագանի մեջ իբրև լվացման ենթակա նյութ ենք մտնում և այնտեղից փոխարկվում ոսկու կամ արծաթի, ինչն էլ այնուհետև,

աղտերից մաքրվելու համար, լվացման անհրաժեշտություն չունի, այլ հնոցի: Այս պատճառով էլ այդ ահավոր Կրակի մեջ մտնելը մաքրագործում է: Եվ ինչպես այնտեղ ոսկին ու արծաթը զտելու ժամանակ նաև ուրիշ նյութեր են պետք գալիս, և դրանից հետո է, որ աղտը կրակով մաքրվում է նրանցից, այդպես էլ այստեղ խոստովանությունն ու ապաշխարությունն են այս մաքրագործման կցորդները: Եվ ինչպես այնտեղ միայն կրակը պարզապես այրում է և ո՛չ թե ոսկին կամ արծաթը հալեցնում ու զատում աղտից, այդպես էլ այստեղ հոգևոր կրակին առանց խոստովանության ու ապաշխարության մերժենալը, իմացի՛ր, որ ճշմարտապես այրում է և ո՛չ թե սրբագործում. իսկ ապաշխարությամբ մերժենալը մաքրում է հոգին:

Ժողովուրդը, քահանայից լսելով պարզևի այսքան շատ օգուտների մասին, վկա է դառնում այդ ամենին՝ ասելով.

*Ամեն:*

***23. Սաղմո՛ս ասացեք մեր Աստծուն, սաղմո՛ս ասացեք բարեբար ու երկնային Թագավորին, Ով նստում է քերովբեների վրա, սաղմո՛ս ասացեք և փա՛ռք տվեք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից:***

Թեպետև բոլորի Աստվածն ու Թագավորը Սեղանի վրա է տեսնվում, բայց երկնքում ու քերովբեների վրա է, ուստի ***սաղմո՛ս ասացեք և փա՛ռք տվեք Նրան***, Նրա հետ՝ նաև ***Հորը և Սուրբ Հոգուն***: Քանզի քերովբեների վրա բազմած Աստվածն ու Թագավորն Իրեն դնում է այս Սեղանին՝ մեզ համար իբրև կերակուր և ըմպելիք: Եվ թող փառավորված լինի Սուրբ Երրորդությունը ***այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից***:

Սարկավագը մեկ անգամ ևս նույնն է ասում.

***24. Դպիրներ՛ր, քաղցր ծայնով սաղմո՛ս ասացեք***



***մեր Տեր Աստուծուն, որովհետև Նրան են վայել  
սաղմունքը և հոգևոր երգեր:***

Մեզ այսպես Սիրողին ***վայել է քաղցր ծայնով սաղմոս ասել:*** Աստծո համար ***քաղցր*** է այն օրհնությունը, որ կատարվում է մաքուր սրտից և ճշմարիտ սիրով:

***Այլև դուք, որ հավատով ընդունեցիք  
այս սուրբ, անմահ, անապական և աստվածային խորհուրդը,  
գոհացե՛ք Տիրոջից:***

Քանզի այսպես Տիրոջից սովորեցինք: Նախքան խորհուրդն ավանդելը Նա գոհացավ, որպեսզի մենք էլ այդպես վարվենք: Այժմ սարկավազը քարոզում ու հրամայում է ***գոհանալ: Այլև դուք, որ հավատով ընդունեցիք*** և այլն, ասում է, ***գոհացե՛ք***՝ հավատով ընդունելով Պատարագն իբրև Աստծո մարմին և արյուն, քանզի այս մասին է հայտնում ***այս սուրբ, անմահ, անապական և աստվածային խորհուրդը*** ասելիս, որովհետև Նա ամբողջովին ***սուրբ, անմահ ու առանց ապականության*** Աստված է: Այս պատճառով էլ առաքյալն ասում է. «Միայն Նա ունի անմահություն» (*Ա Տիմ. 2 16*), իսկ ուրիշներն անմահությունն ու անապականությունը ոչ թե իրենց բնությունից ունեն, այլ Նրանից են ստանում: Գոհացե՛ք, որովհետև Սուրբով սրբվում եք, Անմահով՝ անմահանում և Աստծուն մերձենալով՝ աստվածանում:

Ապա ժողովուրդը միաբան ասում է.

***Գոհանում ենք Քեզանից, Տեր:***

***25. Գոհանում ենք Քեզանից, Քրիստոս Փրկիչ մեր,  
որ այսպիսի բարի ճաշակում շնորհեցիր մեզ  
կյանքի փրկության համար:***

Պատարագիչը նախ նրա համար է ***գոհանում***, որ Տերը փրկեց մեզ, և ապա՝ որ ***այսպիսի ճաշակում*** շնորհեց, որով ***կյանք*** և ***փրկություն*** են

պարզևկում: Քանզի տեսնելով մեր մեջ փրկական Խորհրդի հաղորդությունը՝ դևերի բոլոր խարդախությունները խափանվում են, որովհետև ինչպես երանելի վարդապետ Հովհանն<sup>26</sup> է ասում, երբ մենք Խորհրդից ճաշակած ենք լինում, Բանսարկուն մեր բերաններից ելնող սարսափելի կրակ է տեսնում, ինչ պատճառով էլ չի կարողանում մոտենալ խարդախելու համար, այլ հեռու է փախչում, և մենք փրկվում ենք: Նրանով փրկվում ենք նաև հանդերձյալ բարկությունից: Այստեղ կենդանանում ենք արդարության համար, քանի որ զորություն ենք ստանում կատարելու բոլոր արդար գործերը: Որովհետև ինչպես արդարությունից ամայացածները մահացած են Աստծո շնորհների ու կենդանի՝ միայն մեղքերի համար և իրենց բոլոր անդամներով անօրենություն են գործում, այդպես էլ սուրբ Խորհուրդն արժանավորապես **ճաշակողները** լցված են Աստծո շնորհներով, բոլոր անդամներով մահանում են մեղքերի և ամբողջությամբ կենդանանում արդարության համար: Քանզի, համաձայն Ս. Գրքի, նրանց «աչքերն ամեն ժամ Տիրոջն են ուղղված» (*Սաղմ. ԻԴ(24) 15*). նրանք տեսնում են Աստծուն ու աստվածայինը և ականջներով ունկնդրում աստվածային խրատները: Նրանց բերանը հոգևոր իմաստություն է խոսում, իսկ լեզուն՝ արդարություն, նրանց սրտում հաստատված Աստծո օրենքը հաստատուն ու անսայթաք է պահում նրանց ընթացքը, իսկ ձեռքերը մղում ամեն ժամ էլ ավելի աշխատելու Տիրոջ գործի համար, առ Աստված բարձրացվելու և աղաչանք մատուցելու: Այսպիսի **կյանք** է աշխարհին պարզևկում սուրբ Հաղորդությամբ, իսկ հանդերձյալում պարզևկելու է անվախճան ու հավիտենական կյանք, որը Քրիստոսինն է և Քրիստոսի հետ:

Սրա համար գոհանալուց հետո պատարագիչը սկսում է աղաչանք մատուցել.

---

<sup>26</sup> Տե՛ս ծնթ. 4:

***Սրանով մաքուր ու անարատ պահիր մեզ:***

Այսինքն՝ թույլ մի՛ տուր, որ չարը մեր մեջ տեղ գտնի և պղծի կամ արատավորի մեզ, այլ մեզ հետ լինելով՝ ***մաքուր ու անարատ պահիր մեզ:***

Այս պատճառով էլ պատարագիչն ավելացնում է.

***Եվ Քո աստվածային խնամքով մեզ շրջապատելով՝***

***հովվի՛ր մեզ Քո սուրբ ու բարեսեր կամքի անդաստանում:***

Քանի որ այնպիսի խնամակալ հովիվ ես, որ Քո մարմնով ես կերակրում ոչխարներիդ, նույն ***խնամքով*** շրջապատի՛ր մեզ, գայլից պահպանի՛ր և մահացու արոտից հեռու արածեցրու: Իսկ թե որտե՞ղ է այն, հայտնի է դարձնում հաջորդ խոսքը. ***«Հովվի՛ր մեզ Քո սուրբ ու բարեսեր կամքի անդաստանում»:*** Քանի որ Քրիստոսի կամքն արդարություն ու բարեգործություն է, ասում է, դա՛ արժանի արա՜ ճաշակելու: Դա է այն դալար դաշտը, որի մասին երգում է սաղմոսերգուն (*Սաղմ. ԻԳ(23) 2*): Դա է այն անդաստանը, որ համաձայն է Քրիստոսի ***կամքին***, անմատչելի է գայլին և պատվիրանով ամուր շինված քաղաք է, ինչպես և աղոթքն ասում է.

***Որով ամրացած լինելով Բանասրկուի***

***ամեն տեսակ ընդդիմությունների դեմ:***

***Բանասրկուի ընդդիմությունը*** բարուն չարը հակադրելն է. խոնարհությանը՝ հպարտությունը, հեզությանը՝ բարկությունը, սիրուն՝ ատելությունը, պարկեշտությանը՝ սանձարձակությունը, զգաստությանը՝ պոռնկությունը, նույնպես և այլ առաքինություններին հակառակ չարով ընդդիմադրելը: Այս չարիքների դեմ ամրացած լինելով, ասում է,

***Արժանի լինենք միայն Քո ծայնը լսելու,***

***Քեզ՝ միակ քաջահաղթ ու ճշմարիտ Հովվիդ, հետևելու:***

Պատարագիչը լսելու այն կարողությունն է խնդրում, որի մասին Տերն ասում է. «Իմ ոչխարներն Իմ ձայնը լսում են, և Ես ճանաչում եմ նրանց, նրանք գալիս են Իմ հետևից, և Ես նրանց կտամ հավիտենական կյանքը» (հմմտ. Հովհ. Ժ 27): Աղոթքի խոսքը նույնպես սա է խնդրում՝ **լսել** Նրա վարդապետության **ձայնը** և Նրան **հետևել**: Իսկ հետևելը նշանակում է անձն ուրանալ, խաչին միշտ հպատակվել, Տիրոջ ցույց տված ճանապարհով ընթանալ, նեղ և անձուկ դռնով մտնել դեպի կյանք և այնտեղ ստանալ այն, ինչը խնդրում է հետագա խոսքով.

***Եվ Քեզանից ընդունելու Քո արքայության մեջ  
մեզ համար պատրաստված տեղը:***

Քրիստոսի **արքայության մեջ տեղերը** պատրաստվելու են ըստ յուրաքանչյուրի արժանավորության՝ այն ժամանակ, երբ Նա վերացնի թագավորությունները և միայն Իր թագավորությունը մնա հավիտյան: Աղոթքի այս խոսքը խնդրում է այդ օթևանները և ավելացնում բարեգործության պատճառը.

***Մեր Աստված և Տեր Հիսուս Քրիստոս:***

Քանզի Արարիչ ես և Տեր, որ նաև ազատեցիր մեզ մեղքերից և Քո չարչարանքներով, որոնցով անապականություն ընդունեցինք, արժանացրիր լինել Քո տերության ներքո: Եվ ոչ միայն արարիչ լինելուդ պատճառով ես տիրում մեզ, ինչպես այլ արարածներին, այլև որովհետև գին վճարեցիր՝ պատվական Քո արյունը որպես փրկանք տալով:

Այս պատճառով աղոթքը փառաբանությամբ է եզրափակում խոսքը.

***Որիդ վայել են փառք, իշխանություն և պատիվ  
այժմ և միշտ և հավիտյանս:***

*Խաղաղություն ամենքին:*

**26. Անքննելի, անհաս Եռյակ Ինքնությանդ՝  
հաստատող, ընդունող և անբաժանելի  
միասնական Սուրբ Երրորդությանդ:**

*Անքննելի* է ասվում, որովհետև որևէ կերպ չի ենթարկվում քննության. *անհաս*՝ որովհետև թեկուզ մեկը հանդգնի էլ *հասու* լինել, չի կարողանա գիտենալ Աստծո էությունն ու մշտնջենավորությունը: *Եռյակ* է՝ ըստ անձերի, քանի որ Հայր է, Որդի և Սուրբ Հոգի՝ բաժանված դեմքերով և միավորված Աստվածությամբ: *Ինքնություն* է, որովհետև Նրա գոյությունը որևէ այլ մեկից չէ, այլ Իրենով է, ինչպես սուրբ Լուսավորիչն է ասում. «Տեր Աստված է միայն ինքնությամբ, և Նրանից առաջ ոչ ոք չկա»: *Հաստատող է*, որովհետև արարածներին *հաստատեց*՝ անգոյությունից գոյության բերելով, և յուրաքանչյուրին հաստատուն է պահում իր կարգի մեջ: *Ընդունող* է, որովհետև *ընդունում* ու խնամում է Իր բոլոր արարածներին և հոգում յուրաքանչյուրի կարիքները՝ ոչ միայն հրեշտակներինն ու մարդկանցը, այլև բոլոր կենդանի էակներինը: Նաև Իր անձն ամբողջությամբ տալիս է արարածներին իբրև կարգավորիչ և հաստատիչ: Թույլ չի տալիս, որ երկինքը վայր ընկնի, և լուսատուների շրջանաձև շարժմամբ պայծառ է պահում: Երկիրն անասանելի է պահում, գեղեցկացնում զանազան բույսերով, ծառերով ու սերմերով, որոնք անձրևածին ամպերով ոռոգում է՝ հագեցնելու աստիճան: Ծովը սահմանների մեջ է շրջափակում, որպեսզի այն ոչ հատակի մեջ ներծծվի, ոչ էլ եզերքից չափազանց դուրս տարածվի: *Անբաժանելի* է *Սուրբ Երրորդությունը*, քանզի թեև անձերով բաժանված է, սակայն ըստ Աստվածության անբաժանելի է: Մեկ է Սուրբ Երրորդության բնությունը, մեկ է էությունը, մեկ՝ տերությունը, մեկ՝ կամքը, մեկ՝ փառավորությունը: Եվ միայն Նրան է վայել երկրպագություն բոլոր գոյերի կողմից, ինչպես և ասվում է սրանից հետո.

*Ուժ վայել են փառք, իշխանություն և պատիվ  
այժմ և միշտ և հավիտյանս:*

vV

## ՀՈՐԴՈՐԱԿ

Աստժո շնորհով մեկնաբանելով յուրաքանչյուր ժամին համապատասխան եկեղեցական արարողությունները՝ գործն ավարտին հասցրինք: Հակիրճ ներկայացրինք ո՛չ այնքան, որքան իմաստներ ունեին քարոզներն ու աղոթքները, այլ որքան մեր կարողությունը բավարարեց: Եվ թեպետ եկեղեցական արարողությունները, քարոզները, աղոթքները և պատարագամատույցները բազում են ու զանազան՝ կան այնպիսիք, որ գրված են մարտիրոսների հիշատակին կամ տերունական տոների՝ [օրինակ] Ծննդյան ու Հարության առիթով, ոմանք էլ՝ շնորհատվության համար, այսինքն՝ մկրտության, ձեռնադրության, պսակի օրհնության, մեռելների թաղման, նաև ս. Սեղան հաստատելու, եկեղեցական սպասք օրհնելու, Տիրոջ հայտնության տոնին ջուրը սրբագործելու, խաչ, սերմ, կալ, զվարակ, աղ, հացահատիկ օրհնելու և մնացած շնորհաբաշխությունների, ինչպես նաև ճանապարհորդների ու հիվանդների և ուրիշ այսպիսի բաների համար, սակայն դրանք ամբողջությամբ բառ առ բառ քննության ենթարկելու դեպքում ոչ միայն մենք կարողություն չէինք ունենա գրելու, այլև ընթերցողները՝ լսելու: Բայց եթե մեկը լրջորեն ուշադրություն դարձնի այստեղ ասվածներին, ապա բավարար չափով կարող է նաև մնացած բոլորն էլ հասկանալ: Եվ ինչո՞ւ ենք ասում, թե այստեղ գրած ամեն ինչով կարող է բոլոր բաց թողնված իմաստներն էլ հասկանալ, որովհետև եթե սրա մի մասն էլ ընկալի, դա նրա համար բավական կլինի պատկերացում կազմելու եկեղեցական բոլոր արարողությունների մասին:

Այս իսկ պատճառով աղաչում են դատարկ գործ չհամարել աստվածեղեն խոսքերի մասին խորհրդածությունը, մանավանդ քարոզների ու աղոթքների, որոնցից է կախված մեր փրկությունը. և ո՛չ միայն մերը, այլև նրանցը, ում մենք պարտապան ենք՝ թե՛

ողջերին, թե՛ մահացածներին: Լեզուն երբ առանց մտքին հետևելու օդին է բախվում, որևէ օգուտ չի գործում, քանզի սրտագետ Աստված սրտին ու մտքին է նայում և ո՛չ թե բերանին: Հետևաբար, արթուն մտքով, անզբաղ խորհրդով և հոգու կատարյալ իմաստությամբ աղոթքի պարտքը մատուցենք Աստծուն, որպեսզի թե՛ մեզ, թե՛ ուրիշներին օգուտ տանք և ուրիշների աղոթքներից նաև մեզ օգուտ լինի: Քանզի եթե բոլոր հավատացյալների համար սրտանց աղոթենք, ապա հավատացյալների բոլոր աղոթքներից մեզ օգուտ կլինի, որովհետև «ինչ չափով չափում ենք, նրանով էլ չափվելու է մեզ համար» (*Մատթ. Է 2, Մարկ. Դ 24*): Ուստի նախ ինձ և ապա մյուս բոլորին են զգուշացնում՝ հոգ տանել սեփական հոգու մասին և Աստծուց օգնություն հայցել, որպեսզի կարողանանք Աստծուն հաճելի կերպով մատուցել Նրան մեր աղոթքները:

Առավել ևս պետք է զգուշանան Եկեղեցու առաջնորդները, ովքեր ամբողջ Եկեղեցու փոխարեն են իրենց ձեռքերն առ Աստված բարձրացնում և բոլորի խնդրանքներն Աստծուն փոխանցում:

Նրանք պետք է այնպիսի վարք ձեռք բերեն, որն Աստծո հետ խոսելու համարձակություն տա նրանց, որպեսզի, Մովսեսի նման, Աստծուն հոգով տեսնելուն արժանանան և ասես երևացող իրականություն՝ իրենց աղոթքներին իբրև օգնական ունենան նախընթաց սրբերին, ում միջոցով կարող են Աստծո պատգամները ժողովրդին մատուցել: Եվ այն, որ ասացի, թե պետք է նմանվել Մովսեսին, դու անպատշաճ մի՛ համարիր. քանզի մեզ քահանայությունը տված առաքյալներն օրինակ բերեցին Ահարոնին ու Մովսեսին և հրամայեցին նրանց պես լինելուց հետո՝ սպասավորությանը մոտենալ: Իսկ եթե մենք հեռացել ենք այդ օրինակներից, սա նրանից է, որ թեպետ լսել ենք Աստծո կոչը, սակայն մեր անձնականն ենք փնտրում և ո՛չ թե Քրիստոսինը: Քրիստոսը նույնիսկ օրենքի գործադրումը բավարար չհամարեց Արքայություն մտնելու համար, և սա ոչ միայն քահանաների համար օրինադրեց, այլև առհասարակ բոլորի, քանզի Իր խոսքն ուղղեց այն



ժամանակ Իր շուրջ խմբված բոլոր բազմություններին՝ թե՛ տղամարդկանց և թե՛ կանանց, որպեսզի հայտնի դառնար, որ այս նույնը որպես կանոն պետք է սահմանվի նաև հետագայի հավատացյալների համար:

Եվ ի՞նչ էր, որ ասաց. «Եթե ձեր արդարությունն ավելին չլինի, քան դպիրներինն ու փարիսեցիներինը, Աստծո արքայությունը չեք մտնի» (*Մատթ. Ե 20*): Իսկ եթե սա բոլորին է ասում, ապա որքան առավել նույնը քահանաներից է պահանջվում: Եվ հույժ իրավամբ: Քանզի Օրենքի քահանաների քահանայագործությունն անասունների արյամբ էր կատարվում, որովհետև սովերի սպասավորներ էին, ինչպես նրանց մասին Պողոսն ասում է, թե երկնավորին մատուցված նրանց սպասավորությունը նմանությամբ ու օրինակով էր (*տես Եբր. Ը 5*), իսկ նրանք, ովքեր քահանայացան այս շնորհին ու ճշմարտությանը, կարգվեցին Աստծո Որդու արյանը սպասավորելու համար: Սա՛ է, որ Պողոսը «երկնավոր» անվանեց և ասաց, որ ամբողջ հինը սրա նմանությունն ու օրինակն էր: Քանզի թեպետև Պատարագը երկրի վրա է կատարվում, սակայն երկրային ընծայով չէ, այլ երկնքից իջնող Հացով (*Հովհ. Զ 41*), Ով կյանք է տալիս աշխարհին: Երանելի Պողոսը, Օրենքի պատարագները հիշելիս, այս մասին կրկին ասում է. «Պետք էր, որ Օրենքի տակ գտնվողները սրանցով մաքրվեին, իսկ բուն իսկ երկնավորը պիտի մաքրվեր սրանցից էլ մեծ զոհերով» (*Եբր. Թ 23*): Տեսնո՞ւմ ես, որ ոչ միայն Պատարագն է երկնավոր անվանում, այլ նաև մեզ, որ երկնավոր Պատարագին հաղորդվեցինք: Եվ դարձյալ՝ այս մասին ավելի բացահայտ է խոսում, երբ ասում է. «Սուրբ եղբայրներ, մասնակիցներ երկնավոր կոչման» (*Եբր. Գ 1*). ուստի երկնավոր Պատարագ ենք մատուցում: Ուրեմն պարտավոր ենք շատ ավելին լինել, քան նրանք, որ հնում սովերի սպասավորներ էին, քանզի «ուն շատ տրվեց, նրանից շատ էլ կպահանջվի» (*Ղուկ. ԺԲ(12) 48*),- ասաց Տերը: Հետևաբար կատարելության ձգտելիս կատարյալ առաքինություններ ձեռք բերենք և փրկենք թե՛ մեզ, թե՛ մեր

իշխանության տակ գտնվողներին և թե՛ ուրիշ շատերի: Եվ բոլորի Տերը՝ Քրիստոսը, թող ամեն ինչում օգնական լինի և Իր սուրբ անունը փառավորի մեր մեջ: Նրան միշտ փառք: Ամեն:

Հանդգնաբար ձեռնամուխ եղա այս գործին անհրաժեշտությունից դրդված և ո՛չ թե ինձ համար փառք ձեռք բերելու նպատակով: Քանի որ եպիսկոպոսություն վիճակվեց ինձ, և այն ստանալով՝ տեսա, որ շատերն են տգիտության մեջ, իսկ խոսքով այս ամենը յուրաքանչյուրին ուսուցանելն անհնար գտա, ուստի պատշաճ համարեցի գրի առնել, որպեսզի թերևս սովորելն այսպես ոյլորին դարձնեն կամեցողների համար: Ուստի նրանք, ովքեր առիթ ունեն սա լսելու, թող աղոթեն մեր փրկության համար, որպեսզի այս սեղմ աշխատության փոխարեն Քրիստոսից որպես հատուցում ստանան Նրա ողորմության պարգևները: Նրան թող ամենքս հանդիպենք թե՛ երկրում, թե՛ երկնքում և փառք վերառաքենք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս:

vV

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ<sup>27</sup>

Աստժն շնորհով, այս գրվածքի մեկնությունը կատարվեց Անձևացյաց Խոսրով եպիսկոպոսի՝ Աստժն պատվիրաններին հույժ հետևողի ձեռքով, ում գովել մեզ չի պատշաճում, որպեսզի դրանից չզայթակղվեք, քանզի նա ըստ մարմնի իմ հայրն է, ում ո՛չ որդին և ո՛չ էլ վարձկանը, համաձայն Ս. Գրքի (*հմմտ. Ղուկ. ԺԵ(15) 19*), արժանի չեմ կոչվելու: Այլ ովքեր ցանկանում են, այս գործում գրված խոսքերից կիմանան նրա մասին, եթե սրտանց ականջ դնեն դրանց: Նաև նրանք պարտավոր են այստեղ տրվածն աղոթքներով փոխհատուցել, և ամենքին պարզևող Աստված Իր պարզևը կշնորհի նաև ձեզ՝ հայցողներիդ: Սակայն ես՝ Սուրբ Գրքի պատվիրաններին պարտապան Գրիգորս, սաստիկ ամոթի ու տարակուսանքի մեջ եմ:

Արդ, այս սուրբ գրվածքի առաջին ձեռագիրը գրվեց այս սուրբ գիրքը մեկնող տեր Խոսրովի որդու՝ Սահակի ձեռքով, հայոց երեք հարյուր իննսունինը թվականին [950թ.]:

vV

<sup>27</sup> «Հիշատակարանը» գրված է Խոսրով Անձևացու որդու՝ ս. Գրիգոր Նարեկացու ձեռքով, ով այստեղ նշում է, որ մեկնությունն առաջին անգամ գրի է առնվել նրա եղբոր՝ Սահակի կողմից: Ինչպես վկայում է մեկնության 1869թ. վեներտիկյան հրատարակության առաջաբանի հեղինակը, «հայրը թելադրում էր, և որդին գրում. կարծում եմ այս միտքն է արտահայտում նաև Մխիթար Այրիվանեցին, երբ ասում է. «Անձևացյաց Խոսրով եպիսկոպոսը կատարեց Աղոթամատույցի մեկնությունը, որը գրում էր նրա Սահակ որդին» (տե՛ս Խոսրովու Անձևացեաց եպիսկոպոսի մեկնութիւն աղօթից պատարագին, Վեներտիկ, 1869, Յառաջաբան):

## ՀԱՎԵԼԿԱԾ

ՀԱՅՈՑ ՊԱՏԱՐԱԳԻ ԲՆԱԳԻՐԸ՝ ԸՍՏ ԽՈՍՐՈՎ ԱՆՁԵԿԱՑՈՒ  
«ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ» ԳՈՐԾԻ

**[ՅԱՌԱՋԱԲԱՆ]<sup>28</sup>**

*Ջկնի Աւետարանին եւ զՀաւատամքն ասելոյ քարոզէ*

1. *Սարկաւազն*. Եւ եւս հաւատով աղաչեսցուք եւ խնդրեսցուք յԱստուծոյ՝ ի Հօրէ եւ ի Տեառնէ ամենակալէ, ի վերայ ժամուս պաշտաման եւ աղօթից, զի Աստուած ընդունելութեան արժանի արասցէ: Լուիցէ Տէր ձայնի աղաչանաց մերոց, ընկալցի զխնդրուածս սրտից մերոց, ողորմեսցի ի վերայ մեր: Աղօթք մեր եւ խնդրուածք յամենայն ժամ մտցեն առաջի մեծի տէրութեան Նորա: Եւ Նա տացէ մեզ միաբան հաւատով յարդարութիւն վաստակել. զի զողորմութեան զշնորհս իւր արասցէ ի վերայ մեր Տէրն ամենակալ: Կեցո եւ ողորմեա՛ մեզ, Տէր:

2. *[Քահանայն]*. Տէր մեր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոս, որ մեծոք եւ ողորմութեամբ եւ առատ եւ պարգեւօք բարերարութեան: Որ Դու Քոյին կամաւ համբերեսցեր ի ժամուս յայսմիկ չարչարանաց, խաչի եւ մահու յաղագս մեղաց մերոց եւ պարգեւեսցեր առատապէս զպարգեւս Հոգւոյդ Սրբոյ երանելի առաքելոցն: Հաղորդս արա զմեզ, Տէր, աղաչենք զՔեզ, աստուածային պարգեւացդ, թողութեան մեղաց, ընդունելութեան Հոգւոյդ Սրբոյ. որպէս զի արժանաւորք եղիցուք գոհութեամբ փառաւորել զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգիդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս:

Խաղաղութիւն ամենեցուն:

<sup>28</sup> «Յառաջաբանի» (մինչև «Պատարագամատոյց» ընկած մասի) հեղինակ է համարվում ս. Հովհան Մանդակունի հայոց կաթողիկոսը: Տե՛ս Յ. Գաթրճեան, Սրբազան պատարագամատոյցը հայոց, հտ. Ա, էջ 272:

3. Խաղաղութեամբ Քով, Քրիստոս Փրկիչ մեր, որ ի վեր է քան զամենայն միտս եւ զբանս, ամրացո զմեզ եւ աներկիւղս պահեա յամենայն չարէ. հաւասարեցո զմեզ ընդ ճշմարիտ երկրպագուս Քո, որք Հոգւով եւ ճշմարտութեամբ Քեզ երկիր պագանեն: Վասնզի Ամենասուրբ Երրորդութեանդ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

*[Սարկաւագն].* Օրհնեա, տէր:

*[Ունկնդրութիւն վարդապետութեան]*

*[ՎԵՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ]*

*Ի մերձիլ սուրբ Խորհրդոյն յահագին Սեղանն՝ ասէ*

4. *Սարկաւագն.* Մի՛ ոք յերեխայից եւ մի՛ ոք ի թերահաւատից, եւ մի՛ ոք յանապաշխարից մերձ կայցէ կամ հաղորդեսցի:

Կացցուք առաջի սրբոյ Սեղանոյս Աստուծոյ ահիւ: Մի՛ խղճիւ գայթակղութեամբ, մի՛ նենգութեամբ խորամանկութեամբ, մի՛ պատրանօք խաբէութեամբ, մի՛ երկմտութեամբ թերահաւատութեան. այլ ուղիղ վարուք, պարզ մտօք, միամիտ սրտիւ, կատարեալ հաւատով, լցեալ սիրով, առաւելեալ ամենայն գործովք բարութեանց՝ կացցուք առաջի սրբոյ Սեղանոյս Աստուծոյ եւ գտցուք ողորմութիւն յաւուր յայտնութեան ի միւսանգամ զալստեան Փրկչին մերոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո եւ ողորմեաց մեզ:

## **ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ**

*[ԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆ]*

5. *[Քահանայն].* Տէ՛ր Աստուած զօրութեանց եւ արարիչ ամենայն լինելութեանց, որ յանէութենէ զբնաւս ի ցուցակութիւն ածեալ գոյացուցեր, որ եւ զմեր հողեղէն բնութիւնս պատուեալ մարդասիրապէս՝ այսպիսի անպատում եւ ահաւոր խորհրդոյ կարգեցեր սպասաւորս: Դո՛ւ, Տէ՛ր, Որում պատարագեմք զպատա-

րագիսս, ընկալ՝ առ ի մէնջ զառաջադրութիւնս զայս եւ ւարտեա՛ զսա ի խորհրդականութիւն մարմնոյ եւ արեան Միածնի Քոյ: Դեղ թողութեան մեղաց պարգեւեա ճաշակողացս զհացս զայս եւ զգինիս, շնորհօք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի, ընդ Որում Քեզ՝ Հօր ամենակալի, հանդերձ կենդանարար եւ ազատիչ Սուրբ Հոգւովդ, վայել են փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:

*[ՈՂՋՈՅՆ]*

6. *[Սարկաւագն]*. Ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան: Որ ոչ կարող էք հաղորդել, ի միմեանց ուսարո՛ւք եւ առ դրունս աղօթեցէ՛ք:

Պատարագ Քրիստոս մատչի ի միջի մերում՝ Գառն Աստուծոյ:

Ահի կացցուք, երկիւղի կացցուք, եւ նայեցարո՛ւք զգուշութեամբ:

*[Ժողովուրդն]*. Առ Քեզ, Աստուած:

*[Սարկաւագն]*. Ողորմութիւն եւ խաղաղութիւն եւ պատարագ օրհնութեան:

7. *[Քահանայն]*. Շնորհք, սէր եւ աստուածային սրբարար զօրութիւն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ եղիցի ընդ ձեզ ամենեսեան:

*[Ժողովուրդն]*. Ի Հոգւոյդ քում:

*[Քահանայն]*. Ի վեր արարէք զսիրտս ձեր յաստուածային Խորհուրդս:

*[Ժողովուրդն]*. Ունիմք առ Քեզ, Տէ՛ր ամենակալ:

*[Քահանայն]*. Եւ գոհացարո՛ւք զՏեառնէ՛ բոլորով սրտիւ:

*[Ժողովուրդն]*. Արժան եւ իրաւ:

*[ՆԱԽԵՐԳԱՆ]*

8. *[Քահանայն]*. Արժան է ստուգապէս եւ իրաւ՝ ամենայորդոր փութով, Քեզ, էն եւ ես եւ էդ Աստուած, անսկիզբն եւ անքննելի, Երբեակ Միութիւն, միշտ երկրպագել փառաւորելով: Որ քոյին,

Հայր, անգննելի եւ արարչակից Բանիւդ, զանիծիցն բարձեր զկրճիմն, որ ժողովորդ ինքեան զառ ի յեկեղեցւոյ սեպիականեաց զհաւատացեալս ի քեզ. եւ զննելի բնութեամբ, ըստ ի Կուսէն տնտեսութեան, հաճեցաւ բնակել ի մեզ եւ նորագործ աստուածապէս ճարտարապետեալ՝ երկինք զերկինս արար: Ձի որում ոչն հանդուրժէին առաջի կալ զուարթնոցն ջոկք՝ զարիութեալք ի փայլակնացայտ եւ յահեղ լուսոյ Աստուածութեանդ, եղեալ այդպիսիդ մարդ յաղագս մերոյ փրկութեան՝ շնորհեաց եւ մեզ ընդ երկնայինսն պարել ընդ հոգեղէն պարս, ընդ սերովբէսն եւ ընդ քերովբէսն միածայն սրբասացութեամբ յօրինել նուագս, համարձակապէս բարբառով աղաղակել ընդ նոսին եւ ասել. «Սուրբ, սուրբ, սուրբ, Տէր զօրութեանց: Լի են երկինք եւ երկիր փառօք Քո: Օրհնեալ, որ եկիր եւ գալոցդ ես անուամբ Տեառն: Օրհնութիւն ի բարձունս»:

*[ԿԱՆՈՆ]*

9. *[Քահանայն]*. [Սուրբ, սուրբ, սուրբ ես] ճշմարտապէս եւ ամենասուրբ: Եւ ո՞րք պանծասցի բանիւ բովանդակել զՔո ի մեզ զանբաւ բարեգործութեանդ զեղմունս. որ եւ անդէն իսկ ի նախնունմն զանկեալն ի մեղս զանագան յեղանակօք խնամեալ սփոփեցեր. մարգարէիք, օրինացն տուչութեամբ, քահանայութեամբ եւ ստուերակերպ երնջոցն մատուցմամբ: Իսկ ի վախճան աւուրցս այսոցիկ, զբովանդակ իսկ զպարտեաց մերոց խզեալ զդատակնիք, զՔո Միածինդ ետուր մեզ պարտապան եւ պարտս, զենունմն եւ օծեալ, զառն եւ երկնաւոր հաց, քահանայապետ եւ պատարագ: Վասնզի դա է բաշխօղ եւ նոյն Ինքնդ բաշխի ի միջի մերում միշտ եւ անծախապէս: Վասնզի եղեւ հաւաստապէս եւ առանց ցնորից մարդ, եւ անշփոթ միութեամբ մարմնացաւ ի սուրբ եւ յաստուածածին Կուսէն Մարիամայ, ճանապարհորդեցաւ ընդ ամենայն կիրս մարդկային կենցաղոյս առանց մեղաց, եւ յաշխարհակեցոյցն եւ յառիթն փրկութեան մերոյ եկեալ կամաւ ի խաչն: Առեալ զհացն



յամենասուրբ ի կենդանարար ի ձեռնն Իւր՝ օրհնեաց, գոհացաւ, ետ Իւր ընտրեալ աշակերտացն՝ ասելով.

*[ՍՐԲԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ]*

«Առէք, կերայք ի դմանէ ամենեքեան. այս է մարմին Իմ, որ վասն ձեր եւ բազմաց բաշխի»: Ըստ նմին օրինակի եւ զբաժակն առեալ՝ օրհնեաց, գոհացաւ, ետ Իւրոց ընտրեալ աշակերտացն՝ ասելով. «Առէք արբէք ի սմանէ ամենեքեան. այս է արիւն Իմ նորոյ ուխտի, որ վասն ձեր եւ բազմաց հեղու ի քաւութիւն մեղաց»:

10. Որ զսոյն միշտ ի յիշումն Իւր առնել մեզ պատուիրանադրեաց բարերար եւ մարդասէր Տէրոյ. եւ իջեալ ի ստորին վայրս մահու Իւրով մարմնովն, զոր ընկալաւ ի մերմէս յազգակցութենէ, եւ զնիզս դժոխսցն աղարտեալ հզօրեղապէս՝ ծանոյց զԻնքն հաւաստեալ Աստուած կենդանեաց եւ մեռելոց: Եւ արդ մեք, Տէր, ըստ դորին հրամանատութեան յառաջ բերեալ զայս խորհուրդ փրկական մարմնոյ եւ արեան Միածնի Քոյ, յիշեմք զդորին որ վասն մեր զփրկութիւնագործ զչարչարանսն, զկենդանարար խաչելութիւնն, զերեքօրեայ զանապական զթաղումն, զերանելի գյարութիւնն, զաստուածապէս համբարձումն, զահաւոր եւ զփառաւորեալ զմիւսանգամ զալուստն:

*[Ժողովուրդն].* Յամենայնի գովեմք զՔեզ, օրհնեմք զՔեզ, գոհանամք զՔէն, աղաչեմք զՔեզ, Տէր Աստուած մեր:

11. *[Քահանայն].* ՉՔեզ արդարեւ, Տէր Աստուած մեր, գովեմք եւ զՔէն գոհանամք, որ զօրհանապագ զանց արարեր զմերովք չարագործութեամբք, որ այսպիսի ահաւոր եւ անպատում խորհրդոյս կարգեցեր սպասաւորս, ո՛չ յաղագս մերոց ինչ բարեգործութեանց, յորոց յոյժ թափուր միշտ եւ ունայն գտանիմք հանապագ, այլ ի Քո բազմազեղ ներողութիւնդ ցանկ ապաւինեալ՝ համարձակիմք մերձենալ ի սպասաւորութիւն մարմնոյ եւ արեան Միածնի Քոյ:

Խաղաղութիւն ամենեցուն:

Աստուծոյ երկրպագեսցուք:

*[ԿՈՉՈՒՄՆ]*

12. Երկիր պագանենք եւ աղաչենք եւ խնդրենք ի Քէն, Տէր, առաքեալ ի մեզ եւ յառաջի եղեալ յԸնծայս յայս զմշտնջենաւորակից Քո եւ զէակից Սուրբ Հոգիդ, որոյ զհացս օրհնեալ՝ մարմին ստուգապէս արասցէ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի. եւ զբաժակս օրհնեալ՝ արիւն ստուգապէս արասցէ Տեառնն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի: Որպէսզի եղիցի սա մերծեցելոցս յանդատապարտութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց:

*[ՅԻՇԱՏԱԿՔ]*

13. Սովաւ շնորհեա զսէր, զհաստատութիւն եւ զըղծալի զխաղաղութիւն Եկեղեցւոյ Քում Սրբոյ եւ ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց, քահանայից, թագաւորաց, իշխանաց, ժողովըրդոց, ճանապարհորդելոց եւ որք ի պատերազմունս բարբարոսաց:

Սովաւ եւ օրոց շնորհեա բարեխառնութիւն եւ պտղոց առատութիւն եւ ախտացելոց ի պէսպէս ցաւոց՝ փութապէս առողջութիւն:

Սովաւ հանգո զամենեսեան գյառաջագոյն ի Քրիստոս զննջեցեալսն [զնախահարս], զմարգարէս, զառաքեալս, զվկայեալս, զեպիսկոպոսունս, զերիցունս, զսարկաւագունս եւ զբնաւ ուխտ Եկեղեցւոյ Քում սրբոյ, եւ յաշխարհական կարգէ զարս եւ զկանայս հաւատացեալս ի Քեզ:

Ընդ որս եւ մեզ այց արասցես, բարերար եւ մարդասէր Տէր:

14. *[Սարկաւագն]*. Աստուածածնին Կուսին Մարիամնու, Յովհաննու Մկրտչին, սրբոյն Ստեփանոսի յիշատակ եղիցի:

*[Ժողովուրդն]*. Յիշեա, Տէր, եւ ողորմեա:

*[Սարկաւագն]*. Առաքելոց սրբոց, մարգարէից, մարտիրոսաց, Պետրոսի եւ Պօղոսի եւ ամենայն սրբոցն յիշատակ եղիցի:

*[Ժողովուրդն]*. Յիշեա, Տէր, եւ ողորմեա:

*[Սարկաւազն]*. Հայրապետաց սրբոց, Երանելւոյն սրբոյն Գրիգորի եւ ամենայն սուրբ եւ ուղղափառ եպիսկոպոսաց եւ քահանայից եւ բոլոր ուխտի Եկեղեցւոյ յիշատակ եղիցի:

*[Ժողովուրդն]*. Յիշեա, Տէր, եւ ողորմեա:

*[Սարկաւազն]*. Եղիցի յիշատակ արանց եւ կանանց՝ հաւատով ի Քրիստոս ննջեցելոցն:

15. *[Քահանայն]*. Յիշեա, Տէր, եւ ողորմեա եւ օրհնեա զսուրբ Սիոն, զկաթողիկէ առաքելական Եկեղեցի Քո, զոր փրկեցեր պատուական արեամբ Միածնի Քոյ եւ ազատեցեր, եւ տուր սմա զանչափ զՔո զխաղաղութիւնդ:

Յիշեա, Տէր, եւ ողորմեա եւ օրհնեա զամենայն ուղղափառ եպիսկոպոսունս, որք ուղիղ գնացիւք համառօտեն զբանն ճշմարտութեան:

Եւ եւս առաւել զվարդապետն մեր եւ զվերակացու եւ զտեսուչ ոգւոց մերոց (զայս անուն եպիսկոպոս) եւ շնորհեա մեզ, Տէր, ընդ երկայն աւուրս:

Յիշեա, Տէր, եւ ողորմեա եւ օրհնեա զմեզ եւ զառաջի կացեալ Քո ժողովուրդս եւ զպատարագիս մատուցօղս, եւ պարգևեա իւրաքանչիւրոցն զպիտոյսն եւ զօգտակարսն:

Յիշեա, Տէր, եւ ողորմեա եւ օրհնեա զպտղաբերիչս Եկեղեցւոյ Քում սրբոյ եւ զայնոսիկ, որք յիշեն զաղքատս ողորմածութեամբ, եւ հատո զպարտս հայցմանց նոցա ըստ ընդաբոյս առատութեանդ Քո հարիւրապատիկ աստ եւ ի հանդերձելումդ:

Յիշեա, Տէր, եւ ողորմեա եւ օրհնեա զհոգիս հանգուցելոցն:

Յիշեա, Տէր, եւ զայնոսիկ, որք յանձնեցին մեզ զինքեանս ի յաղօթել, եւ կառավարեա զկամս հայցմանց նոցա եւ զմերս ընդ ուղղորդն եւ որ լին է փրկութեամբ: Եւ վարձատրեա բոլորեցունց զանանց եւ զերանելի բարութիւնսն, զտեալ զխորհուրդս մեր՝ տաճարացո յընդունակութիւն մարմնոյ եւ արեան Միածնիդ Քոյ՝ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի, ընդ որում Քեզ՝ Հօր ամենակալիդ, հանդերձ կենդանարար եւ ազատիչ Սուրբ Հոգւովդ,

վայել են փառք, իշխանություն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:

*[Ժողովուրդն]*. Ամէն:

16. *[Սարկաւազն]*. Քեզ՝ Հօր ամենակալին, գոհութիւն եւ փառաբանութիւն մատուցանեմք վասն սուրբ, անմահ, աստուածային Պատարագիս, որ ի վերայ սրբոյ Սեղանոյս: Ջսա մեզ ի փրկութիւն եւ ի կենդանութիւն պարգեւեա: Սովաւ շնորհեա զսէր, զհաստատութիւն եւ զըղծալի զխաղաղութիւն Եկեղեցւոյ Քում սրբոյ եւ ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց, եպիսկոպոսապետին մերոյ եւ քահանայիս, որ զՊատարագս մատուցանէ:

Վասն որոյ, Տէր, զմատուցողս անմոռաց գթութեամբդ Քո յիշեա:

Յիշեա, Տէր, զհոգիս հանգուցելոցն ի Քեզ յուսացելոց: Քո, Տէր, զօրութեամբ եւ անմահ Պատարագաւս կեցո եւ ողորմեա՛ մեզ:

17. *[Քահանայն]*. Աստուած ճշմարտութեան եւ Հայր ողորմութեան, գոհանամք զՔէն, որ ի վեր քան զերանելի նահապետացն՝ զմեր պարտաւորելոցս առաւել մեծարեցեր զբնութիւն. քանզի նոցա Աստուած կոչեցար, իսկ մեզ Հայր հաճեցար անուանիլ: Եւ այժմ զայսպիսի զառ ի Քէն զնորոզ եւ զպատուական անուանադրութեան շնորհս՝ պայծառացեալ օր ըստ օրէ ծաղկեցո յԵկեղեցւոջ Քում եւ տուր մեզ համարձակածայն բարբառով բանալ զբերանս մեր, կարդալ առ Քեզ, Հայր երկնաւոր, եւ ասել.

18. Հայր մեր, որ յերկինս...

*[Քահանայն]*. Տէ՛ր տերանց, Աստուած աստուծոց, Հայր երկնաւոր, մի՛ տար զմեզ ի փորձութիւն եւ մի՛ ի դատապարտութիւն, այլ փրկեա՛ ի չարէ, ապրեցո՛ ի փորձութենէ. զի Քո է զօրութիւն, տէրութիւն եւ արքայութիւն, եւ Քեզ վայել են փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:

*[ԽՈՆԱՐՀՄԱՆ ԱՂՕԹՔ]*

19. *[Քահանայն]*. Որ աղբիւրդ ես կենաց եւ փրկութեան եւ բղխումն ողորմութեան, ողորմեա՛ ժողովրդեանս, որ խոնարհեալ երկիր պագանէ Աստուածութեանդ Քո, եւ պահպանեա գոսսա ամբողջս: Տպաւորեա յոգւոջ սոցա զծեւ մարմնոյ ցուցակի՝ առ ի ժառանգութիւն եւ ի վիճակ հանդերձելոց բարեացն՝ Քրիստոսի Յիսուսի Տերամբ մերով, ընդ Որում Քեզ՝ Հոգւոյդ Սրբոյ եւ Հօր ամենակալի, վայել են փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

20. *[Սարկաւագն. Պոստիսումէ]:*

*[Քահանայն]*. Սրբութիւնք սրբոց վայելեն:

Հայր սուրբ, Որդի սուրբ, Հոգի սուրբ:

*[ՆԱԽՀԱՂՈՐԴԱԿԱՆ ԱՂՕԹՔ]*

21. *[Քահանայն]*. Հայր սուրբ, որ կոչեցեր զմեզ յանուն Սիածնի Որդւոյ Քո քրիստոնեայս եւ շնորհեցեր մեզ մկրտութիւն հոգեւոր անազանան ի թողութիւն մեղաց, արա եւ այժմ արժանի ընդունել զհաղորդութիւնս զայս ի մեղաց թողութիւն եւ յամենայնի անդադար փառաւորել զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգիդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:

22. *[Քահանայն]*. Ի սուրբ պատուական մարմնոյ եւ յարենէ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ բաշխի ի միջի մերում: Սա է կեանք, յոյս յարութեան եւ քաւութիւն եւ թողութիւն մեղաց մերոց:

*[Ժողովուրդն]*. Ամէն:

23. *[Քահանայն]*. Սաղմոս ասացէք Աստուծոյ մերում, սաղմոս ասացէք բարերար եւ երկնաւոր Թագաւորին, որ նստի ի վերայ քերոբէից: Սաղմոս ասացէք եւ զփառս տուք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:

24. *[Սարկաւագն]*. Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերոյ, դպիրք, ձայնիւ քաղցրութեամբ. զի Նմա վայել են սաղմոսք եւ երգք հոգեւորք:

Եւ եւս որք հաւատով ընկալալիք ի սուրբ եւ յանմահ եւ յանպական եւ յաստուածային Խորհրդոյս, զՏեառնէ գոհացարո՛ւք:  
*[Ժողովուրդն].* Գոհանամք զՔէն, Տէ՛ր:

*[ՅԵՏՀԱՂՈՐԴԱԿԱՆ ԱՂՕԹՔ]*

25. *[Քահանայն].* Գոհանամք զՔէն, Քրիստոս Փրկիչ մեր, որ զայսպիսի ճաշակումն բարութեան շնորհեցեր մեզ ի փրկութիւն կենդանութեան: Սովիմբ պահեա զմեզ սրբապէսս եւ անարատս եւ բանակեալ շուրջ զմեօք Քոյով աստուածային խնամօքդ՝ հովուեա զմեզ յանդաստանի կամաց Քոց սրբոց եւ բարեսիրաց, որովք ամրացեալք յամենայն բանսարկուին ընդդիմութեանց՝ Քունդ եւեթ արժանի եղիցուք լսել ձայնի եւ Քեզ միայն՝ քաջայաղթ եւ ճշմարիտ Հովուիդ հետեւել եւ առ ի Քէն ընդունել զպատրաստեալ տեղի յարքայութեան Քում, Աստուած մեր եւ Տէր մեր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոս, Որում վայել են փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս:

Խաղաղութիւն ընդ ամենեսեան:

26. Անքնին, անհաս, երրեակ ինքնութեանդ, հաստիչ, ընդունօղ եւ անբաժանելի միասնական Սուրբ Երրորդութեանդ վայել են փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս:

vV

ԽՈՍՐՈՎ ԱՆՁԵՎԱՑԻ

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

*Գրաբարից թարգմանությունը՝*  
Գևորգ արղ. Սարոյանի,  
Մկրտիչ արղ. Պռոշյանի

*Բնագրի հետ համեմատությունն ու  
խմբագրությունը՝*  
Ս. Ստամբոլցյանի  
*Խմբագիր՝* Գայանե Անտոնյան

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ  
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆ  
Ս. ԷԶՄԻԱԾԻՆ 2001

*Շապիկին՝*  
*դրվագ Արևիկ Մկրտչյանի «Ճանապարհ դեպի երկինք» նկարից*

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ